

4173

Սպարտակ
Հռոմեական գլադիատոր-
ների առաջնորդ
Պատմական վեպ
Բագու 1896

1884

891.71

U-17

57

970

U P S U

2003

5122

Հրատարակողին Բ. Պ. Ա.

891.71-34
U-87

Սահմանափակ

Ս Պ Ա Ր Տ Ա Կ

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԳԼԱԴԻԱՏՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

1002
6042

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ.

Ռուս. քարգ.

Սիմ. Հովուեան:

3005

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՐԻ“
1896



1267

Дозволено цензурою 24 марта 1896 г. Тифлисъ.

ՅԱՌԱԶԱԲԱՆ.



Այս պատմությունը, որ առաջարկում եմ ընթերցողներին, հնարովի չէ, այլ իսկական եղելություն, որ թեև շատ փաղուց է պատահել, բայց մինչև այսօր էլ պահպանել է ամենաբուռն հետաքրքրություն:

Դեպքը պատահել է Իսախանյան, 73 թ. Քրիստոսի Ծննդից առաջ: Հոռոմ փառաբանականները եւ հարուստ եւ ամբողջ աշխարհում: Ծնորհիւ յաճախակի եւ յաջող պատերազմների, հոռոմայեցիները նուաճեցին այն ժամանակ համարեա՝ բոլոր յայտնի երկիրները, եւ, ժամանակի սովորությունների համեմատ, դարձրին նրանց քնակիչներին ստրուկներ:

Ստրուկները պիտի մշակեին հողակալան դաշտերը, պարսպեին արհեստներով եւ կատարեին ուրիշ ծանր աշխատանքներ:

Խեղճ ձորերը բոլորովին անպաշտպան էին, որովհետեւ այն օրեկները, որ ստեղծել էին հարուստները, չափազանց սաժանելի եւ խիստ էին դեպի նրանց: Ամեն մի հոռոմայեցի կարող էր պատժել եւ մինչեւ անգամ սպանել ստրուկին, ըստ իր անձնական շահմարադատության: Բացի սրանից, սրկությունը, հոռոմայեցիներին աշխատելու անհրաժեշտությունից ազատելով, սովորեցրեց նրանց դատարկ եւ կոպիս զուարճությունների, որոնցից ամենաառաջինը ստրուկների կոխն էր:

Թշուառները մահում եւ կեանքի կոխ պիտի մղեին իրար դեմ:

Այս արիւնացի սեպարանները կատարում էին բաց երկնքի տակ, մեծ կոճերով: Այս տեսակի ցիրկի մեջ տեղը զննում էր առաջով ծածկուած մի տարածություն, որ «հրապարակ» էր կոչում:

Կոռուղները, որոնք իրանց մահով պիտի զուարճացնեին ձանձրացած հարուստներին, կոչում էին «գաղիասօր»¹⁾:

¹⁾ Գաղիասօր — սրով կոռուղ, սուսերամարտիկ:

Վիրաւորուած եւ վայր ընկած գրադիւսօրը աղերասկան հա-
յեացք եր ձգուլ ղեպի ժողովուրդը, եւ, նայած ինչ նշան եր տալիս
նա, խնայուլ կաւ սպանուլ եիկն տեղնուտեղը:

Հոռեայեցիները սասիկ սիրուլ եիկն այս տեսակ տեսարան-
ները, ուր արիւնը վագուլ եր գետի նման: Այս պատճառով իբրեւ
գրադիւսօր ընտրուլ եիկն ամենագորեղ եւ քաջ ստրուկների, որոնց
ստանձին ուսումնասրաններուլ կոռեղ եւ գեւեհին շաւ տիրապետեղ
եիկն սովորցնուլ:

Բոլոր այս ճնշումները եւ խստութիւնները կատաղեցրին խեղճ
ստրուկներին եւ նրանք որոշեցին վրեժխնդիր լինեղ տեղի հոռեա-
յեցիներին եւ ազատութիւն ձեռք բերեղ:

Նրանց առաջնորդ կանգնեց Սպարսակ գրադիւսօրը, որ իւր
արիւնքեաւք եւ ճարտարախօսութեաւք որդեց իւր ընկերներին
գեւեհ քարճարցնեղ իրանց նեղիչների դէմ:

Նրանք վճռեցին՝ շաւ ե, որ քաղեկն իրանց արիւնք ազատ-
քեան հաւատ, քան քե գոռոգ հարուսների հաճոյքի:



I.

Քրիստոսի Ծննդից առաջ, 74 թ. Նոյեմբերի օրերից
մէկին, Հռոմի ժողոցներով, ինչպէս տօներին, բազմաթիւ
ժողովուրդ էր առաջ գնուլ: Բոլորեքեան ուղղուլ էին դէ-
պի քաղաքի ծայրը, մեծ ցիրկը: Հռոմի եւ Իտալիայի տէրը,
բախտաւոր Սուլլան, որպէսզի մոռանայ մի րոպէ իւր տան-
ջող, անբուժելի հիւանդութիւնը, որոշեց զուարճանալ եւ
զուարճացնել Հռոմի ժողովրդին գլադիատորների արիւնահեղ
կռուով:

Յիրկը ծայրէ 'ի ծայր լի է զուարճութիւնների անյագ
ծարաւ ժողովրդով. բոլորն սպասուլ են, քայց ո՞ւր է, չի
սկսուլ ներկայացուլ: Երբ որ բոլոր բարձրաստիճան եւ
հարուստ հռոմայեցիները բռնեցին իրանց տեղերը, կարգա-
դրիչը հրաման տուեց սկսելու:

Հարիւր ուժեղ գլադիատոր հրապարակ դուրս եկան:
Նրանք հանգիստ կերպով զրոյց էին անուլ իրար հետ, չը-
նայած, որ իսկոյն պիտի կռուէին իբրեւ ռիսերիմ թշնամիներ
եւ թափէին արիւնները 'ի հաճոյս անողորմ հանգիսականների:
Ահա բոլոր գլադիատորները, կռուելու հերթին սպասելով,
դասաւորուեցին ընդարձակ հրապարակուլ: Նրանցից երկուսը
ցիրկի մէջ տեղը դուրս եկան. հանգիսականների հայեացք-
ները կենդրոնացան վրաները: Այս երկու գլադիատորը պիտի
սկսէին ներկայացուլ: Նրանք իրարից քսան քայլ հեռու
կանգնեցին: Նրանցից ամեն մէկը մտածուլ էր, թէ ի՞նչպէս
աւելի լաւ յարձակուի հակառակորդի վրայ. ամեն մէկը լաւ

գիտէր, որ յաղթուածը պիտի սպանուի անպատճառ: Մի քանի ճարպիկ ոստիւններ և ահա յանկարծ իրար մօտ հասան. մահացու, կատաղի կռիւն սկսուեց:

Ամբոխը զուարճութեամբ նայում էր գլադիատորների կռուին և իւր աղաղակներով բորբոքում նրանց կատաղութիւնը:

«Աւելի լաւ, աւելի լաւ դրան... Սպանիր այդ լիմար փալասին, այդ վախկոտին» գոռում էր բազմախուռն ամբոխը՝ չարութեամբ մտիկ տալով թուլացող կռուողին:

Հռոմայեցիների աղաղակներից սիրտ առած՝ գլադիատորներից մէկն աւելի ուժգին յարձակուեց հակառակորդի վրայ, որ, ուժից ընկած, վահանով ծածկուեց. նա միայն աշխատում էր խոյս տալ ոստիւն եռասայր գաւազանի¹⁾ հարուածներից: Արդէն խեղճի վահանը փշուր փշուր եղաւ. թշնամու եռասայրը խրուեց նրա ձեռքի մէջ. արիւնը հրապարակով առուակի պէս գուրս վազեց: Բայց համարեա՞հ էնց այն վայրկեանին, սաստիկ յուսահատութեան մէջ, թուլացողը վերաւորուած ձախ ձեռքով բռնեց հակառակորդի եռասայրը, իսկ աջով՝ նրա կրծքի մէջ խրեց սուրը: Սա կամենում էր մի քանի քայլ անել, սակայն շուտով վայր ընկաւ, նախ ծնկների՝ ապա ուժասպառ՝ փռուեց գետնի վրայ ու հրապարակը ներկեց արիւնով: Յաղթուածը հալեացքով խնդրում էր հանդիսականներին՝ կեանքն իրան շնորհել: Բայց հռոմայեցիները երևի կամենում էին դարձեալ զուարճանալ գոթախտ ստրուկի հոգեւարքի ցնցումներով և մահուան դատապարտեցին նրան: Յաղթողը կամենում էր սպանել դատապարտեալին. բայց նա վերջին ուժերը հաւաքեց, սուրը խլեց նրա ձեռքից, ինքը ցցեց իւր սրտի մէջ, և սարսափելի, գերմարդկային ձայնով աղաղակեց. «Անիճեալ լինիք, գազաններ, նահատակողներ...»: Շունչը կտրած՝ վայր ընկաւ մէջքի վրայ և իսկոյն ևեթ հոգին փչեց:

¹⁾ Եռասայր—երեք ատամ կամ սլաք ունեցող զէնք էր, որ գործադրում էին այսպիսի մրցուիւնների ժամանակ. շատ նման էր եղանին:

II.

Ամբոխն ուրախանում էր անմտաբար և հազարաւոր ձայներ ցրելը լցնում աղմկալից աղաղակներով: Հրապարակի վրայ երևացին ցիրկի սպասաւորները, որ ստրուկի գիակը վեր առնեն: Տանելուց առաջ շիկացած երկաթով ստուգեցին, որ մեռած է: Հանդիսականներն այժմ հրապարակի վրայ քիչ էին ուշք դարձնում և տաք տաք քննադատում էին նոր վերջացած կռիւը: Արեան լճակներով ծածկուած տեղը մի քանի պարկ մաքուր աւազ շաղ տուին: Հրապարակը պատրաստ էր նոր կռուի համար: Հանդիսականների առաջ գուրս եկան 30 զոյգ գլադիատորներ: Երկու կուսակցութեան բաժանուած՝ նրանք շարուեցին իրար դէմ: Խօսակցութիւններ, աղաղակ և ծիծաղ հանդիսականների մէջ վերջացան: Կռիւն սկսուեց և դէպի իրան գրաւեց ժողովրդի ուշադրութիւնը:

Առաջին ընդհարումը զարհուրելի էր: Սրերի և վահանների շառաչիւնը տարածուեց խորին լռութեան մէջ: Մերթ բաժանուելով, մերթ միանալով կռուում էին գլադիատորները կատաղաբար: Ուժգին հարուածներից փշրում էին վահաններն ու սրերը: Բոլոր գլադիատորները ուժեղ, ճարպիկ, քաջ էին: Հանդիսականները հասկացան, որ պատերազմն ամենասարսափելին պիտի լինի: Կռիւր դեռ նոր էր սկսուել, իսկ արիւնը հոսում էր հրապարակով: Գլադիատորները անշնչացած, իրար յետևից ընկնում էին ընկերների ոտի տակ:

Դժուար է երևակայել, թէ հանդիսականներն ինչպէս շունչերն իրանց քաշած և հետաքրքրութեամբ էին հետեւում արիւնահեղ կոտորածի ընթացքին: Փոքր առ փոքր, երբ որ գլադիատորների շարքերն սկսեցին նկատելի կերպով նօսրանալ, աւելի և աւելի յաճախ հնչեցին գովասանական բացականչութիւնները: Մի ժամից յետոյ կռիւը մօտենում էր իւր վերջին: Յիսուս կատարեւապէս մեռած և կիսամեռ գլադիատոր այս ու այն կողմը վայր թափուած, ողորդում էին հրապարակը արիւնով և չարութեամբ մռնչելով՝ ծըռ-

մուռում էին հոգևարքի ցնցումների մէջ: Առանձնապէս վնաս քաշեցին թրակիացի գլադիատորները: Նրանցից երեք հոգի էր մնացել, մինչդեռ նրանց հակառակորդ սամնիտները եօթը հոգով շրջապատել և նեղն էին գցել ամեն կողմից: Թրակիացիներն ընդդիմանում էին յուսահատական քաջութեամբ: Մանաւանդ ուշադրութեան արժանի էր մէջները մի գլադիատոր, Սպարտակ անունով: Նրա երեսուն տարին նոր էր լրացել: Երկար շեկ մագերը և թանձր միջուքը շրջանակում էին նրա գեղեցիկ, առնական երեսը: Առանձնապէս արտայայտիչ էին նրա մեծ մեծ, կապոյտ աչքերը, որ կեանքով, զգացմունքով և կրակով լի էին: Հանդարտ ժամանակ նրանց մէջ բարութիւն էր փայլում, բայց սաստիկ փոխում էին, երբ բորբոքում էր նա զայրոյթով: Այն ժամանակ աչքերը շանթեր էին արձակում, դէմքն ահռելի կերպարանք ստանում: Այսպէս էր նա ցերկում կռուելու միջոցին: Սպարտակի գլադիատոր դառնալու օրից մի քանի տարի էր անցել միայն: Առաջ իշխան էր Թրակիայում¹⁾ և քաջաբար կռուեց հռոմայեցիների դէմ, երբ վերջիններս յարձակուել էին նրա հայրենիքի վրայ: Սպարտակը գերի ընկաւ, բայց իւր քաջութեան և ուժի շնորհիւ, հռոմէական զինուոր համարուեց: Պատերազմում էր նրանց զրօշակի տակ, և իւր գերազանց ծառայութեան համար փոքրիկ զօրախմբի գլխաւոր նշանակուեց: Բայց երբ որ հռոմայեցիները նորից պատերազմ սկսեցին իւր հայրենիքի դէմ՝ Սպարտակը փախաւ զօրքի միջից և իւր ազգի կողմն անցաւ: Այստեղ վերստին վերաւորուեց և թշնամիների ձեռքն ընկաւ: Մահուան պատժի փոխարէն, ինչպէս այդ պահանջում էն Հռոմի օրէնքները, իբրև առանձին ողորմութիւն, գլադիատորութեան դատապարտեցին նրան և ծախեցին ցերկ պահողի վրայ: Նա շրջեց իւր տիրոջ հետ Իտալիայի համարեալ բոլոր քաղաքները և մասնակցեց աւելի քան հարիւր գլադիատորական պատերազմների, բայց ոչ մի

¹⁾ Թրակիա հնում կոչւում էր այն երկիրը, որ գտնւում էր Բալքանեան թերակղզու վրայ:

տեղ մի աչքի ընկնող վէրք չստացաւ: Ինչքան էլ ուժեղ և քաջ էին լինում միւս գլադիատորները, բայց Սպարտակն այնքան զօրեղ և ճարպիկ էր նրանցից, որ միշտ յաղթող էր դուրս գալիս կռուից և հեռու սփռում իւր հռչակը Իտալիայի բոլոր ցիւրկերում:

Այն ինչ կռիւր շարունակւում էր:—«Խփեցէք, մօրթեցէք այդ երեք բարբարոսին», գոչում էին հազարաւոր ձայներ: Սրան 'ի պատասխան պակաս ձայներ չէին լսում, որոնք սիրտ էին տալիս թրակիացիներին: Վերջիններս այժմ միայն յուսով էին խաբւում: Նրանք իրանց փրկութիւնը Սպարտակի ուժից և ճարպիկութիւնից էին սպասում, որ իւր գէնքը անվնաս էր պահպանել և հէնց այն ըոպէին իւր եօթը հակառակորդից մէկին էլ գետին կործանել:

Այս հարուածն ահռելի աղմուկ բարձրացրեց ցիւրկում և շատերը գոռում էին. «Համարձակ կաց Սպարտակ: Ապրիս Սպարտակ, կեցցէ Սպարտակը»: Երկու թրակիացին, որ անվահեր ընկերին օգնում էին յուսահատ կռուի մէջ, սաստիկ վիրաւորուել էին: Հարուածները կամաց կամաց և թույլ կերպով էին խփում, որովհետև ուժասպառ էին եղել:

—«Պաշտպանեցէք մէջքս»—գոչեց Սպարտակը հնչուն ձայնով, միւսնոյն ժամանակ, կայծակի արագութեամբ շարունակեց սուրը պտտացնել, որով ստիպուած էր միաժամանակ 'ի չիք դարձել իւր ոսոխների բոլոր հարուածները: «Պաշտպանեցէք մէջքս... Դարձեալ մի ըոպէ և մենք կըլադթենք»:

Նրա ձայնն ընդհատւում էր, շունչը կտրւում, գունատ երեսով հոսում էին քրտնքի խոշոր կաթիլներ. փայլուն աչքերում երևում յաղթութեան ծարաւ, զայրոյթ և յուսահատական կատաղութիւն: Միւս գլադիատորը, որ վէրք էր ստացել փորի մէջ, շուտով վայր ընկաւ Սպարտակի մօտ. արիւնով ներկեց հրապարակը և շաղ տուեց աղիքներն ամեն կողմ: Անէծք կարգաց բարձրաձայն և վերջին շունչն արձակեց: Բայց այն ժամանակ թրակիացիներից մէկը, որ կտնդնած էր Սպարտակի թիկունքում, նոյնպէս ընկաւ՝ գանգը

կէս եղած: Ծափահարութիւններ, խրախուսական աղաղակներ թափուում էին ամեն կողմից: Հասարակութեան աչքերը մեխուել էին դէպի հրապարակ՝ հետեւելով կռուողների ամեն մի շարժումին: Միւս սամնիտն էլ ընկաւ, բայց և Սպարտակի միակ ընկերը, մի քանի հարուած ստացած, նոյնպէս ընկաւ, առանց մի ձայն հանելու: Բոլորեքեան սարսուռացին: Խռովալից դժգոհութիւն բարձրացաւ հանդիսականների խաւերում, բայց շուտով տիրապետեց խորին լուռութիւն, այնպէս որ կռուողների արագ արագ շուռնչ քաշելը լսուում էր պարզապէս: Սպարտակն այս երկար ժամուկիսուայ կռուի ընթացքում միայն երեք թեթեւ վերք ստացաւ, աւելի շուտ ճանկուած տեղեր, և այս բանում պարտական էր իւր անօրինակ ճարպիկութեան: Թէև սամնիտներն էլ աւելի կամ պակաս վիրաւորուել էին ծանր կերպով, սակայն Սպարտակի համար վտանգաւոր էին լուրջ կերպով: Ինչքան զօրեղ, ինչքան էլ քաջ էր Սպարտակը, բայց վերջին ընկերի մահից յետոյ իրան կորած էր համարում: Բայց յանկարծ աչքերը փայլեցին. փառաւոր միտք լղացաւ իւր գլխում՝ խորամանկութիւն գործ դնել:

Նա սկսեց փախչել: Թշնամիները հալածում էին նրան: Դեռ յիսուն քայլ չգնացած՝ Սպարտակը յանկարծ շուռ եկաւ, ամենամօտիկ թշնամու վրայ ընկաւ և իւր կարծ սուրը խրեց նրա կրծքի մէջ: Վիրաւորուածն օրօրուեց, տարածեց ձեռքերը, կարծէք նեցուկ էր փնտռում, և վայր ընկաւ: Սպարտակն այնտեղ և եթ միւս հակառակորդի վրայ յարձակուեց, վահանով ի չիք դարձրեց նրա սրի հարուածը և գետին գլորեց նրան էլ:

Ամբոխի մէջ զարմացման ձայներ հնչեցին: Այժմ համարեա բոլոր հասարակութիւնը Սպարտակի կողմն էր: Հէնց նոր էր ընկել մնացած չորս սամնիտներից երկրորդը, որ մօտեցաւ երրորդը, որի ամբողջ մարմինը ծածկուած էր վերքերով: Հարուածից խլացած՝ թշուառ օրօրուեց, հրապարակի վրայ ընկաւ այն միջոցին, երբ օգնութեան հասաւ իւր վերջին ընկերը, շատ արեւն գնալուց բոլորովին ուժասպառ եղած:

Սպարտակը վրան յարձակուեց. բայց որովհետև չէր կամենում վիրաւորել, երկու հարուածով սուրը կոտրեց, բռնեց նրան իւր երկու հզօր բազուկներով, գետին տապալեց և շշրնջաց ականջին. «Մի վախենալ, Կրիստոս, յոյս ունիմ որ կաւորդ եմ քեզ փրկել»: Այս ասելով թեթեւ կերպով չոքեց երկու հակառակորդի կրծքին և սպասեց ժողովրդի որոշման:

Միահամուռ, անվերջ ծափահարութիւնները թնդացին ցիրկում. համարեա բոլոր ներկայ եղողները աջ ձեռքի մատները բարձրացրին ի նշան այն բանի, որ յաղթուածների կեանքը շնորհուած է: Մինչդեռ հարիւրաւոր ձայներ գոռում էին. «Ազատութիւն քաջասիրտ Սպարտակին»: Այս խօսքերը լսելիս՝ Սպարտակը վրդովմունքից սաստիկ գունատ ուեց և աչքերը փայլեցին: Նա ձեռքը սրտի վրայ դրեց, որ զսպի այն ահեղ բաբախումը, որ ծագել էր ազատութեան վրայ յոյս ունենալուց:

—Ազատութիւն, ազատութիւն, կրկնում էին հազարաւոր ձայներ:

—«Ազատութիւն» խեղդուած ձայնով շշնջաց գլադիատօրը, — ազատութիւն: Օ՛, աստուածներ, երանի երազ չլինի այս ամենը... Եւ արտասուքը դուրս բղխեց աչքերից:

«Նա փախաւ մեր զօրքից», աղաղակեց ժողովրդից մէկը. «հարկաւոր չէ ազատութիւն շնորհել փախստականին»:

«Ո՛չ, ո՛չ, նա փախստական է», նրա ձայնին միացան շատերը:

Թրակիացու երեսը կծկուեց: Նա շուռ եկաւ այն կողմը, որտեղից լսում էին մեղադրական խօսքերը և ամբողջ մարմնով սարսուռաց: Այն ինչ հազարաւոր ձայներ կրկնում էին. «ազատութիւն, ազատութիւն, ազատութիւն Սպարտակին»: Անկարելի է նկարագրել այն զգացմունքները, որոնցով համակուած էր խեղճ գլադիատօրը: Այն սարսափելի տանջանքները, որ կրել էր այս բոպէներին, բաւական պարզ արտացոլում էին նրա գունատ երեսին: Եւ այս մարդը, որ ժամուկէս կռուել էր մահուան դէմ՝ առանց մի բոպէ որևէ թուլութիւն զգալու, որ ստիպուած էր մարտնչել չորս

Հակառակորդի հետ և յոյս ունէր փրկութեան. այս մարդը, որ նոր էր սպանել իւր՝ թշուառութեամբ 12 կամ 15 ընկերներին՝ այս մարդն այժմ զգաց, որ ծնկները ծալուած են: Յիրկի մէջտեղն ուշաթափուելուց վախեցած՝ Սպարտակը սպասաւորներից մէկի ուսին յենուեց, որ հրապարակէին դուրս եկել զիակաները տանելու: «Ազատութիւն, ազատութիւն» շարունակում էր գոռալ ամբոխը:

«Այո՛, նա կատարելապէս արժանի է ազատութեան» ասաց Սուլլայի բարեկամներից մէկը նրա ականջում: «Է՛հ ի՛նչ» ասաց Սուլլան. «թող այդպէս լինի»: Եւ նա թեթեւ կերպով գլխով արաւ: Եւ այսպիսով, վերջապէս Սպարտակն ազատութիւն ստացաւ ամբոխի մոլեգին ծափահարութիւնների մէջ: «Դու ազատ ես», ասաց նրան սպասաւորը.

«Սուլլան կեանքդ քեզ շնորհեց»:

Սպարտակը պատասխան չտուեց ու չշարժուեց: Թւում էր, թէ այս ամէնը երազումն է տեսնում: Վերջապէս ուշքի եկաւ, ամբողջ մարմնով շիտակուեց. գլուխ տըուեց Սուլլային, գլուխ տուեց ժողովրդին եւ հրապարակից հեռացաւ ծափահարութիւնների հեղեղի տակ:

III.

Հռոմի ամենահեռաւոր, նեղ ու կեղտոտ փողոցներից մէկի վրայ գտնւում էր մի պանդոկ՝ գիշեր ցերեկ բացարած՝ «Թաղման Վեներա» անունով:

Պանդոկն այս մռայլ անուան ստացել էր հաւանօրէն նրա համար, որ դռներից անմիջապէս այն կողմը, մի կողմից գերեզմանատուն կար ստրուկների համար, ուր թաղում էին նրանց, ինչպէս պատահէր՝ շատերին մի գերեզմանում, իսկ միւս կողմից մի ընդարձակ դաշտ էր ձգւում, ուր գցում էին յանցաւորների և գլադիատորների զիակաները՝ ի կերակուր ագռաւների ու գայլերի:

Ներս մտէք նեղ դռնից և մի քանի աստիճան իջէք՝ կը տեսնէք ծխից սևացած մի մեծ սենեակ: Պատերի երկայնու-

թեամբ ձգուած են կեղտոտ նստարաններ, նոյնպէս կեղտոտ սեղաններով:

Այն օրուայ կէս գիշերին, երբ որ կատարւում էր գլադիատորների կռիւը, պանդոկը ծայր է ի ծայր լիքն էր ժողովրդով: Շփոթ ու աղմուկ էր տիրապետում ոչ միայն պանդոկում, այլ և այն կեղտոտ փողոցում, ուր գտնւում էր նա:

Սեղաններից մէկի շուրջը նստած էին մօտ տասը գլադիատոր, որոնց մէջ էր նոյնպէս Սպարտակը: Չէ կարելի նկարագրել ընկերների ուրախութիւնը, որոնք իմացան, թէ նա ազատութիւն է ստացել: Յիրկում եղողները հպարտութեամբ ցոյց էին տալիս բախտաւոր Սպարտակին, որի մասին խօսում էր ամբողջ Հռոմը: Ներկայ եղողները հիւրասիրում էին իրանց սիրելիին զինով և ընթրիքով: Բոլորն էլ ուրախութիւն էին անում. միմեայն Սպարտակը տխուր էր և մտախոհ, որովհետեւ սաստիկ յոգնել էր այն ուրախութիւններից և յուզմունքներից, որ զգացել էր այդ օրուայ ընթացքում:

— Երգւում եմ բոլոր աստուածների անունով, քեզ չեմ հասկանում, Սպարտակ, — ասաց նրա բարեկամներից մէկը. «դու այսօր բոլորովին չես խմում և այնպէս տխուր ես, որ վրադ նայելիս, կարելի է կարծել, որ նստած ես ոչ թէ բարեկամներիդ խնջութեամբ, որոնք տօնում են քո ազատութիւնը, այլ հարազատ մօրդ հոգեհացին»:

— Մօրս.... աղաղակեց Սպարտակը, վեր թռչելով այս խօսքի վրայ ամբողջովին: Նա լիջեց իւր հայրենիքը, մօրը, կնոջը, քրոջը.... Ծանր մտածմունքներից գլուխն աւելի խոնարհեց, դէմքն առաւել մռայլեց: Այն ժամանակ նրա բարեկամը տեղից վեր կացաւ և բացականչեց.

— Այս բաժակը խմում եմ ազատութեան համար.... «Ազատութեան համար», ձայնակցեցին գժբախտ գլադիատորները և բաժակները բարձրացրին:

— Երջանիկ ես, Սպարտակ, որ ազատուցիր կենդանութեանդ ժամանակ, ասաց ցածր ձայնով վուշի նման խարտեաշ մագերով մի երիտասարդ գլադիատոր. իսկ մեզ ստրկութիւնից

միայն գերեզմանը կազատի»:

Առաջին անգամ ազատութիւն աղաղակելիս Սպարտակի ղեմքը վայրկենապէս պայծառացաւ: Կանգնեց տեղից ամբողջապէս, բարձրացրեց բաժակը և գոչեց նոյնպէս բարձր հրնչուն ձանով:

— Ազատութեան համար.... Ապա երգեց իւր սիրած գլադիատորական երգը.

Բազէի նման նա ազատ ծնուեց.

Հզօր էր, ինչպէս առիւծ կատաղած.

Բայց երկար չապրեց ազատութեան մէջ.

Մռայլ ամպերից որոտը թնդաց:

* *

Թշնամիներից ճնշուած, կաշկանդուած,
Տխուր ձայնի տակ ծանր շղթայից,
Հեռանում է նա օտար աշխարհներ
Ազգականներից, կին ու զաւակից:

* *

Ոչ թշնամու դէմ, բացարձակ կռուում,
Ոչ պատուի համար իւր հայրենիքի,
Ընկնում է, մեռնում խեղճ գլադիատորն
Պ զուարճութիւն հարուստ մեծերի:

«Մեր երգը», ուրախացած բացականչեցին ստրուկներից շատերը:

Բայց այն րոպէին սենեակ մտաւ մի երիտասարդ աղջիկ, որին ներկայ եղողները բարևեցին իբրև ծանօթի: Թրակուհին, թրակուհին, հնչեցին ձայները: Այս խօսքի վրայ Սպարտակը ցնցուեց ամբողջ մարմնով: Նա դարձեալ լիջեց իւր հայրենիքը՝ Թրակիան, իրանց սարերը, տունը, իւր խեղճ ընտանիքը: Որքան դառը լիշողութիւններ, որքան խորտակուած յոյսեր:

— Դալուստդ բճրի, գալուստդ բարի, չքնաղ թրակուհի,

այն ինչ գողում էին մի քանի ձայներ:— Առ խմիր, չէ որ սրա համար էլ եկել ես,— ասաց մի ինչ որ գերեզմանափոր և բաժակը լցրեց: Բոլորեքեան շրջապատերին աղջկան: Արդարև նա շատ լաւն էր: Քսան տարեկանից աւել չէր լինիլ: Կանոնաւոր, վարդագոյն դէմքի վրայ պսպղում էին մի զոյգ կապուտակ աչքեր. երկար, շիկահեր հիւսերը փռուած էին թիկունքի վրայ և վայելչակազմ իրանի չորս կողմը: Հագին ունէր կապոյտ շրջագգեստ, որ զարդարուած էր արծաթեայ ժապաւեններով, իսկ ձեռքերին փայլում էին արծաթեայ ապարանջաններ: Գլխին կապած նուրբ շղարշը ծածկում էր մինչև ճակատի կէսը: Ամբողջ արտաքինից կարելի էր եզրակացնել, որ նա հռոմուհի չէ, այլ ստրկուհի:

Այդ պանդոկն սկսեց նա յաճախել մի քանի ամիս սրանից առաջ: Նա փախչում էր իւր տիրոջից, որ խեղճին այնքան էր ծեծում, որ արիւնաշաշախ էր լինում: Այստեղ նրա հետ գուրգուրանքով վարուեցին. գինի տուին, և այդ օրից, ամեն երկու, երեք օրը մի անգամ անպատճառ մտնում էր «Թաղման Վեներան», ուր ազատ շուռն էր առնում այն. զոյստային կեանքից, որին ենթարկում էր իւր լիրբ տէրը: Այստեղ կարողացաւ իւր սիրալիր դէմքով և համեստ վարմունքով կակղացնել մինչև անգամ ամենակոպիտ յաճախորդների սրտերը, որոնք վարւում էին հետը հօր նման քնքշաբար:

Պանդոկում բոլոր գտնուողներին զննելիս՝ թրակուհին յանկարծ գաջի պէս սպիտակեց և վազեց դէպի Սպարտակը:

— Սպարտակ, սիրելի Սպարտակ, այս դու ես արդեօք, բացականչեց նա:

Գլադիատորը նայեց աղջկանը և յուզմունքից ինքն իրան մոռացած՝ աղաղակեց.

— Մերցն, քոյր իմ, կարելի բան է արդեօք: Եղբայր ու քոյր իրար վզով փաթաթուեցին ընդհանուր լուութեան և զարմացման մէջ: Յնծութիւնից ուշքն իրան չկարողացաւ հաւաքել Սպարտակը: Յանկարծ օրօրուեց և ձեռքերը քրոջ ուսին դրած՝ սկսեց զննել նրան ոտքից մինչև գլուխը: Մե-

ուելի պէս գունատուեց և դողդոջուն ձայնով շշնջաց. «բայց դու... դարձել ես... Օ՛, աստուածներ» հառաչեց Սպարտակը գլխից բռնելով:

— Ես ստրկուհի եմ, խօսեց թշուառ աղջիկը հեկեկաձայն. ստրկուհի մի անգամի... Հասկանո՞ւմ ես: Գանահարութիւնները, տանջանքը, շիկացրած երկաթն ստիպեցին ինձ մոռանալ ամօթս... Օ՛, Սպարտակ, Սպարտակ...:

— Թշուառ, ասաց գլադիատորն արտասուքը աչքերին: Սպաքնքշութեամբ կրծքին սեղմեց քրոջը և համբույրներով երեսը ծածկեց: Բայց մի րոպէից յետոյ արտասուախառն աչքերը վերև բարձրացրեց, թափ տուեց բռունցքը և գոչեց. «Եւ Իւպիտերը ¹⁾ գոյութիւն ունի: Եւ նա շանթեր ունի»:

— Ո՛չ, աստուածները սարքովի բաներ են, կամ նրանք նոյնքան անարդար են, որքան մարդիկ: Միրցայի հեկեկում էր եղբօր հզօր կրծքի վրայ:

— Օ՛, թող անիծեալ լինի, — գոչեց Սպարտակը հառաչանքով. — թող յաւիտեանս յաւիտենից անիծեալ լինի երկրիս վրայ առաջին մարդի լիշատակը, որովհետեւ նրանից սերուեց մարդոց երկու սերունդ. ազատներ և ստրուկներ:

IV

Երկու ամիս անցաւ արդէն այն օրից, երբ եղբայր ու քոյր հանդիպեցին պանդուկում, և բոլոր այս ժամանակ ըՍպարտակը մտածում էր, թէ ինչպէս խլի թշուառ Միրցային այն մարդի ճանկերից, որ նրան այնպիսի անարգանքի էր ենթարկել:

Մի հարուստ հռոմայեցի լսեց նրա զժբախտութեան մասին և մի քանի հարիւր արծաթ փոխ առաջարկեց: ԸՍպարտակը շնորհակալութեամբ ընդունեց այս փողերը ու խօսք տուեց իսկոյն յետ դարձնել, երբ որ կարողանայ: Նա

¹⁾ Իւպիտերը հին հռոմայեցիների կարծիքով որոտման և կայծակի (շանթ) աստուածն էր: Որովհետեւ դէպքը Քրիստոսի ծննդից առաջ էր կատարւում, ուստի և ամենագարգացած ազգին անգամ հեթանոս էին, այսինքն հաւատում էին շատ աստուածների:

անմիջապէս ուղևորուեց Միրցայի տիրոջ մօտ և յայտնեց, թէ մտադիր է քրոջը փողով յետ գնել: Բայց յափշտակիչը երբ տեսաւ, որ քրոջը խայտառակ կեանքից ազատելու համար սիրտը տրաքում է անհամբերութիւնից, աղջկայ համար պահանջեց 5000 արծաթ ահագին գումար, ասելով, որ ջահիլ է, գեղեցիկ, համեստ. բոլորին էլ շատ դուր է գալիս. և հետևաբար իրան մեծ եկամուտ կը տալ:

Թէ թնչ զգաց Սպարտակն այս խօսքերը լսելիս, հեշտ է երևակայել, քան պատմել: Նա սկսեց այն անգգամին խնդրել, աղաչել, պաղատել, որ խղճայ իրան: Ոտքերն ընկաւ, բայց հրէշը շատ լաւ գիտէր, որ բան չի դուրս գալ, որ օրէնքն իւր կողմն է, ուստի և չհամաձայնուեց:

Այն ժամանակ վեր թռաւ Սպարտակը, բռնեց նրա կոկորդից և անկաւկած կրիտղգէր, եթէ չլիշէր, որ եթէ տիրոջը խեղդի էլ, համ ինքը կը կորչի, համ ոչ մի դէպքում քրոջը չի կարող ազատել:

Նա հանդարտուեց, բաց թողեց տիրոջը ձեռքերից և կախուղ ձայնով հարցրեց. «Այդպէս, ուրեմն, պահանջում ես... հինգհազար արծաթ»:


— Ես բան չեմ ուզում... կորիր... հեռացիր այստեղից... ապա թէ ոչ կը կանչեմ բոլոր ստրուկներիս:

— Ներիր ինձ... տաքացայ... աղքատութիւնը, եղբայրական սէրը... լսիր, սակարկութիւն անենք, գուցէ և համաձայնութիւն կայացնենք:

Փոքր առ փոքր խեղճ թրակիացուն յաջողուեց հանգստացնել խստասիրտ տիրոջը և համաձայնութիւն կայացնել:

Սպարտակն առաջարկեց այն րոպէին 500 արծաթ այն պայմանով, որ նա Միրցային առանձին շինութեան մէջ բնակեցնի և դադարի նրա մարմինը վաճառելուց: Եթէ Սպարտակը չի վճարել մնացած 4500 արծաթը, ապա տէրը դարձեալ իւր բոլոր իրաւունքների մէջ կը մտնի:

Ոսկէ դահեկանները պսպղում էին շրացուցիչ կերպով. պայմանները շատ նպաստաւոր էին Միրցայի տիրոջ համար և նա համաձայնուեց:



Սպարտակն իսկոյն այս տանից քրոջը վեր առաւ, նրա հետ ապաստանեց տիրոջ բնակարանին մօտիկ մի սենեակում և սկսեց մտածել, թէ ո՞րտեղ գտնի պակաս փողերը: Ի հարկէ խեղճին չէր յաջողուիլ այսպիսի գումար գտնել, բայց այստեղ էլ օգնութեան հասաւ նրան նոյն այն բարի մարդը, որ 500 արծաթ էր տուել: Վերջինս յորդորեց Վալերիա անունով իւր մի ծանօթ, շատ բարի ու զարգացած տիկնոջ, որ մօտն աղախին վեր առնի թշուառ աղջկան: Մի քանի օրից յետոյ հռոմուհին, արդարեւ, գնեց նրան 4500 արծաթով:

Թէեւ այսպիսի վախճանը լիապէս գոհացում չտուեց Սպարտակին, որ կամենում էր քրոջը կատարելապէս ազատուած տեսնել՝ բայց լաւ էր հասկանում, որ առ այժմ աւելին չէր կարող սպասել. այդ օրուանից քոյրն ինչքան չլինի ազատուած է,—և հաւանօրէն յաւետեանս—այն զարհուրելի կեանքից, որին ենթարկուած էր նա իւր կաւատ ¹⁾ տիրոջ մօտ:

Միրցայի կողմից ապահով՝ Սպարտակն ամբողջապէս անձնատուր եղաւ մէկ ինչ որ խորհրդաւոր և չափազանց կարեւոր գործի: Անդադար ընկերների մօտ էր լինում և երկարօրէն խօսակցում նրանց հետ:

Ամեն օր կարելի էր նրան տեսնել Հռոմի զանազան գլադիատորական ուսումնարաններում, պանդոկներում, իջևաններում և բոլոր տեղերում, ուր սովորաբար հաւաքւում էին ստրուկներն ու գլադիատորները: Արդեօք ինչ էր մտածում: Ի՞նչ բանի էր պատրաստում: Այս կի՛մանանք մեր պատմութեան յաջորդ գլուխներում:

V

Այն ինչ Միրցան ընակութիւն հաստատեց իւր տիրուհու ասանք: Միրցան լաւն էր, կրթուած, յունարէն խօսել զիտէր և զարդ—զարդարանքի նշանակութիւնն իմանում էր:

¹⁾ Կաւատ—միջնորդ՝ անբարոյական յարաբերութիւնների:

Ուստի Վալերիայի սիրելին դարձաւ և միւս սպասաւորներից բոլորովին առանձին էր ապրում:

Յարմար ժամանակ ընտրեց Սպարտակը և քրոջն այցելութեան գնաց: Եղբօրը տեսաւ թէ չէ, Միրցան մօտ վագեց և համբուրեց նրան քնքշաբար: Յետոյ իւր նոր կեանքի մասին սկսեց պատմել, և մեծ գովասանքով էր վերաբերւում Վալերիայի մասին, որ դէպի իրան շատ բարի էր:

—«Բայց գիտե՞ս, Սպարտակ», ասաց նա ի միջի ալոց. «Վալերիան շատ յաճախ հարցուփորձ է անում քո մասին, թէ ո՞րտեղ ես ապրում, ապրելու միջոցներ ո՞ւնիս թէ չէ. և քեզ մի տեղ է առաջարկում: Չէ՞ որ նրա ամուսինը գլադիատորների ուսումնարան ունի Կապուլայում. է, կարելի է կը համաձայնուես այնտեղ սուսերամարտութեան ուսուցիչ մտնել:

—Բայց եթէ ես համաձայնում ուսուցիչ լինել գլադիատորների ուսումնարանում, արդեօք Սուլլան, իւր ամուսինը, կը պահանջի արդեօք, որ ես նորից ստրուկ դառնամ, կամ թո՞ղ կըտայ, որ ազատ մնամ,—հարցրեց Սպարտակը վրդովմունքով:

—Տիրուհիս ինձ ոչինչ չէ ասել դրա մասին, պատասխանեց Միրցան, բայց այնքան բարի է, որ հաւանօրէն բանն այնպէս կըսարքի, որ ազատ մնաս:—Սակա՛ն սպասիր ինձ այստեղ—ասաց նա,—կերթամ կը հարցնեմ տիկնոջ: Եւ թուչնակի թեթեւութեամբ դուրս թռաւ սենեակից:

Սպարտակը մենակ մնաց: Անթիւ մտածմունքներ խռնւում էին նրա գլխում: «Մի՞ թէ կըյաջողուի ինձ ստանալ այն պաշտօնը, որի մասին արդէն շատ վաղուց մտածում եմ, բայց որից չէի էլ համարձակւում յոյս ունենալ», միտք էր անում նա: «Այնտեղ է, այնտեղ, թշուառութեամբ տասը հազար ընկերների մէջ իմ տեղը. այնտեղ կամաց կամաց, առանձին առանձին կը խօսեմ բոլորի հետ և ամեն մէկի հոգու մէջ այնպիսի հաւատ կը ներշնչեմ, որ եռում է իմ կրթութեամբ: Այն տեղից նշանակած օրը, տուած նշանի համեմատ, առաջ կըխաղայ տասը հազար ստրուկից բաղկացած զօրքը,

որոնք իրանց շղթաները ջախջախելով, անյաղթելի սրեր կրկռեն նրանցից Եւ, վերջապէս, վերջապէս....

Սպարտակն այն աստիճան զբաղուած էր մտքերով, որ մինչեւ անգամ քրոջ գալը չնկատեց. որ պատասխանը բերեց, թէ այն բանն արդէն յաջողուեց, և թէ Սպարտակը շատ շուտով Վապուա պիտի ուղևորուի և սկսի գլադիատորներին հետ զբաղմունքները:

Մեկնելու օրը մօտենում էր: Մեզ ծանօթ «Թաղման Վենետիկ» պանդոկում արդէն քսան գլադիատոր էր հաւաքուել: Սեղանի վրայ բանի պակասութիւն չկար.— ոչ խորոված խոզի մսի, ոչ եղալի կերակուրների և ոչ լաւ գինու: Առաջին տեղը նստել էր Օքնոման գլադիատորը, ազգով գերմանացի, Սպարտակի բարեկամը, որ իւր ազնուութեամբ և արիութեամբ իւր բոլոր ընկերների սէրը և յարգանքն էր վաստակել:

Գլադիատորները նստած էին պանդոկի մի փոքրիկ սենեակում և կարող էին ազատ զրոյց անել իրար հետ, որովհետեւ այդ ժամանակ հարեան սենեակում շատ քիչ յաճախորդ կար. մէկ էլ սրանք եկել էին, որ մի մի բաժակ գինի խմեն և գնան իրանց բանին: Գլադիատորները սուսուփուս հաց էին ուտում և միայն փոքր լուսթիւնից յետոյ նրանցից մէկը հարցրեց.

— Իսկ «արեգակը»¹⁾ դեռ էլի չէ երևում:

— Դեռ էլի ծածկուած է ամպերով, պատասխանեց Օքնոմանը

— Զարմանալի է, բացականչեց մէկը:

— Անհասկանալի է, փնթփնթաց մի ուրիշը:

— Իսկ մըջիւնները²⁾, հարցրեց երրորդը, Օքնոմանին դառնալով:

— Բազմանում և աշխատում են՝ ամառուան³⁾ սպասելով:

¹⁾ Դաւադիրների պայմանական լեզուի մէջ արեգակ նշանակում էր գլադիատորների դաշնակցութեան առաջին պարագլուխը, այսինքն Սպարտակը:

²⁾ Մըջիւններ նշան. դաւադիրներ:

³⁾ Ամառ—սպասամբութիւն, ոտքի կանգնել:

— Թիակդ¹⁾ ձեռքդ առ, ասաց գլադիատորներից մէկը, երբ նկատեց, որ պանդոկի աղախինը ներս է մտնում:

Աղախինի դուրս գնալուց յետոյ՝ գլադիատորներից մէկն ասաց. «Ախր հիմա մենք մենակ ենք և կարող ենք մարդու նման խօսել, առանց այս անիծեալ հնարովի խօսքերի մէջ մտնելու, որոնց ոչ մի կերպ չէ կարելի մտքումը պահել»:

— Ինչպէս թէ. մեր կուսակիցների թիւն աճում է: Ուժերըն աւելանում են: Ե՞րբ ուրեմն կապստամբենք և ցոյց կրտանք այս հպարտ հռոմայեցիներին, որ մենք էլ կարող ենք սուր գործ ածել նրանցից ոչ պակաս, ապա թէ ոչ մինչև անգամ աւելի:

— Հարկաւոր չէ՝ չափից դուրս տաքանալ և շտապել, սիրելի բարեկամ, ժպիտը բերանին ասաց մի երիտասարդ գլադիատոր, Կրիստոս անունով:— Մեր ընկերութիւնը մեծանում է, մեր սուրբ գործի կողմնակիցների թիւը աճում է. և հէնց այսօր երեկոյեան մեզ մօտ ժողով կըլինի, ուր հարկւր փորձուած և յուսալի գլադիատորներ կերգուեն հաւատարիմ մնալ դաշնակցութեան:

— Ինչ որ ինձ է վերաբերում, ասաց դաւադիրներից մէկը, — չեմ իմանում ինչպէս պիտի համբերեմ մինչև ապստամբութեան սկիզբը. ոչ թէ նրա համար, որ այնպէս սաստիկ հաւատում եմ նրա յաջողութեան, այլ կամենում եմ ուժս փորձել հռոմայեցիների ուժի հետ և վրէժխնդիր լինել այնքան հազարաւոր ստրուկների մահուան համար, որոնց սպանել են այն աւազակները:

— Եթէ ես չհաւատայի ապստամբութեան յաջողութեանը, չէի միանալ ճնշուածների դաշնակցութեան հետ, ասաց ուրիշը:

— Ես միացայ, որովհետեւ միւսնոյն է պիտի մեռնեմ ցիրկումը: Ուրեմն աւելի լաւ է մեռնեմ պատերազմի դաշտում մեր ստրուկ եղբայրների ազատութեան համար....

Այս միջոցին սենեակի մտաւ Սպարտակը և մեծ ուրախութեամբ հաղորդեց ընկերներին, որ մօտ օրերը գնալու

¹⁾ Թիակդ ձեռքդ առ—մարդ է գալիս, զգուշացիր:

է Կապուլա, Սուլլայի դպրոցը:

—Ախր այնտեղ 10 հազար գլադիատոր կայ, բացականչեց նա:—Ահա որտեղ կարող ենք մեր կուսակիցների թիւն աւելցնել: Մի տարուց յետոյ բոլոր այն 10 հազար հոգին, ձերնշուաճների դաշնակցութեան՝ անդամ կը դառնան, և այն ժամանակ... այն ժամանակ, ընկերներ, մենք յաղթական գնացքով կանցնենք ամբողջ Իտալիան, կը շախմատենք և կազատենք մեր հայրենիքը հռոմայեցիների տաժանելի լծից»:

Ապա հրաժեշտ տուեց Սպարտակն իւր ընկերներին ու դուրս գնաց. իսկ նրա յետեւից հերթով դուրս գնացին և միւս գլադիատորները:

VI.

Արդէն երկու ամիս անց էր կացել այն օրից, ինչ որ Սպարտակն ուսուցիչ էր Կապուլայում: Բոլոր այն ժամանակ իւր դաւակիցների հետ ոչ մի անգամ չէր տեսնուել: Ուստի որոշեց Հռոմ գնալ, որ իրանց ընդհանուր գործի վիճակի մասին տեղեկութիւններ հաղորդի «ձնշուաճների դաշնակցութեան Բարձրագոյն ժողովին»: Հռոմ գնաց, տեսնուեց քրոջ հետ, իսկ գարնան գալուն պէս ուղևորուեց դէպի Սըրբազան անտառը, որ քաղաքից հեռու չէր, և ուր պիտի հաւաքուէին նաև մնացած գլադիատորները: Սպարտակն առաջինն եկաւ, և որպէսզի սպասած լինի միւսներին, սկսեց յետ ու առաջ գնալ, լի կրծքով ներշնչելով անտառի խնկաբոյր անուշահոտութիւնը:

Չանցաւ և մի քանի րոպէ, որ Օքնոմանն երևաց ծառուղու ծայրին: Սպարտակը ելաւ նրա դէմ և շուտով իրար գիրկն ընկան:

Նորեկի հետ երկու անգամ համբուրուելուց յետոյ ըՍպարտակը հարցրեց.

—Հը՛, թի՛նչ նոր բան կայ, Օքնոման:

— Նոր բան: Ե՛հ, բոլորը հին է, ասաց գլադիատորը կրքաբային ախորժեղի ձայնով:—Մենք բոլորս էլ ժանգոտել

ենք բան չլինելուց, կողքի վրայ պառկել ենք, նեղուժ ենք ու ծափ տալիս: Մի խօսքով, սիրելի Սպարտակ, սպասում ենք, բայց վա՛յ այն սպասելուն, որ վերջապէս, ժամանակը վրայ հասնի, տրորենք ձեռներս և բաներս տեսնենք այս անգգամների հետ:

—Դէ լռի՛ր, խելագար, աղաղակեց Սպարտակը.—երգումեմ ձեր գերմանական բոլոր աստուածների անունով, որ կամենում ես կորստի մատնել մեր ամբողջ գործը:

—Ոչ թէ կորստի մատնել, այլ յաղթութիւն եմ կամենում շնորհել նրան:

—Այս դէպքում հարկաւոր է խօսեմ և զգոյշ բան բըռնել, որովհետեւ միայն այս ձևով կը հասնենք մեր նպատակին:

—Կը հասնենք, էլ երբ: Ա՛յ թէ ինչ եմ կամենում իմանալ, որովհետեւ ստատիկ ցաւալի կը լինէր ինձ համար, եթէ այս ամենն իմ մահից յետոյ պատահէր:

—Սպասիր, թող մեր գործը հասունանայ:

—Լսիր, գալլասոկոն¹⁾ թաց դարմանի մէջ էլ է դուրս գալիս, հասունանում. իսկ այնպիսի պտուղները, որպիսին մեր ապստամբութիւնն է, գիտե՞ս ինչպէս են հասունանում: Հաւատա՛մ, այս դէպքում առաջին պայմանը համարձակութիւնն է, մինչև անգամ յանդգնութիւնը:

—Հարկաւոր է միայն սկսել, իսկ յետոյ ամեն բան իւր կարգին կ'երթայ:

—Օ՛, ինչ անեմ ես քեզ, ինչպէս խելքի բերեմ: Լսիր, քանի մարդ յաջողեցրիր այս վերջին երկու ամսուայ ընթացքում մեր դաշնակցութեան կողմը քաշել:

—Մի քանի հարիւր:

—Մթթէ կարծում ես այդ հերիք է և այսպիսի ուժերով կարելի է գործ սկսել:

—Կապուլայում, ուր դու ուսուցիչ ես, բոլոր տասը հազար հոգին յետեւից կը գան. իսկ երբ որ միանգամ ապրատամբութիւնն սկսուեց, ամեն կողմից ստրուկներ կը թափ-

¹⁾ Գալլասոկոն—գալլասոնկ:

ուին մեր բանակը:

— Կարծումես: Բայց ախր նրանք բանի զօրութիւնը չեն իմանում. ի՞նչ մարդիկ ենք, ի՞նչ ենք կամենում, ի՞նչ հնարներով ենք կամենում իրագործել մեր ձեռնարկութիւնը:

Երկու բարեկամն էլ քանի ընդհանրացան: Օքնոմանը Սպարտակին նայում էր ոչ միայն քաղցրութեամբ, այլ կարելի է ասել քնքշութեամբ, եթէ այս արտայայտութիւնները խորթ չթուային այն կոպիտ մարդի մասին: Յանկարծ նա բացականչեց.

— Իսկ զիտես, Սպարտակ, որ քրոջ համար բնակութիւն հաստատելուց յետոյ, դու չափազանց հանգիստ և զուարթ ես:

Բայց իսկոյն խօսքը կտրեց, որովհետեւ Սպարտակը մեռելի նման գունատուեց, ձեռքը խփեց ճակատին և աղաղակեց. «Օ՛, աստուածներ... բայց ի՞նչ կրկին նրա վիճակը»:

Թշուառ գլադիատորն ազատութեան սիրոյ և մօտալուտ ու շուտափոյթ յաղթութեան յուսոյ ազդեցութեան տակ՝ մի ընդհանուր մոռացել էր համայն աշխարհը. յանկարծ լիջեց իւր քրոջը, և այս բանը լիջելով՝ գլուխը խոնարհուեց կրծքի վրայ, իսկ սիրտը կծկուեց էր անտանելի տրամուլթիւնից:

Նա գիտէր, որ անյաջող գէպքում, քոյրը կըմնայ հռոմայեցիների ձեռքին, որոնք իրանց չարութիւնը նրա վրայ կը թափեն:

Գլադիատորի հոգու մէջ կատարուեց էր սոսկալի ներքին կռիւ, որքան կարելի էր եզրակացնել նրա բարձրացող կրծքից և գէմքի ջղաձիգ շարժումներից:

Օքնոմանը մտախոհ և տխուր, ձեռքերը խաչած, նայում էր բարեկամին: Վերջապես գերմանացին խանգարեց լուրթիւնը և ցածր ձայնով հարցրեց.

— Այդպէս, ուրեմն, դու մեզ թողնում ես, Սպարտակ:

— Ո՛չ, ո՛չ, երբէք, — բացականչեց թրակիացին զողողալով և Օքնոմանի վրայ յառեց կապոյտ աչքերը, որոնց մէջ արտասուք էր փայլում: — Ո՛չ, աւելի շուտ քրոջս կը թողնեմ... բոլորը, բոլորը, բայց ոչ ճնշուածների, վիճակից զրկուածների գործը, ստրուկների գործը: Երբէք... երբէք...

Այս խօսքերն ասելուց յետոյ, բռնեց բարեկամի ձեռքից և տարաւ դէպի այն տեղը, ուր վաղուց սպասում էին իրանց դաւակիցները:

Իրար ձեռքերը սեղմեցին գլադիատորները, ամեն կողմից շրջապատեցին իրանց սիրելիին և սպասեցին նրա խօսելուն:

Սպարտակն ուղղուեց ամբողջապէս և խօսեց.

— Եղբայրներ: Իտալիայում մեր գրութիւնն ամենիդ լաւ յայտնի է: Մեզ բոլորիս ցերեկերում մահ է սպասում, ապա՛ ուրեմն, աւելի լաւ է մեռնենք մեր սեպհական ազատութեան համար, քան թէ մեր թշնամիների հաճութեան: Մարդկային կերպարանք ունեցող այս կատաղի գազանները արիւնի են ծարաւ. դէհ թող իրանք կտրատեն մեր երակները սրերով. և այն ժամանակ մենք նրանց ցոյց կը տանք, որ իրանք էլ մեզ նման արիւն ունին, որ իրանք էլ այնպէս մահկանացու են, ինչպէս մենք:

Հաւանութեան բարձրաձայն աղմուկը պատասխան եղաւ այս խօսքերին և երկար ժամանակ չէր գաղարում գիշերային խաղաղութեան մէջ:

— Կարողենք, արդեօք, վերջապէս, յոյս ունենալ, որ չորս տարուայ յամառ, վտանգաւոր, գաղտնի աշխատանքից յետոյ հասել է վրէժխնդրութեան ժամը, հարցրեց դաւադիրներից մէկը:

— Այո՛, պատասխանեց Սպարտակը: «Իմ Արտորիքս ընկերը վաղը Հռաւեննա է գնում, կ'ասի Պրանիկին, որ կազմ ու պատրաստ պահի իւր 5200 գլադիատորներին, որոնք մեր զօրքի առաջին լէգիոնը կը կազմեն: Երկրորդ լէգիոնը կը կազմեն Հռոմի մեր գաշնակցութեան 5700 անդամները: Նրանց կըղեկավարես, դու, Կրիստոս: Երրորդին և չորրորդին կըղեկավարենք ես և Օքնոմանը. նրանք կը կազմուին Կապուալի 10 հազար գլադիատորներից:

— Քսան հազար գլադիատոր դաշտում, վայրենի ուրախութեամբ բացականչեց Օքնոմանը: — Քսան հազար... շատ լաւ շատ լաւ... Երգուեմ եմ դժոխքի աստուածների անունով,

կը տեսնենք, թէ թնչ տեսակ արիւն ունին այն ամբարտաւան հռոմայեցիները....

—Այժմ, երբ ամէն բանի մասին խօսեցինք, ասաց Սպարտակը, երգուեցնում եմ ձեզ սուրբ գործի անունով, որի համար հաւաքուել ենք, զգոյշ կացէք և խոհեմ: Մի վստահանաք մէկ վայրկեանում տապալել այն գործը, որ չորս տարուայ ամենասարսափելի ջանքեր էնստել: Ամեն մի անժամանակեայ բռնկումը աններելի յանցանք կը համարուի: Ես ու Օքնոմանն առաջինը կը պարզենք ապստամբութեան դրօշակը և կ'աշխատենք անսպասելի յարձակմամբ շշկլացնել հռոմայեցիներին. այն ժամանակ դուք էլ հաւաքուեցէք Հռոմ ու Հռաւեննիա և մեզ մօտ եկէք: Մինչև Կապուլան օտքի չկանգնի, կեղծիք և խաղաղութիւն պիտի թաղաւորի ձեր մէջ առաջուայ պէս:

Այս ճառից յետոյ եռանդուն խօսակցութիւն սկսուեց, որին մասնակցեցին համարեալ բոլոր ներկայ եղողները:

Հրաժեշտ տալով գլադիատորներն սկսեցին երկու երկու դուրս գալ անտառից զանազան ուղղութեամբ, որպէս զի անցորդների ուշադրութիւնն իրանց վրայ չդարձնեն:

VII.

Հէնց այն գիշերը, երբ ժողով էր կայանում Սրբազան անտառում, գլադիատորների գլխին մի փորձանք եկաւ, որ քիչ մնաց կորստի մատնէր նրանց ամբողջ գործը: Ինչքան էլ, ըստ երևութին, զաւաղիրներն զգոյշ էին, այնուամենայնիւ Կապուլայում պատրաստուող ապստամբութեան լուրը հիւպատոսին հասաւ, և նա՝ իսկոյն և եթ Մերակոյտին¹⁾ հաղորդեց նրա մասին: Մերակոյտը որոշեց Կապուլայի կառավարչի մօտ սուրհանդակ ուղարկել, հրաման տալով, որ գլադիատորների ուսումնարանը անյապաղ շրջապատեն զօրքերով, վերցնեն այնտեղից բոլոր զէնքերը և ստրուկներից ոչ ոքի

դուրս չթողնեն փողոցը: Կարելի է երևակայել Սպարտակի դրութիւնը, որ, երբ դարձաւ Սրբազան անտառից, հիւպատոսի ստրուկից իմացաւ, թէ սուրհանդակները մի ժամ առաջ արդէն մեկնեցին Հռոմից: Միակ բանը, ինչ որ մնում էր անելու, այն էր, որ աշխատէին Կապուլա գետը Մերակոյտի սուրհանդակներից առաջ, նախազգուշացնել ընկերներին և զէնք վերցնել: Մնում էր ամեն մի ընդհանր թանկ գնահատել: Սպարտակն ու Օքնոմանը անմիջապէս որոշեցին ոտքով դուրս գալ քաղաքից, որովհետեւ խճուղով ձիով գնալը վտանգաւոր էր: Մօտակայ գիւղում նրանք առան երկու ձի, ընկան կողմնակի ճանապարհները. իսկ դաշտերի միջով ուղղակի արշաւեցին, ուր ճանապարհը կեռումեռ էր անում և երկարացնում հռոմէական ձիաւորների ուղին: Այս կերպով նրանց յաջողուեց գլխաւոր ճանապարհը դուրս գալ Հռոմի սուրհանդակներից առաջ:

Եւ այժմ, երբ նրանք նպատակին մօտ էին համարում իրանց. երբ մտածում էին, որ մի ժամով առաջ են ընկել Մերակոյտի սուրհանդակներից, ճանապարհին, յանկարծ, Կապուլայից 15 վերստ հեռաւորութեան վրայ, Սպարտակի ձին վայր ընկաւ և ձիաւորին հետը տարաւ: Վայր ընկնելու ժամանակ նրա ձախ ձեռքը դուրս ընկաւ: Չնայած սարսափելի ցաւին, նա չէր ցոյց տալիս, որ սաստիկ տանջում է: Զարհուրելի տանջանքներ էր քաշում այն գիտակցութիւնից, որ, փոխանակ իւր թշնամիներից կէս ժամ առաջ հասնելու ուսումնարան, պիտի նրանցից շատ ուշ գայ: Ոտքի կանգնեց և դուրս ընկած ձեռքի մասին առանց որևէ հոգս քաշելու, Սպարտակը ծանր կերպով ակն քաշեց և աղաղակեց մօռլ, անյուսալի ձայնով.

«Ամեն բան կորած է....»

Այն ինչ Օքնոմանը ձիուց վայր թռաւ, արագ արագ մօտեցաւ Սպարտակին, ձեռքը շօշափեց ու ասաց.

—Ի՞նչպէս, ի՞նչպէս, ի՞նչես ասում: Միթէ կարողէ ամեն բան կորած լինել, քանի որ ձեռքերդ շղթաներով չեն կապկապած և ազատ կարող ես սուր գործածել:

¹⁾ Մերակոյտ—ծերերից կազմուած բարձրագոյն ժողով Հռոմում:

Սպարտակը մի քիչ ժամանակ լուռ կանգնեց, յետոյ նա-
յեց Օքնոմանի ձիուն և ասաց.

— Տասնուհինգ վերստ.... Մեզ մնում է գնալ միայն տա-
նուհինգ վերստ, և,— թող անիծեալ լինին մեզ թշնամի աստ-
ուածները— պիտի հրաժարուինք ժամանակին տեղ հասնե-
լու յոյսից։ Եթէ քո ձին կարողանար երկուսիս էլ տանել
ուրիշ կամ տասը վերստ, ապա մնացածը ոտքով վազ կը տա-
լինք և գուցէ թէ հասնէինք։

Բայց ձիուն ուշադրութեամբ դիտելուց, նրա կատարեալ
անզօրութիւնը և ծանր շունչ քաշելը տեսնելուց յետոյ՝ շու-
տով համոզուեցին, որ երկու վերստ էլ չի կարող տանել.
ուստի որոշեցին թողնել ձին և Կապուա շտապել ոտով։

Դժուար է նկարագրել, թէ թնչպիսի անհասկալիութեամբ
ճանապարհ ընկան այս երկու մարդիկ, յոգնած, չար-
չարուած, մի քանի օր համարեալ թէ ոչինչ չկերած։ Նրանք
գնում էին լուռ, խոժողադէմ, գունատ, դէմքերը փոխուած,
երեսները քրտնքի մէջ կորած, և այնպիսի անհաւատալի
արագութեամբ, որ մի ժամուկիսից աւելի շուտ հասան
քաղաքի դռներին։ Այստեղ ընդհատեալ կանգ առան, որ շունչ
քաշեն և քիչ ուղղուին, որպէսզի դռների մօտ կանգնած
պահապանների ուշադրութիւնն իրանց վրայ չգործեն։
Նրանք վախենում էին, չլինի թէ արդէն պահապաններն
հրաման են ստացել ներս մտնողներին հետեւել և կալանա-
ւորել կասկածելի մարդոց։ Կապուա մտան թէ չէ, Սպար-
տակն ու Օքնոմանը անհոգ կերպարանք առան, և աշ-
խատում էին, ուժերի ներածի չափ, մօտիկ տեղից եկած
երևալ։

Բայց ի՞նչպէս էր նրանց սիրտը բաբախում։ Միայն քրը-
տնքի սառը կաթիլները, որ վազում էին ճակատներից, ցոյց
էին տալիս, թէ ի՞նչպէս անհանգիստ էին և տանջւում էին
այն ընդմէջ։ Սպարտակը որոշեց, ի դէպս, եթէ ներս չթող-
նեն, սուր վերցնի, ճեղքի պահապանների շարքը և վազի
դէպի գլադիատորների դպրոցը։ Ընկերի և իւր ուժի վրայ
վստահ՝ հաւատացած էր, որ կը յաջողուի։ Պահապաններ

կազմող տասներկու ծեր զինուորները չէին կարող դէմ կենալ
նրանց արագ և ուժեղ հարուածների կարկուտին։ Սակայն
այս յուսահատ հնարքը վերջինն էր, որին կը ցանկանար
դիմել թրակիացին. այնպէս որ, որքան մօտենում էր քա-
ղաքի դռներին, նրա սիրտը, որ չէր իմանում թէ վախ ա-
սածդ ի՞նչ բան է, այնպէս ուժգին էր բաբախում, որ ըՍ-
պարտակը երկիւղ էր կրում, չլինի թէ մի երակ պա-
տառուի կրծքի մէջ։

Դռներին մօտեցած՝ տեսան, որ պահնորդներից երկու
սր, փայտէ փոքրիկ նստարանների վրայ փռուտած՝ քնել-
էին. մի ուրիշ երեքը պազած՝ խումար էին խաղում. և, վեր-
ջապէս, երկուսն էլ դուրս էին տալիս իրար հետ, հանաք-
ներ էին անում անցորդների, քաղաքը մտնող և դուրս
եկողների հասցէին։

Երբ որ Սպարտակն ու Օքնոմանը մօտեցան, պահապան-
ներից մէկն ասաց. «Ա՛հ... երգւումեմ Իւպիտերի անունով,
որ այս տոգոյն և գունատ աւազակները, կարծես դժոխքից
նոր դուրս եկած ուրուականներ լինին»։— «Ա՛հ, երանի մի շու-
տով պատառ պատառ անէին ձեզ վայրենի գազանները»,
աղաղակեց միւս պահնորդը, որ տանուլ էր տուել խումարում
և պտտաստում էր նորից բախտը փորձել։

Դլադիատորներն առաջ էին գնում լուռ և անմեղ
դէմքով։ Նրանք արդէն անցկացան դռների առաջին կամարը
և հէնց, այն է, պատրաստուում էին երկրորդի տակից ուղղակի
քաղաք դուրս գալ, մէկ էլ տեսնես նրանց հանդէպ երևաց
երեսուն հոգուց բազկացած մի խումբ զօրք, ոտքից ցգլուիս
սպառազինուած։ Դռների մօտ կանգ առան և զօրքի պետը
հրաման արձակեց. «Ի գէն»։

Զինուորներն արագ արագ դուրս վազեցին դռներից, և
թէպէտ յաջողեցին մի ընդմէջում կարգ կանգնել, այնուա-
մենայնիւ հրամանատարը համոզուեց, որ պահնորդների մէջ
խառնակութիւն է թագաւորում։

Ինչ վերաբերում է Սպարտակին և Օքնոմանին, պետի
հրամանով կալանաւորուած, մի քանի քայլ արին դէպի լետ

և իրար արագ հայեացք փոխանակեցին, որի ժամանակ թրահիացին բռնեց գերմանացու աջ ձեռքը, որ կամենում էր սուր բարձրացնել:

— Այսպէս էք կատարում ձեր պաշտօնը, լիրբ անզգամներ, խիստ կերպով հարցրեց հրամանատարը խորին լռութեան մէջ, որ թագաւորում էր դռների կամարների վրայ: — Այսպէս էք պահպանութիւն անում, դատարկապորտներ: Գլադիատորներն խռովութիւն են սպառնում, անհրաժեշտ է փակել դռները, պահպաններ կանգնացնել և խստութեամբ հետևել, ինչպէս պատերազմական ժամանակ, իսկ սրա փոխարէն խուճարով էք զբաղուած և պորտաբուծութիւն էք անում:

Ապա դէպի Սպարտակն ու Օքնոմանը դարձաւ և հարցրեց նրանց, յօնքերը կիտելով.

— Դուք գլադիատօր էք:

— Գլադիատոր ենք, հաստատ ձայնով պատասխանեց Սպարտակը, իւր ներքին խռովութիւնը հազիւ հազ զսպելով:

— Ի հարկէ գլադիատորների ուսումնարանից, ըստ ինքեան հասկանալի է:

— Դու սխալուում ես, քաջ հրամանատար, առարկեց Սպարտակը, որի աչքերում փայլեց յուսոյ նշույլը, — մենք ծառայում ենք քաղաքի բերդապետի մօտ:

— Դու ինձ ճանաչում ես, հարցրեց հրամանատարը Սպարտակին:

— Ես քեզ շատ անգամ եմ տեսել մեր տիրոջ տանը:

— Արդարեւ, — ասաց հրամանատարը, ուշի ուշով նայեց երկու գլադիատորին, որոնց վիթխարի հասակը հեշտութեամբ կարելի էր նկատել, բայց վրայ հասնող խաւարի մէջ զժուար էր դէմքերը դիտել, — արդարեւ, ինձ թւում է....

— Մենք այն երկու գերմանացին ենք, որ միշտ ծառայում են բերդապետի ամուսնուն:

Սպարտակը, որովհետեւ երկար ժամանակ ապրել էր Կապուալում, ի հարկէ, ամենամանրամասն տեղեկութիւններ ունէր այն ամենի մասին, ինչ որ կատարւում էր քաղաքում,

և շատ լաւ ծանաչում էր երկու վիթխարի հասակաւոր գերմանացի գլադիատորին, որոնք ծառայում էին բերդապետի մօտ:

— Իսկ որ, ասաց հրամանատարը, — դու ճշմարիտ ես ասում, այժմ ճանաչում եմ ձեզ:

Եւ ըուպէական լռութիւնից յետոյ հրամանատարը կրկին հարցրեց. «բայց ռոտեղից էք գալիս այժմ»: Սպարտակը մի ըուպէ լռելուց յետոյ, պատասխանեց. «Մեր տիրոջ ամառանոցից, ուր երէկ թանկագին ապրանքներ բարձած մի սալ ծանապարհ գցեցինք»:

— Լաւ, պատասխանեց հրամանատարը. յետոյ Սպարտակին ու Օքնոմանին դարձաւ և ասաց.

— Եւ դուք ոչինչ չգիտէք այս ապստամբութեան մասին, որ մտադրուել են գլադիատորների դպրոցում:

— Մենք ռոտեղից կարող ենք իմանալ, պատասխանեց Սպարտակը միամիտ մարդի ձայնով, որ չէ կարող չհասկացածի մասին բան խօսել:

— Եթէ նոյն իսկ այս ուսումնարանի անգուսպ և անհնազանդ աշակերտները մտածել են որեւէ յիմարութիւն, նրանք, ի հարկէ, չէին գալ մեզ դրա մասին ասելու, որովհետեւ մեր բախտին նսխանձում են: Այնպէս լաւ ենք ապրում մեր բարի տիրոջ մօտ որ....

Այս ամենը ճշմարտութեան այնքան մօտ էր, և Սպարտակն ասում էր այնպէս անկեղծօրէն, որ հրամանատարը հաւատաց: Այնուամենայնիւ մի ըուպէից յետոյ աւելցրեց.

— Յամենայն դէպս այս երեկոյ մեզ խռովութիւն է սպառնում, թէև, ինչ որ ինձ է վերաբերում, ծիծաղս գալիս է, երբ մտածում սրա մասին: Բայց և այնպէս, ինչ որ լինի.... ապահովութեան համար, հրամայում եմ ձեզ՝ վաղ դնէք սրերերգ.... թէև ձեզ հետ լաւ է վարւում ձեր բարի տէրը և աւելի լաւ, քան թէ հարկաւոր էր այս տեսակ լրբերին: Դէ, տուէք սրերգ.... Ինչքան չլինի գլադիատոր էք, ամեն բանի ընդունակ: — Այս հրամանը տալիս անշրջահայեաց և տաքարիւն Օքնոմանը քիչ մնար ոչնչացնէր Սպարտակի ջանք-

քերը և երկուսին էլ կործանէր:

Գերմանացին կատաղաբար ձեռքը տարաւ դէպի սուրը և կը մերկացնէր, բայց Սպարտակը աջ ձեռքով սուրը խըլեց նրանից և միևնոյն ժամանակ, մեծ ջանքերով և ցաւ զգալով, հանեց իւր սեպհական սուրը պատեանից և երկուսն էլ հրամանատարին յանձնեց յարգանքով:

Միևնոյն ժամանակ, որպէսզի Օքնոմանին արգելի որևէ անխոհեմ քայլ անելուց, նա շտապեց ասելու.

— Լաւ չէ քո կողմից, որ մեզ հաւատ չես ընծայում, և, գուցէ թէ, քո հաւատ չընծայելու համար մեր տէրը շնորհակալ չլինի քեզանից. յամենայն դէպս, ահաւասիկ մեր սրերը և թույլ տուր գնանք մեր բարի տիրոջ տունը:

— Իմ արածների համար, ստոր գլադիատոր, ես հաշիւ կը տամ քո տիրոջ. իսկ այժմ հեռացէք աչքիցս երկուսդ էլ:

Սպարտակը բռնեց Օքնոմանի գայլոյթից դողդողացող աջ ձեռքը և գլուխ տալով հրամանատարին, քաղաք գնաց գերմանացու ուղեկցութեամբ, որքան հնար կար, արագացնելով քայլերը, որպէսզի կասկած չգարժնի: Բացի սրանից առաջ գնալիս, նկատեցին անսովոր շարժում և աղմուկ քաղաքում, և աւելի ևս, քան երբ և իցէ, համոզուեցին, որ իրանց գործը մօտ է կորստի և չնայած բոլոր ջանքերին, չափազանց ուշ կը հասնեն գլադիատորների դպրոցը:

Այնուամենայնիւ, գլխաւոր փողոցից ծռուեցին, վազելով հասան քաղաքի ծայրը, ուր գտնուում էր և գլադիատորների դպրոցը:

VIII.

Գլադիատորների ուսումնարանը գետեղուած էր քաղաքի ամենախուլ մասում: Շրջապատող տնակներից նա անջատուած էր ամուր պարսպով, որ մի քանի տեղ չորս և մինչև անգամ հինգ սաժէն բարձրութիւն ունէր: Պարսպի ներքին մասում շինուած էին տասից աւելի քարէ տներ, որոնք նշանակուած էին գլադիատորների համար: Ամեն մէ-

կում մի դահլիճ կար, ուր գլադիատորները սովորաբար սուսերամարտութեան և մարմնամարզութեան վարժութիւններ էին անում, — սենեակներ՝ բնակութեան համար և պահեստներ՝ զէնքերի: Բայց այս պահեստը փակուած էր երկաթէ սողնակաւոր ամուր կաղնի դռնով և բանալին պահուած դպրոցի կառավարչի մօտ:

Մեր նկարագրած երեկոն համարեա բոլոր գլադիատորները մնացել էին դպրոցի ներսը, որ շատ տարօրինակ և անսովոր բան էր. մի քանիսը սուսերամարտութեան դահլիճներում վարժուած էին սուսերամարտութեան մէջ, նրանց թույլատրած միակ զէնքի՝ փայտէ սրերի վրայ. միևնոյնը, մեծ մեծ խմբերով զուրսն այստեղ, այնտեղ նստոտած, մարմնամարզութեամբ էին պարապում և խորհրդաւոր երգեր երգում, որոնք անհասկանալի էին վերակացուներին. շատերն էլ, վերջապէս, խռնուել էին միջանցքներում ¹⁾ կամ թէ պառկոտած էին իրանց թախտերի վրայ:

Ինչքան էլ աշխատում էին այս թշուառներն անհոգ երևալ, սակայն նրանց դէմքին խորը նայելիս, իսկոյն կ'իմացուէր, որ սաստիկ անհանգստութիւն են զգում և զարհուրելի կերպով վրդովուած՝ ինչ որ լուրջ պատահար աչքի առաջ ունենալու պատճառով:

— Այս ինչպէս է, գլադիատորներն այսօր չեն դուրս գալիս զբօսնելու, հարցրեց մի ծռուտիկ, անձեռն վերակացու հին զինուոր մի ուրիշ զինուորի, որի երեսը ծածկուած էր սպիներով:

— Ո՞վ է իմանում: Երևի, սովորականին հակառակ, կամենում են այս երեկոն ուսումնարանի պատերի մէջ անցկացնել:

— Շատ տխուր կըլինի այս երեկոն նրանց զգուշի սիրուհիների համար, որոնք իզուր տեղը պիտի սպասեն հարևան պանդոկում:

— Երբեքում եմ Իւպիտերի անունով, որ շատ տարօրինակ է այս բանը:

¹⁾ Միջանցք—կորրիդոր

—Այնպէս տարօրինակ է, որ, պարզ ասած, ես մի քիչ անհանգիստ եմ:

—Ի՞նչպէս, մթթէ դու վախենում ես որեւէ խռովութիւնից:

—Ոչ... բայց ճիշտն ասած, ոչ թէ խռովութիւնից, — այս նրանցից չեմ սպասում, — այլ որեւէ անկարգութիւնից... ո՞վ գիտէ:

—Բոլոր աստուածների անունը վկայ, ձեռներիս մէջը քոր է գալիս: Եւ եթէ...:

Բայց այս խօսքի վրայ լռեց զինուորը, ընկերին նշան արաւ, որ նա էլ լռի, որովհետեւ այն ընկերին զպրոցի տեսուչը մօտներն եկաւ:

Նրա մօտենալուն պէս՝ երկու զինուորը գլուխ տուին յարգանքով, իսկ տեսուչը հարցրեց.

—Ձեզանից ոչոք չէ՞ իմանում արդեօք, թէ թնչու են համարեա՞ բոլոր գլադիատորները տանը մնացել այնպիսի ժամանակ, երբ զպրոցը միշտ դատարկ է լինում:

—Ձգիտեմ... խօսեց զինուորներից մէկը:

—Այդ բանը մենք էլ ենք նկատել և քեզանից պակաս չենք զարմացած, պատասխանեց երրորդը:

—Բաս թնչ է պատահել, — յօնքերը շարժելով ու մռայլ, դաժան դէմքով հարցրեց տեսուչը. — կարելի է պատրաստուում են մի որեւէ խաղ խաղալ:

Զինուորներից պատասխան տուող չեղաւ, բայց պատասխանը բերում էր տեսչի ստրուկներից մէկը, գունատ, վախեցած: Սրա հետ գալիս էր նաև բերդապետի կողմից մի սուրհանգակ, որպէսզի նախազգուշացնի այն վտանգից, որ սպառնում էր ո՛չ միայն ուսումնարանին, այլև քաղաքին և կարելի է, ամբողջ Բոսլիային:

Այս լուրն առնելուն պէս՝ զպրոցի տեսուչը սաստիկ շփոթուեց և, կայծակնահարի պէս, կանգնեց անշարժ, առանց մի խօսք ասելու:

Ուշքի գալով, հրամայեց սպառազինել 250 զինուոր և 250 ստրուկ, որոնք զպրոցում պաշտօն ունէին, բայց այն-

պէս, որ գլադիատորներին նկատել չտան այս պատրաստութիւնները: Երբ որ սպառազինուեցին, պրծան, հրաման տուեց շտապել դէպի դռները, որոնցով ուսումնարանը հաղորդակցութիւն ունէր քաղաքի հետ, և սպասել նոր հրամանների: Բացի այս բանից, հէնց որ հաւաքւում էին զինուորները, խմբակների էր բաժանում նրանց և ուղարկում զպրոցի դռներն ու զէնքի պահեստները պաշտպանելու:

Շուտով քաղաքից զօրքեր եկան օգնութեան, որոնց ուղարկել էր բերդապետը, և այսպիսով աւելի զօրեղացրին զէնքի և զպրոցի պաշտպանութիւնը:

Մինչ տեսնում էին այս բոլոր պատրաստութիւնները, գլադիատորների մէջ սկսեց շփոթութիւն տարածուել արագութեամբ: Նրանք խռնւում էին բազմաթիւ խմբերով բակերի մէջ և բարձրաձայն խօսում.

—Զէնքի պահեստները չըջապատել են պահապանները...

—Մենք մատնուած ենք...

—Նրանք ամեն բան գիտեն...

—Մենք կորած ենք...

—Գոնէ այստե՛ղ լինէր Սպարտակը...

—Ոչ նա, ոչ Օքնոմանը չեկան. երևի նրանց հռոմում խաչեցին:

—Վայ մեզ...

—Թող անիծեալ լինին անարգար աստուածները...

—Փակում են դռները...

—Իսկ մենք զէնք չունինք...

—Զէնք... Զէնք...

Շուտով կատաղաբար գոռացող այս տասը հազար ձայնի աղաղակն այնպէս մեծացաւ, որ մի զարհուրելի աղմուկ դարձաւ, ինչպէս փոթորիկներից բռնուած ծովի մունչիւնը: Միայն մի քանիսների յորդորանքով, որոնց Սպարտակը, նախատեսաբար, գլադիատորների խմբերի կառավարիչ էր նշանակել, գլադիատորներն սկսեցին հանգստանալ և գնալ իրանց տեղերը: Շփոթն ու աղմուկը դադարեցին, և զպրոցում կատարեալ կարգ տիրապետեց:

Այս կառավարիչների մի մասը ուղղուեց դէպի սուսերամարտութեան դահլիճը, որպէսզի որոշեն թէ արդեօք ի՞նչ ձեռնարկեն փրկելու այն սուրբ գործը, որին ամենը հանդիսաւոր կերպով երգուել էին ծառայել:

Մեր բոլոր այս նկարագրածը կատարուում էր ճիշտ այն ժամանակ, երբ Սպարտակն ու Օքնոմանը, այնքան դժուարութիւններից ու վտանգներից յետոյ, վերջապէս, մօտեցան ուսումնարանին և կանգ առան, երբ որ ջահերի լոյսի մէջ տեսան հռոմէական զինուորների փայլուն սաղաւարտները:

— Զինուորներ են, ասաց Օքնոմանը, շշնջալով Սպարտակին:

— Այո՛, պատասխանեց Սպարտակը, որի սիրտը կծկուում էր այս բանն իմանալուց յետոյ:

— Նշանակում է շատ ուշ է.... Ուսումնարանը շրջապատուած է.... Մենք ի՞նչ անենք:

— Սպասիր:

Եւ մի քիչ մտածելուց յետոյ՝ ասաց Օքնոմանին.

— Կանգնիր ու լռի՛ր:

Եւ վերին աստիճանի զգուշութեամբ, կամաց, կամաց առաջ գնաց դէպի այն կողմը, որտեղից նոր անց էին կենում զինուորները:

Վեց կամ եօթ քալը արաւ թրակիացին. ապա կանգնեց ու լսողութիւնը լարած՝ սկսեց ականջ դնել: Թոյլ ազդակի վրայ, աջ ձեռքը բռնեց աչքերի վերեւ և երբ ուշադրութեամբ սկսեց չորս կողմը դիտել խաւարի մէջ, մի ընդհանր յետոյ նկատեց զինուորների սև խումբը, որոնք շարժուում էին փողոցի ծայրին:

— Նրանք սկսեցին շրջապատել ուսումնարանը: Այժմ զինուորների խմբակները փողոցի երկու ծայրից իրար դէմ են գնում: Մենք, որ աւելի ծանօթ ենք խառն ի խառն շաւիղներին, նրանցից տասն ընդամենը կը հասնենք պարսպին, որ շրջափակում է ուսումնարանը քաղաքի կողմից: Այստեղ նա չորս սափէն բարձրութիւն ունի: Այնտեղից ներս կը մտնենք ուսումնարան: — Իսկապէս այնպէս էլ պատահեց, ինչպէս Սպարտակը նախատեսել էր: Առանց մի ընդհանր կորցնելու,

Օքնոմանի հետ, մութը փողոցներից արագ արագ անցկացաւ և մօտեցաւ դպրոցի պարսպի հէնց այն տեղին, որի մասին նոր խօսեցին: Օքնոմանը, որի ահագին հասակի հետ չէր կարելի ճարակիութիւն երևակայել, սկսեց վերև մագրել, օգուտ քաղելով այն խորդուբորդութիւններից, որոնք առաջ էին եկել հին պարսպի քարերից: Շուտով նա գագաթը հասաւ ու ձիու պէս վրան հեծաւ: Ապա սկսեց իջնել միւս կողմը, որ աւելի դժուար և վտանգաւոր էր:

Գերմանացին հազիւ էր Սպարտակի տեսութիւնից անյայտացել, երբ վերջինս պարսպից դուրս ցցուած քարի ծախքից բռնեց ու ինքն էլ սկսեց վերև բարձրանալ այս անյարմար սանդուղքով: Նա միտքը բերեց դուրս ընկած ձեռքն այն ժամանակ, երբ որ բանացրեց: Սարսափելի ցաւից աղաղակեց բարձրաձայն. և թշուառը չկարողացաւ դիմանալ ու գետին ընկաւ երեսի վրայ:

— Ի՞նչ պատահեց, Սպարտակ, պարսպի միւս կողմից զսպած շշնջիւնով հարցրեց Օքնոմանը, որ արդէն թուել էր գետնի վրայ:

— Ոչինչ.... պատասխանեց թրակիացին: — Նա կարողացել էր արդէն վեր կենալ. ցաւին ականջ չդրեց ու սկսեց նորից բարձրանալ պարսպով: — Ոչինչ.... դուրս ընկած ձեռքս է:

— Ա՛հ, երգում եմ դժոխքի բոլոր եօթը օձերով, բացականչեց Օքնոմանը, — մենք չմտածեցինք դրա մասին:

— Սպասիր ինձ, ես դարձեալ պարսպի գլուխը կը բարձրանամ և կ'օգնեմ քեզ:

Ասելուն պէս, սկսել էր վերև մագրել, երբ որ լսեց Սպարտակի ձայնը.

— Ոչինչ.... Ոչինչ.... Ասում եմ քեզ, որ բան չկայ.... մի՛ շարժուիլ.... մի ընդհանր յետոյ կը հասնեմ քեզ:

Եւ, իսկապէս, այնտեղ և եթ Օքնոմանը տեսաւ Սպարտակի առնական պատկերը, որ մի քանի ընդհանր այնպիսի արագութեամբ, ինչպէս կ'իջնէր ամեն մի սանդուղքի աստիճաններից, քարից քար իջաւ և, վերջապէս, թռաւ գետնի վրայ ու գերմանացուն մօտեցաւ:

Օքնոմանն շտապեց դէպի նա և կամեցաւ իմանալ թէ ձեռքն ինչպէս է, բայց կանգ առաւ, դէմքի մահու չափ գունատութիւնից և ահուելի կերպով լայնացած բերից շանթահար եղած, որոնք նրան աւելի շուտ ուրուականի նմանութիւն էին տալիս, քան թէ մարդի:

— Սպարտակ, Սպարտակ, գոչեց նա շշնջիւնով և այնպիսի քնքշութեամբ, որ դժուար էր երևակայել նրա մէջ. — Սպարտակ... ձեռքդ շատ է ցաւում... աւելի շատ, քան թէ կարող է տանել մարդս... Սպարտակ, դու ուշաթափում ես ... Նստիր այստեղ...:

Այս խօսքի հետ, Օքնոմանը սիրալիր կերպով սեղմեց նրան իւր ձեռքերի մէջ և աշխատեց նստեցնել, որ թիւնը տայ պատն ՚ի դուրս:

Սպարտակն իսկապէս ուշաթափուել էր: Ուշաթափութիւնն առաջ էր եկել այն զարհուրելի ցաւից, որ զգաց նա հիւանդ ձեռքը բանացնելիս: Մեռելագէմ երեսի վրայ երևացին սառը քրտնքի կաթիլներ: Նրա սարսափելի գունատուած շրթունքները ցնցում էին ջրաձգութեամբ և ժամանակ առ ժամանակ թոյլ հառաչք էր դուրս թռչում ամուր սեղմուած ատամներից: Հազիւ Օքնոմանը նստացրեց նրան պատն ՚ի դուրս, մէկ էլ Սպարտակի գլուխն ընկաւ կրծքի վրայ:

Այնպէս էր երևում, թէ մեռած է:

Յուզուած գերմանացին, որ այժմ մի անձնագոհ հիւանդապահ կնոջ էր նման, կանգնեց մի քանի րոպէ, յուսահատութեամբ բարեկամին էր նայում և չէր իմանում թէ ինչ անի: Բայց յանկարծ, ըստ երևութին, մէկ ինչոր բան վճռեց անել: Ամենամեծ զգուշութեամբ նա առաւ Սպարտակի ձախ ձեռքը, կամաց կամաց բարձրացրեց ու վերարկուի թւքերը յետ քաշելով՝ մերկացրեց, և որովհետեւ ձեռքը սաստիկ ուռել ու լցուել էր, մտածեց որ շատ օգտակար կըլինի այժմ կապելը: Ապա բաց թողեց թրակիացու ձեռքը և սկսեց իւր վերարկուից փալասներ պոկատել:

Բայց այն հարուածը, որ զգաց Սպարտակը ձեռքը գետնին զիպչելիս, նրան սարսափելի ցաւ պատճառեց: Նա հա-

ռաչեց, տեղից շարժուեց, ծանրութեամբ բաց արաւ աչքերը և կամաց կամաց սկսեց ուշքի գալ: Յաւը նրան զգացողութիւնից զրկեց, ցաւն էլ գիտակցութիւն շնորհեց:

Հազիւ ուշքի եկաւ Սպարտակը. և երբ որ միտքը իրան հաւաքեց, արագութեամբ ոտքի ելաւ ու աղաղակեց դառը, հեգնական ձայնով.

— Կեցցես, հերոս... Իւպիտերի անունը վկայ, Սպարտակը մի քաւթառ կին է դարձել: Մեր եղբայրները մեռնում են զինուորիկների հարուածների տակ, մեր գործը ոչնչանում է վերջնականապէս, իսկ ես ուշաթափում եմ:

Օքնոմանը զօրով կարողացաւ համոզել նրան, որ իրանց չորս կողմն ամեն ինչ հանդարտ է, որ իւր ժամանակին կըհասնեն գլադիատորներին սպառազինելու համար, որ նրա ուշաթափութիւնը երկու րոպէից աւել չի տևել և որ, վերջապէս, ձեռքի զրութիւնը վտանգաւոր է:

Այս ասելով, գերմանացին քիփ փաթաթեց Սպարտակի ձեռքը և կապիչների օգնութեամբ կրծքից կապեց: Այս բոլորը վերջացնելուց յետոյ ասաց.

— Այսպէս դու քիչ կըտանջուես:

Սպարտակին միայն աջ ձեռքն էր հերիք, որ անպարտելի լինի:

— Ոչինչ չեմ ուզում, մի սո՛ւր ձեռք գցէինք, պատասխանեց թրակիացին, արագ գնալով դէպի ուսումնարանի ամենամօտիկ տունը:

Գաւթում լուռ ու մուռ նստած էին գլադիատորների երկու կոգորս¹⁾, որոնք իսկոյն ճանաչեցին մօտ եկող Սպարտակին ու Օքնոմանին: Գլադիատորների շարքերում ուրախութեան և յուսոյ աղաղակներ բարձրացան:

— Լռեցէ՛ք, գոչեց Սպարտակն իւր ուժեղ ձայնով:

— Լռեցէ՛ք, կրկնեց Օքնոմանը:

— Լռեցէ՛ք և կարգ պահպանեցէ՛ք, այժմ անտեղի աղաղակների ժամանակ չէ, յարեց Սպարտակը:

Եւ երբ խորին լուռութիւն տիրապետեց, նա հարցրեց.

¹⁾ Կոգորս—600 հոգի:

— Ո՞ւր են ձեր կառավարիչներն ու խորհրդատուները:

— Հարեալն տանը նրանք ժողով են արել, թէ ի՞նչ ձեռնարկեն, որովհետեւ ուսումնարանը չըջատուած է հռոմէական զինուորներով և գէնքի պահեստները խստիւ պահպանուած են:

— Ես այդ գիտեմ, պատասխանեց Սպարտակը.

Սպա դարձաւ Օքնոմանին և աւելցրեց՝

«Քնանք այնտեղ, նրանց մօտ»:

Յետոյ երեսը բախուած հաւաքուած հազարաւոր գլադիատորներին դարձրեց և ասաց.

— Յանուն դժոխքի ու երկնքի բոլոր աստուածների՝ ես հրամայում եմ ձեզ կարգ պահպանել ու լռել:

Շուտով նրանք մտան այն դահլիճը, ուր մի քանի ջահերի լոյսի տակ նիստ էին կազմել երկու հարիւր առաջնակարգ գլադիատոր՝ «ձնշուածների դաշնակցութեան» գլխաւոր ժողովի անդամները:

— Սպարտակ, գոչեցին երեսուն հոգի, անսպասելի գալըստից շանթահար եղածի պէս:

— Մենք կորած ենք, ասաց նրանցից մէկը:

— Դեռ չէ, պատասխանեց Սպարտակը, եթէ յաջողուի մեզ գէնքի մի պահեստ գրաւել:

— Բայց ժամանակ կըլինի՞ այդ անելու:

— Մենք գինուած չենք:

— Եւ արդէն շուտով հռոմէական զինուորները կը յարձակուին մեզ վրայ:

— Եւ կտոր կտոր կանեն մեզ:

— Զահեր ունի՞ք արդեօք, հարցրեց Սպարտակը:

— Այո՛, ունինք, երեք հարիւր լիսուն կամ չորս հարիւր:

— Ս. հաւաստի մեր գէնքերը, աղաղակեց Սպարտակը, որի աչքերը փայլեցին ուրախութիւնից: Մի ըռպէից յետոյ աւելցրեց.

— Բոլոր տասը հազար գլադիատորներից, որոնք գտնուում են այս ուսումնարանում, դուք, անկասկած, ամենաքաջը և ուժեղն էք: Դուք պիտի ցոյց տաք այսօր, որ ձեր ընկեր-

ները ձեզ իրանց առաջնորդ ընտրելով, իսկապէս չեն սխալուել: Պատրաստ էք ամեն ինչի:

— Պատրաստ ենք, պատասխանեցին, ինչպէս մի հոգի, բոլոր երկու հարիւր գլադիատորները:

— Կըկռուէ՞ք նոյն իսկ առանց գէնքի գինուածների դէմ:

— Կըկռուենք, գոչեցին աւելի բուռն եռանդով գլադիատորները:

— Դէ... տուէք ջահերը: Կըվառենք և ձեռքներիս բռնած՝ կ'ընկնենք ամենամօտիկ գէնքի պահեստի պահապանի վրայ, կըքշենք նրան, կ'այրենք դուռը, և մենք կ'ունենանք այնքան գէնք, որ հարկաւոր է իսկական և կատարեալ յաղթութիւն տանելու համար: Ո՛չ. դեռ ևս բոլորը չէ կորած, քանի որ մեզնում հաւատ ու վճռականութիւն կայ յաղթելու կամ մեռնելու:

Կտրիճ թրակիացու գունատ դէմքն այս ըռպէին պայծառացաւ մի առանձին լուսով: Սչքերը փայլում էին և ամբողջ էութիւնից ոգևորութիւն էր բղխում: Այն հաւատը, որ բորբոքել էր այս ուժասպառ, յոգնած ու տանջուած մարդին, արագութեամբ հաղորդուեց դահլիճում խմբուած երկու հարիւր գլադիատորներին:

Բոլորեքեան՝ մի սիրտ, մի հոգի՝ վազ տուին ջահերի լետեից, որոնք Սպարտակի խորհրդի շնորհիւ, առաջուց պատրաստուած պահուում էին ուսումնարանի զանազան շինութիւնների մէջ:

Մինչդեռ կառավարիչները խորհրդակցում էին, միւս գլադիատորները յուսոյ և երկիւղի տակ շփոթուած, լուռ կանգնել էին գաւթում և խորհրդակցութեան հետեանքին սպասում:

Բայց հռոմայեցիներն էլ ժամանակը զուր չէին կորցնում: Նրանք արդէն կարողացան զօրեղ պահնորդներով շրջապատել գէնքի բոլոր պահեստները, գրաւեցին զպրոցի մուտքերը, և այժմ բերդապետը պատրաստուում էր իւր իշխանութեան տակ գտնուող 500 փառաւորապէս սպառազինուած զինուորներին ուղղակի գլադիատորների վերայ տանել և ստի-

պել նրանց ցրուելու: Այս միջոցին, երբ որ Սպարտակը, Օքնոմանը և նրանց ընկերները պատրաստ էին ներս խուժել միջանցքը, գիշերային խաղաղութեան մէջ հնչեց փողերի ձայնը. և երբ լուսթիւն տիրապետեց, հասարակական մունետիկը յայտարարեց, թէ՛ եթէ գլադիատորները փողի երրորդ ձայնից յետոյ չեն ցրուիլ, ապա զինուորները նրանց զօրով կըքշեն:

Սպարտակը մի քիչ ժամանակ անշարժ մնաց, դէմքն ահուելի, աչքերը գետին ձգած այն մարդի նման, որ խորհրդակցում է ինքն իրան հետ: Վերջապէս դարձաւ ընկերներին ու ասաց.

— Եթէ յաջողուի գոնէ գէնքի մի պահեստ ձեռք գցել, մեզ բաւականութիւն կըտան այնտեղ գտնուած սրերն ու սուամնարանի մնացած պահեստները գրաւելու համար, և մենք կը յաղթենք: Եթէ այս բանը չի յաջողուիլ, մեզ կըմնայ մի հնարք մեր գործն ազատելու համար: Թող զեկավարների մի մասը դառնայ մեր ընկերների մօտ, որ սպասում են գաւթում և եթէ քառորդ ժամից յետոյ չեն լսիլ մեր երգի ձայնը, ապա հրամայեցէք բոլորին, որ լուռ ցրուեն իրանց տեղերը. այս նշան կը լինի, որ չկարողացանք գէնք գրաւել: Մենք էլ այս դէպքում կ'աշխատենք մի կերպ դուրս փախչել դպրոցից, կըմտնենք մօտակայ պանդոկը, կը զինուենք, ինչով լինի, կըյաղթենք բոլոր վտանգներին, և հաբիւր հոգով լինի, վաթսուենով թէ երեսուենով, մի խօսքով, ուրքեր որ կենդանի կըմնանք, կըխմբուենք Վեզով սարի գլխին և այնտեղ կը բարձրացնենք ապստամբութեան դրօշակը: Հէնց այնտեղ թող գան կարճ ճանապարհներով, զինուած թէ անգէն, խմբերով թէ մենակ՝ մեր բոլոր եղբայրները: Այնտեղից կըսկսուի ճնշուածների պատերազմն իրանց ճնշողների դէմ: Իսկ այժմ... յառաջ...:

Եւ Օքնոմանի հետ առաջինը մտաւ միջանցքը: Մի ակընթարթում ընկաւ զինուորների վրայ, որոնց առաջնորդը, մի ձեռնանի և վիրաւորուած ծեր զինուորական, գոռում էր. «Յառաջ... դէհ յառաջ... գարշելի գլադիատորներ...

յառ...»: Բայց նա չկարողացաւ վերջացնել, որովհետեւ Սպարտակը իւր բազուկը մեկնեց ամբողջապէս, և ահագին վառուած ջահով խփեց ուղղակի բերանին:

Ծեր զինուորականը մռնչաց և օրօրուեց:

Սպարտակն ու Օքնոմանը կուռւմ էին սոված վագրերի նման երկու ուրիշ ընկերով, որովհետեւ նեղ միջանցքում չորսից աւելի հոգով չէր կարելի կուռել:

Շուտով նրանք զինուորներին դուրս քշեցին դռներից: Հարիւր հատ գլադիատոր, որ զինուած էին ջահերով, փոքր առ փոքր խռնուեցին սրահներում և սկսեցին ջարդել զինուորներին, որոնցից շատերը կուրացած ու զինաթափ, շտապեցին փախուստ տալ և ազատուել: Գլադիատորների միւս մասն էլ ջահերը իրար վրայ էին դարսում գէնքի պահեստի դռան մօտ, որ դուռն այրեն և, այս կերպով, ներս մտնեն:

Մինչ այս, մինչ այն, բերդապետը հրամայեց երեք անգամ փող հնչեցնել և տեսնելով, որ գլադիատորները չեն ցրոււմ իրանց սենեակները, զինուորներին հրամայեց անգէնների վրայ ընկնել:

Սարսափելի ըուպէ էր: Օդը լցուեց աղաղակներով, անէծքներով և հառաչանքներով: Գլադիատորները հարուածների ծանր կարկուտից շփոթուած՝ յետ նահանջեցին դէպի գաւթի մուտքերը՝ գոռալով.

— Զէնք... գէնք... գէնք...:

Բայց սրերի հարուած էր, որ թափուում էր գլխներին. այնպէս, որ շուտով գլադիատորների յետ նահանջելը դարձաւ փախուստ և ընդհանուր շփոթութիւն:

Այսպիսով գլադիատորներին հեռացնելուց յետոյ, բերդապետն իւր զօրքով գնաց դէպի գէնքի պահեստը, որի դուռն արդէն սկսել էր այրուել: Տեսնելով, որ սրերն անօգուտ են ջահերի դէմ, որոնցով դիմադրում էին գլադիատորները, զինուորներին հրամայեց նիզակներ բանացնել:

Սպարտակի ընկերներն էլ ստիպուեցին յետ նահանջել, բայց որովհետեւ աւելի քաջ և փորձուած մարդիկ էին, ուստի և նահանջելը կատարուում էր շատ կարգով: Հռոմայե-

ցիւների դէմ ջահերով պաշտպանուելիս, նրանք սպանուածներին և վիրաւորուածների մարմիններից հանում էին նիզակները և գործադրում անօրինակ ճարտարութեամբ:

Միջանցքից դուրս գալիս Սպարտակը նկատեց գաւթում գլադիատորների անկանոն փախուստը և նրանց յուսահատ աղաղակներից և հառաչքներից իմացաւ, որ այժմ ամեն ինչ կորած է ու փրկութեան մի հատիկ ճանապարհ է մնում.— դուրս խուժել ուսումնարանից և փախչել գէպի Վեզուվ սարը:

Եւ նա գոռաց բարձրաձայն՝

— Ով որ սուր ունի՝ այստեղ մնացէք և որքան կարելի է երկար պաշտպանեցէք զինուորներից այս ելքը:

Այն փոքրաթիւ գլադիատորները, որոնց չաջողուեց ընդհարման ժամանակ հռոմայեցիներից սրեր խլել, խմբուեցին միջանցքի մօտ և սկսեցին յուսահատական կատաղութեամբ պաշտպանել նրան:

— Հետևեցէք ինձ, գոչեց Սպարտակը մնացած գլադիատորներին և ջահը բարձրացրեց:

Եւ, Օքնոմանի հետ, արագ արագ վազեց պարսպի դէպի այն մասը, որտեղ մի նեղ դուռը, որ յայտնի չէ թէ քանի տարի էր փակուած մնացել, հիմա միակ ելքն էր համարուում գլադիատորների համար:

Բայց այս դուռն այրելու համար հարկաւոր կըգար կէս ժամ. իսկ այդ միջոցում զինուորները կարող էին միջանցքները գրաւել, և, այսպիսով, պարսպին մօտենալ. կոտրել էլ անկարելի էր, որովհետեւ ոչ կացին կար, ոչ կռան: Ինչ անել հասաւ: Ինչպէս բացանել այս ելքը շուտով: Այս ժամանակ Օքնոմանը նկատեց մի մարմառեալ սիւն և գոչեց ընկերներին. «Թող առաջ դուրս գայ ամենից զօրեղը»:

Մի քանի գլադիատոր դուրս եկան առաջ:

Իւր նման վիթխարի հասակ ունեցող մէկին ջոկեց Օքնոմանը, ցոյց տուեց սիւնն ու ասաց.

— Սպա վերցրո՛ւ, տեսնենք ուժդ ո՞նց է:

Ինքն էլ բռնեց սիւնի միւս ծայրից:

Վերցրին, ու առանց առանձին ջանքերի, օդի մէջ ճօ-

ճելով այս ահագին քարեայ զանգուածը, նրանք ամենայն զօրութեամբ խփեցին դռանը, որ ճռնչաց, վայր ընկաւ ու կտոր կտոր եղաւ:

Իրանց ջահերը հանգցրին թէ չէ, գլադիատորներն ըսպարտակի լետեից գնացին այս նեղ դռնով և փողոցը դուրս եկան: Շատ սուս ու փուս և զգուշութեամբ հասան մօտակայ պանդոկը, որի տէրը ելաւ նրանց դէմ.

— Հ՛ը, ի՞նչ կայ... Ի՞նչ նորութիւններ ունիք.... կռիւն ի՞նչպէս է գնում, հարցրեց նա: Բայց Սպարտակն այս հարցերը կարճ կտրեց.

— Տո՛ւր մօտդ գտնուած բոլոր զէնքերը, նոյնպէս և այն ամեն տեսակ գործիքները, որոնք յուսահատ մարդոց ձեռքում մահացու կը լինին,

Այս խօսքի հետ՝ մօտեցաւ բուխարուն և առաւ շամփուրը, իսկ Օքնոմանը ներքեւ բերեց ակիշը, որ կախած էր պատից, և մի ամբողջ կռնատակ արջ սպանելու երկաթէ նիզակներ, եղաններ, դանակներ և գերանդուներ: Սպա դուրս եկան պանդոկից և այս զէնքերն ընկերներին բաժանեցին:

Ջինուեց թէ չէ, Սպարտակը ճանապարհ ընկաւ առաջինը, իսկ իւր լետեից միւսները դէպի այն փողոցը, որտեղ կանգնած էին հռոմէական զինուորները:

Պահապանները դեռ չկարողացան գոռալ, որ խռովութիւն կայ, մէկ էլ տեսնես գլադիատորները վայրենի գազանների կատաղութեամբ ընկան հռոմայեցիների վրայ, յուսահատ հարուածներ հասցրին, վայր գցեցին, վիրաւորեցին և սպանեցին աջ ու ձախ: Այս մի ընդհարում էր, որ տևեց մի քանի րոպէ. բայց այս ժամանակուայ ընթացքում գլադիատորներն այնպիսի ուժով և կատաղութեամբ էին յարձակոււմ իրանց թշնամիների վրայ, որ վերջիններս փախուստ տուին:

Սպարտակը մի քիչ մտածեց ու ասաց.

— Այժմ անհրաժեշտ է, որ մեր կէսն այստեղ մնայ, որպէս զի կէս ժամով արգելք լինին վրայ հասնող հռոմէական զինուորներին և ժամանակ տան միւս կիսին քաղաքային

պարսպով անցկենալ:

— Ես կըմնամ, մէջ մտաւ Օքնոմանը:

— Ոչ, դու մերոնց կըտանես Վեգուով սարը, իսկ ես այստեղ կըմնամ:

— Իսկի լինելու բան չէ այդ: Եթէ ես մեռնեմ, դու կա՛րող ես պատերազմը շարունակել, բայց եթէ դու մեռնես՝ ամեն ինչ կորած է:

— Վաղիւր, վաղիւր դու, Սպարտակ, աղաղակեցին մի քանի ձայներ:— Մենք Օքնոմանի հետ կըմնանք այստեղ:

Սպարտակի արտաբանութեան վրայ արտասուք երևաց: Այս անկեղծ սէրը և անձնուիրութիւնը տեսնելով՝ նա ձեռքը մեկնեց գերմանացուն և ասաց.

— Մնաս բարով... Սպասում եմ ձեզ Վեգուովի վրայ:

IX.

Երկու ժամից յետոյ Սպարտակն իւր զօրքի հետ արդէն քաղաքի միւս կողմն էր և մօտենում էր մի հարուստ հռոմայեցու կալուածի: Դռնակի զանգը խփելուն պէս դուրս եկաւ մի ծեր յոյն և փնթփնթաց քնաթաթախ. «Թող Իւպիտերը պատժի այն անգգամին, որ համարձակուած է վերադառնալ այսպէս ուշ: Վաղն էլ առանց խղճալու իմաց կըտամ սրա մասին կառավարչին»:

— Աստուածները թող ողորմած լինին զէպի քեզ և օգնեն ամեն գործերումդ, — պատասխանեց Սպարտակը նմանապէս յունարէն:

— Մենք գլադիատոր ենք, յոյներ, ստրուկներ, ինչպէս և դու, ու դուրս ենք եկել, որ ընդհանուր ազատութիւն հրատարակենք: Բաց արա՛ հէնց այս րոպէին և մի ստիպիլ ուժի զիմելու, թէ չէ վատ կը լինի:— Բերանը բացարած և աչքերը չռած, ստրուկը կանգնեց քարի պէս և աւելի շուտ ուրուականի էր նմանում, քան թէ կենդանի մարդի:

— Վերջապէս պիտի բաց անես թէ չէ, վախկոտ քաւթառ, ապա թէ ոչ այս րոպէիս կը հրամայեմ, որ զոնները կոտորատեն:

Ուրիշ ճար չկար: Ծերունին հնազանդուեց: Հէնց որ գլադիատորները բակը մտան, Սպարտակը հրամայեց դռները փակել ու մօտը կանգնացնել իրանց պահապաններին: Ապա խնդրեց իւր մօտ կանչել կալուածի կառավարչին, որին հանգըստացրեց, թէ ոչ իրան, ոչ տիրոջ գոյքերին ոչ մի վնաս չի դիպչիլ, միայն իւր բարեյօժար կամքով կենսական միջերջներ մատակարարի զօրքին:

Անմիջապէս գինի և ուտելիղէն բերուեց նկուղներից գլադիատորների համար: Ամեն մէկը, Սպարտակի պատուէրով, երեք օրուայ պաշար վեր առաւ իւր համար: Ինքը, ըսպարտակը ոչինչ չկերաւ, թէև օր ու գիշեր բերանը բան չէր դրել ու մի րոպէ չէր հանգստացել:

Այդ կալուածում ստրուկների մէջ մի յոյն բժիշկ գըտնուեց, որ պարտաւոր էր բժշկել ստրուկներին և կալուածատիրոջ՝ կալուած եկած ժամանակ: Բժիշկը ուշադրութեամբ քննեց Սպարտակի ձեռքը և դուրս ընկած ոսկորը տեղը գցելով՝ ձեռքի չորս կողմը տախտակներ դրեց, փաթաթեց ու կապեց:

Յետոյ նա յայտնեց, որ Սպարտակին անհրաժեշտ է հանգըստանալը, որովհետև հակառակ դէպքում ձեռքը կըբորբոքուի, նոյն իսկ հիմա՛ էլ տաքութիւն ունի, իբրև հետեւանք յոգնածութեան և վերջին օրերի խռովութիւնների:

Ամենաճիշտ կարգադրութիւններ անելուց յետոյ, Սպարտակը պառկեց մի յաղմար անկողնում ու քնեց մինչև առաւօտ:

Քնից ամրապնդուած և թարմացած երբ որ վերկացաւ, արեգակն արդէն լուսաւորում էր իւր փայլուն ճառագայթներով չքնաղ ամարանոցը և չրջակայ բլուրները, որոնք փրուած էին նրա չորս կողմը:

Սպարտակն իջաւ գաւիթ, հաւաքեց բոլոր ստրուկներին, որոնք ծառայում էին տեղական կալուածատիրոջ և ուղղուեց զէպի բանտ, որ ամեն մի հռոմէական կալուածում լինում էր: Այնտեղ էին նստացնում բոլոր մեղադրուած ստրուկներին, որոնք սովորաբար աշխատում էին երկաթեայ շղթաներով կապկապուած: Բանտից բաց թողնելով մօտ 20

Թշուառ կալանաւոր, քանդեց շղթաները, բերեց միւս ըստ-
րուկների մօտ և այստեղ եռանդալից, ուժեղ ճառախօսու-
թեամբ բացատրեց իւր արշաւանքի պատճառն ու նպատա-
կը, որին հասնելու համար նուիրել են իրանց ամբողջ
կեանքը:

— Ով որ ձեզանից ցանկանում է ազատ մարդ դառնալ, —
այսպէս աւարտեց իւր ճառը. — ով որ այս ողորմելի կեանքից
զերադաս է համարում պատուաւոր մահը պատերազմի դաշ-
տում, սուրը ձեռքին՝ հէնց այդ տեսակ ազատութիւն ձեռք
բերելու համար. ով որ բաւական համարձակ է զգում իրան,
որ վտանգի ենթարկի իւր անձը, և բաւական ամուր, որ
տանի պատերազմի բոլոր ծանրութիւններն ու դժուարու-
թիւնները ընդգէմ աշխարհիս տիրապետների, — թող ձեռքն
առնի առաջին պատահած զէնքը և գայ յետևիցս:

Խորը տպաւորութիւն արաւ այս ճառը Թշուառ, ստո-
րացրած ստրուկների հոգու վրայ: Յնձուլթեան աղաղակնե-
րի և ուրախութեան արտասուքների մէջ ուլթսուն հոգուց
աւելի ձեռքն առան կացիներ, եղաններ, գերանդուններ և
եռասայրեր. ապա երգուեցին, որով կապում են իրար հետ
«ձնշուածների դաշնակցութեան» անդամները:

Փոքրիկ զօրախմբում զօրահանգէս սարքելուց յետոյ,
երևաց, որ նոր միացածներով արդէն 150 հոգի են: Առա-
ւօտեան տասը ժամին գլադիատորների զօրախումբը առաջ
շարժուեց և ուլթ ժամուայ ուղևորութիւնից յետոյ հասաւ
Նէպալօլ խաղաքի շրջակայքերը, ուր Սպարտակի հրամանով
մի հարուստ հռոմայեցու խրճի մօտ կանգ առան:

Այստեղ կրկնուեց նույն բանը, ինչ որ նախընթաց ամա-
րանոցում: Հանգիստ առնելով՝ ճանապարհ ընկան յիսուն
նոր ստրուկների և գլադիատորների ուղեկցութեամբ: Ամ-
բողջ գիշերը զօրախումբն առաջ էր գնում մեծ ճանապարհ-
ներից դուրս՝ շաւիղների միջով: Զանապարհին պատահած
բոլոր կալուածներում ու խրճիթներում Սպարտակը կանգ
էր առնում, որ ապստամբութեան կոչի ստրուկներին և
ձեռք գցի այնտեղի զէնքերը:

Այսպէս հասան Վեգուվ սարի ստորոտը:

Այստեղ կանգ առան: Սպարտակն սկսեց ուշադրու-
թեամբ վերև նայել, որ համոզուի, թէ արդեօք մինչև սա-
րի գագաթը որևէ շաւիղ չէ՞ գնում: Բայց խիտ թփուտը¹⁾,
որ քանի գագաթին մօտենում էր՝ աւելի ու աւելի էր խը-
տանում, կատարելապէս արգելում էր դիտել բուն դրած
շաւիղը: Ուստի որոշեց ճանապարհը քննելու համար մի քանի
ճարպիկ գլադիատոր ուղարկել: Իսկ ինքը՝ զօրախմբի մեծ
մասի հետ սկսեց ման գալ շրջակայ ապարանքներն ու ամա-
րանոցները. ամեն տեղ ազատեց ստրուկներին և զէնքեր
ժողովեց:

Եօթանասուն հոգի մնացին տեղերում, ուր կէսօրին
պիտի դալին մնացած բոլոր գլադիատորները: Ամեն բան
կատարուեց, ինչպէս ասացինք, ապստամբ ստրուկների պա-
րագլխի նախաձեռնութեամբ: Երբ որ տեղեկաբերներն իջան
սարի գագաթից, Սպարտակին գտան պայմանաւորուած տե-
ղը: Նա արդէն կարողացել էր այսքան ժամանակում դար-
ձեալ երկու հարիւր ստրուկ ժողովել:

Այժմ նա հինգ հարիւր հոգի ունէր, որոնցից հինգ
խումբ կազմեց, ամեն մէկում հարիւր հոգի: Առաջին հա-
րիւրեակը, որ ամենաջահիլ և ուժեղ գլադիատորներից էր
բաղկացած, — որոնք զէնք գործածել լաւ էին իմանում, — փա-
ռաւոր կերպով զինուած էր սրերով և նիզակներով: Ամեն
մի հարիւրեակ բաժանուած էր տասնեակների: Սրանց իբրև
առաջնորդ՝ հարիւրապետներին ու տասնապետներին՝ Սպար-
տակն ընտրեց այն գլադիատորներից, որոնք Վապուլայից փա-
խել էին իւր հետ: Որովհետև նրանց վաղուց էր ճանա-
չում, ուստի և կատարելապէս հաւատ էր ընծայում:

Տեղեկաբերների խօսքերից երևաց, որ սարի գլուխը
տանող ճանապարհը շատ դիք է, և որ գագաթին մօտ, նա
բոլորովին կորչում է, ու զառիվերը սաստիկ դիք է ու դժուար:

— Ահ, վերջապէս, աղաղակեց Սպարտակը, — այսքան ան-

¹⁾ Թփուտ — ժող. մացառներ, Թփերի խումբ:

յաջողութիւններէց յետոյ աստուածներն սկսում են մեզ հովանաւորել: Այնտեղ, այն գազաթների վրայ, ուր արծիւները բոյն են հիւսում և ուր գազանները թագնւում են մարդոց հալածանքներից, այնտեղ կրկանգնացնենք ազատութեան դրօշակը: Այնտեղ բանակ կը գնենք, մինչև որ կը հաւաքուին մեր բարեկամները: Աւելի չաւ տեղ ճակատագիրը չէր կարող մեզ տալ: Ճանապարհ ընկնենք, ուրեմն:

Այն միջոցին, երբ գլադիատորները բարձրանում էին դէպի Վեզով տանող ճանապարհով, Սպարտակը կանչեց իւր մօտ ինն յուսալի ընկերներ, փող տուեց և ուղարկեց գանազան կողմեր. երեքին՝ Հռոմ, երեքին՝ Հռաւեննա, երեքին՝ Կապուա, որ յայտնեն այս երեք քաղաքում գտնուած ընկերներին, թէ Սպարտակը հինգ հարիւր զինուորով բանակ է դրել Վեզովի գլխին ու կանչում է բոլորին, որ իւր մօտ գան, որքան կարելի է շուտ, որպէսզի միասին կռուեն ազատութեան համար:

Երկու ժամուայ դժուար զառիվերն անցնելուց յետոյ՝ զօրքը մի ընդարձակ դաշտ հասաւ: Այստեղ Սպարտակը հրամայեց կանգ առնել. և մինչդեռ զինուորները հանգստանում էին, նա պտտեց դաշտը ու տեսաւ, որ շատ յարմար է բանակ դնելու համար:

Եւ, իսկապէս, դժուար էր գտնել աւելի յարմարաւոր տեղ: Մի կողմից դաշտը հպում էր բարձր, անմերձենալի ժայռերի, քարափների, միւս կողմից ահագին դիք փլուածք կար, որով չէին կարող բարձրանալ ո՛չ միայն մարդիկ, այլև վայրենի այծեամները:

Այսպիսով նրանք յարձակումն կարող էին սպասել միայն այն նեղ շաւղից, որով բարձրացան: Սպարտակն անմիջապէս մի քանի հօգի ուղարկեց մօտակայ անտառը փայտ կտրելու, որպէսզի խարոյկներ վառեն գիշերուայ համար, որովհետև այդ տեսակ բարձրութեան վրայ, մանաւանդ ձմեռ ժամանակ, գիշերները շատ ցուրտ էր լինում:

Զօրքը, վերջին երկու օրուայ արշաւանքներից վաստակած, շատ շուտով խոր քնի մէջ ընկղմուեց, և երբ առաջին

աստղերը լճուռեցին երկնքում, անվրդով խաղաղութիւնը թագաւորեց ամբողջ դաշտի վրայ: Խարոյկները ճրթճրթում, բորբոքում և լուսաւորում էին քնած գլադիատորներին:

Չէր քնած միայն Սպարտակը: Անշարժ նստած էր նա սև ժայռի վրայ և նայում էր դէպի հեռաստանը: Միտքը թափառում էր դէպի հեռուն ու հեռուն: Յիշեց իւր հայրենի Թրակիան, մանկութեան առաջին տարիները, երազի նման անհետ չքացած վաղանցուկ բախտը: Այս բաները լիշեթի դէմքը պարզ և խաղաղ արտայայտութիւն էր ստանում. բայց յանկարծ մռայլացաւ ու խստացաւ: Միտքն եկաւ հռոմայեցիների յարձակման ժամանակը, արիւնահեղ պատերազմները, Թրակիացիների պարտութիւնը, իւր տան կործանումը, հօտերի կոտորածը, ամբողջ գերդաստանի ստրկութիւնը...:

Սպարտակը վեր ցնցուեց: Այնպէս թուաց, որ եղեգնւտում խշխշոցի ձայն եկաւ: Նա սկսեց ականջ դնել, բայց չորս կողմը լուռ էր ամեն բան, միայն լեռնային քամու հոսանքը ժամանակ առ ժամանակ շարժում էր ծառերի տերևները:

Սպարտակը գնաց խարոյկի մօտ հանգստանալու, բայց մի քանի քայլ արած, կանգնեց և էլի սկսեց ականջ դնել: — Սարի գլուխը զինուորներ են բարձրանում... շշնջաց նա: Այնուհետև տախտի¹⁾ ավիւր գնաց, գլուխը կռացրեց և աւելցրեց.

— Արդէ՛ն: Չէի կարծում թէ այսպէս շուտ:

Դեռ Սպարտակը չէր հասել պահականոցին, որ գիշերային խաղաղութեան մէջ հնչեց նախօրօք կարգուած պահակի մաքուր և հնչուն ձայնը.

— Ո՛վ է եկողը...

Եւ ապա աւելի մօտ՝ բարձր աղաղակ.

— Ի գէ՛ն:

Մի ականթարթում գլադիատորների պահակները ոտքի վրայ էին արդէն: Հենց այդ միջոցին նրանց մօտեցաւ ըՍ-

¹⁾Տախտ—ժող. սարի գագաթում տափարակ տարածութիւն (площадь).

պարտակը: Մերկացած սուրը ձեռքին բռնած՝ հանգիստ ձայնով խօսեց.

— Կամենուժ ես մեզ վրայ յարձակուել, բայց այս կողմից մի հատ մարդ չի բարձրանալ:

— Մի հատ մարդ չի բարձրանալ, իբրև արձագանգ կըրկնեցին գլադիատորները: Բայց որքան եղաւ բոլորի զարմանքը, երբ որ պահակի աղաղակին իբր պատասխան լսեցին Օքնոմանի ձայնը.

— Ընկերներ, ես եմ և իմ բարեկամները:

Դժուար է երևակայել Սպարտակի ուրախութիւնը:

Նա վազեց Օքնոմանի հանդէպ, և երկու գլադիատորն սկսեցին իրար գրկել. կարծէք երկար տարիներ չէին տեսնուել:

— Օ՛, իմ սիրելի Օքնոման—գոչեց Սպարտակը:

— Ձէի կարծում, թէ այսպէս շուտ կըտեսնեմ քեզ:

— Ես էլ չէի կարծում, պատասխանեց Օքնոմանը, շոյելով Սպարտակի խոսուպիքները և քնքշաբար ճակատը համբուրելով:

Երբ որ ուրախութեան առաջին րոպէներն անցկացան, գերմանացին պատմեց, թէ ինչպէս ի, մօտաւորապէս երեսուն ընկերն ընկան դպրոցի մօտի գիշերալին պատերազմում և թէ ինչպէս մնացած հարիւր ու քսան հոգուց միայն իննսունին յաջողուեց մի տեղ միանալ, և գիշերը մօտենալուն պէս, ճանապարհ ընկնել: Նոր պատահեցին Սպարտակի Կապուա ուղարկած սուրհանգակներից մէկին և նրանից ճշտութեամբ իմացան այն տեղը, ուր Սպարտակն ու իւր ընկերները բանակ են դրել: Մեծ էր գլադիատորների բանակում ցնծութիւնը և ուրախութիւնը: Մինչև խորինգիշերը շարունակուեցին ընկերների խօսակցութիւններն ու հարցովորձերը. ապա գոհ սրտով և բախտաւոր, քնեցին խոր քնով:

Միւս առաւօտ Սպարտակն ու Օքնոմանը աչքի անցրին իրանց զօրախմբերը. հրամայեցին տախտի փերին քարի կոյտեր կիտել, որ հռոմայեցիների յարձակուելու ժամանակ ա-

պահով լինին: Խարոյկների համար փայտ բերին և մթերքների, ուտելեղէնների պատրաստութիւն տեսան: Այսպէս անցկացաւ ամբողջ օրը և հետեւեալ գիշերը: Բայց երկրորդ օրուայ արշալուսին գլադիատորները զարթնեցին պահակների աղմուկների վրայ, որով գէնքի էին կոչում նրանց:

Այս անգամ իսկապէս մօտ հազար հռոմէական զինուոր էր մօտենում Սերվիլիոնի հրամանատարութեամբ: Հէնց որ հռոմէական զօրքն երևաց, գլադիատորները քարէ կոյտեր թափեցին գլխներին:

— Յառնջ, յառնջ, ՚ի սէր Իւպիտերի: Համարձակ, գոռում էր Սերվիլիոնը, առաջից գնալով:

— Այս րոպէիս կըհասնենք այն լրբի բանակը և կտոր կտոր կ'անենք նրան:

Չնայած թափուող քարէ կարկուտին, հռոմայեցիները բարձրացան մինչև պատնէշը, ուր կարող էին, վերջապէս, բանացնել իրանց գէնքերը:

Աղմուկը, գոռում—գոչիւնը սաստկացան. պատերազմն արիւնահեղ էր:

Այդ ժամանակները Սպարտակը կանգնած էր սարի գլխին և գիտում էր կռիւը: Իբրև հմուտ զօրավար՝ մի հայեացք նետելով պատերազմող երկու կողմերը, տեսաւ թէ ինչ աններելի սխալ արաւ իւր հակառակորդը: Սերվիլիոնը յարձակում գործելու համար զօրքը տարաւ նեղ ծանապարհով, ուր տասից աւելի մարդ չէր տեղաւորուիլ մէկ կարգում, մինչդեռ մնացած բոլոր բազմութիւնը անգործ պիտի մնար և գլադիատորների անվրէպ հարուածներին ենթարկուէր: Անմիջապէս օգուտ քաղեց Սերվիլիոնի սխալից, դասաւորեց իւր զինուորներին ամբողջ տախտի եզրի երկայնութեամբ և հրամայեց անդադար քարեր նետել յարձակողների վրայ: Քառորդ ժամից յետոյ, ասաց Սպարտակը, հռոմայեցիները փախուստ կըտան և մենք կտոր կտոր կ'անենք նրանց:

Նրա նախագուշակութիւնն ամբողջապէս կատարուեց: Այն միջոցին, երբ Սերվիլիոնը մի քանի սրտոտ զինուորների հետ աշխատում էր ճանապարհ բացանել դէպի գլադիատոր-

ների բանակը, մնացած բոլոր զօրքը ստիպուած էր անգործ կանգնել քարերի աջ ու ձախ թափուող կարկուտի տակ:

Շուտով հռոմէական զօրքն սկսեց շարժուել, յետ գնալ: Դուր Սերվիլիոնն իւր զինուորներից պահանջուած էր անկարելին: Նա հրամայեց տեղերում կանգնել՝ չնայած ամեն կողմից թափուող քարէ կոյտերին:

Առաջին շարքերի շփոթութիւնը քանի գնում աւելանում էր, և վերջապէս, բոլոր զօրքը կատարելապէս փախուստ տուեց, որի ժամանակ առաջինները ճնշում էին վերջիններին, անկարող լինելով կանգնել մինչև սարի ստորոտ: Գլադիատորները, թիկունքները մտած, հալածուած էին: Բաց տեղ հասնելուց յետոյ միայն սկսեց Սերվիլիոնը կանչել զինուորներին, բայց գլատիատորներից հալածական՝ փախան նրանք զանազան կողմեր, և միայն մի քանի տեղ կառավարելիներին յաջողուեց շուրջը հաւաքել փոքրիկ խմբակներ: Բայց սրանք էլ երկար չկարողացան ընդգիծանալ գլադիատորներին, և երբ որ Սերվիլիոնն էլ ընկաւ Սպարտակի ձեռքից, հռոմայեցիները փախան որ փախան: Այս բոլորից ըսկըսած՝ պատերազմը դադարեց ու սկսուեց իսկական արիւնահեղ կոտորած:

Հռոմէական զօրքի պարտութիւնը կատարեալ էր: Չորս հարիւրից աւելի սպանուեցին: Երեք հարիւրը գերի ընկան և Սպարտակի հրամանով զինաթափ եղան ու բաց թողնուեցին:

Գլադիատորներից երեսունից ոչ աւելի սպանուեցին և մօտ յիսունը վիրաւորուեցին:

Շուտով յաղթողները հռոմայեցիների բոլոր գէնքերն առած՝ յետ դարձան իրանց բանակը:

X.

Հռոմէական երկու կոգորսների—գօրախմբակների պարտութեան լուրը կաշձակի արագութեամբ տարածուեց չրջակայ բոլոր քաղաքներում և ամեն տեղ սարսափ և իրարանջում յարուցեց:

ցում յարուցեց:

Միմիայն Հռոմում լուրջ նշանակութիւն չէին տալիս գլադիատորների տպստամբութեանը:

Հռոմէական ծերակոյտն այն ժամանակ աւելի կարեւոր գործերով էր զբաղուած: Արեւելքում և արեւմուտքում հռոմայեցիների դէմ զինուել էին հարեան ազգերը և բոլոր զօրքերը սահմաններն էին ուղարկուած: Վեզովին մօտ քաղաքների բազմիցս կրկնուած պահանջներից յետոյ միայն ծերակոյտը որոշեց գլադիատորների դէմ վեց կոգորս զօրք ուղարկել, այսինքն՝ երեք հազարից էլ աւելի, յայտնի և փորձուած զօրավար Վլադիոս Գլաբրիոսի առաջնորդութեամբ:

Մինչդեռ Վլադիոսը զինավառում էր իւր կոգորսները գլադիատորների զօրքը շատ արագ բազմանում էր: Վեզովին ու հարեան հովիտներին տէր դառած՝ Սպարտակն ամեն օր ուսուցանում էր զօրքերին: Նա սովորեցրեց՝ շարքերը ջուխտակել, փակուել, զօրասիւններ կազմել և այլն: Հռոմէական զինուորներից խլած պատերազմական փողերով և նշանակութեամբ երաժիշտների փոքրիկ խումբ կազմեց՝ առաւօտեան փողը հնչեցնելու համար. իսկ ինքն այնքան միջոցում կարողացաւ զօրքը պատրաստել առաջիկայ պատերազմի համար: Մօտակայ հովիտներից ու փայտ կտրողներից խմացաւ, որ հռոմայեցիները մօտենում են բանակին, և թշնամիների թուի մասին ամենաճիշտ տեղեկութիւններ ունէր: Նա հասկացաւ, որ հազար զինուորով բացարձակ դաշտում անկարող է կռուել երեք հազարի դէմ, ուստի որոշեց յարձակման սպասել բանակում, հէնց Վեզովի գլխին: Երևում էր, որ Վլադիոսն իսկապէս պատրաստուած էր գրոհ տալ Սպարտակին: Վէսօրին մօտ, հարիւր թեթեւ զինուած զինուորներ երկու կողմից սկսեցին սարը բարձրանալ շաւիղներով: Գլադիատորների բանակին մօտեցած, հռոմայեցիները նետերի մի ամբողջ հեղեղ թափեցին, բայց մեծ վնաս չտուին, որովհետև միջի տարածութիւնը երկար էր: Այսուամենայնիւ մի քանի հոգի վիրաւորուեցին:

Սպարտակն արդէն պատրաստուած էր հռոմայեցի ազգ-

նաւորները վրայ ընկնել, բայց նրանք յետ նահանջեցին, և, ըստ երևութին, բանակի վրայ յարձակուելու միտքը թողին: Կլաւդիոսը Վեզով վեր ուղարկել նրանց լոկ նրա համար, որ իմանան, թէ արդեօք գլադիատորները չեն փոխել բանակը: Եւ երբ հաւաստիացաւ, թէ նրանք դեռ սարի գլխին են, ձեռքերը տրորեց ուրախութեամբ, մտածելով որ թշնամուն կարող է ջարդել հենց իւր սեպհական գէնքով:

— Մուկը ծուղակումն է. հինգ օրից յետոյ անձնատուր կըլինին, — ասաց նա:

Սարի ստորոտում Մեսսալայի առաջնորդութեան տակ երկու կոզորս զօրք թողեց Կլաւդիոսը, իսկ ինքը մնացած չորսի հետ բարձրացաւ դէպի թշնամու բանակը: Հասնելով այնտեղ, ուր փռուած էր կեռումեռ ու նեղ միակ շաւիղը, որով կարելի էր անցկենալ, հրամայեց կանգնել և բանակ դնել: Այս ժամանակ Մեսսալան էլ սարի ներքեւից պտտելով, իւր երկու կոզորսը վերեւ տարաւ ու երկու ժամից յետոյ հասաւ հակառակ կողմի զաւիւղայրին: Զգուելի ճանապարհով բարձրացաւ մինչև այնտեղ, ուր փռուածքներն ու քարաժայռերը կտրում էին ամեն անցք, և այնտեղ հրամայեց բանակ դնել: Այսպիսով Կլաւդիոսն ու Մեսսալան երեկոյեան դէմ գրաւեցին այն միակ անցքերը, որոնցով կարող էին իջնել գլադիատորները: Թւում էր թէ, մուկն իսկապէս թակարգն է ընկել:

Միւս առաւօտեան լուսաբացին, երբ ըստ սովորականին շրջում էին պահակները, Սպարտակը նկատեց Մեսսալայի բանակը: Նա Կլաւդիոսի զօրքերը չկարողացաւ տեսնել, որովհետև համ սարի միւս կողմն էին, համ էլ թագնուած էին իրանից անտառով, սակայն միանգամից ըմբռնեց Գլաբրիոսի նախագիծը: Որպէսզի աւելի համոզուի իւր ենթադրութեան ճշտութեան մէջ, Սպարտակը երկու հարիւր զինուոր առաւ և սկսեց շաւղով ներքեւ իջնել: Շուտով դէմ ընկաւ հռոմայեցիների առաջապահ պահակներին և տեսաւ հռոմէական մեծ բանակը:

Հէնց որ գլադիատորները մօտեցան, հռոմայեցիներն առաջ շարժուեցին և Սպարտակի զօրքի գլխին նետերի հեղեղ թա-

փեցին: Բայց դժբախտ թրակիացին այն բանից խոր խոցուած, որ փակուած է ամեն կողմից և անպատճառ կորստի պիտի մատնուի, չէր շարժուում տեղից և չէր նկատում շուրջը շաւաչող նետերը:

— Սպարտակ, է, թնչ ես հրամայում: Առաջ գնանք ու պատերազմենք թէ յետ նահանջենք:

— Նահանջեցէք, նահանջեցէք, — պատասխանեց թրակիացին տխրութեամբ:

Գլադիատորներն արագ արագ սարի գլուխը բարձրացան: Մտախոհ, ծանրաքայլ, գլուխը կրծքի վրայ խոնարհած, գնում էր Սպարտակը յետեւից:

Հռոմայեցիները մի քիչ ժամանակ հալածեցին գլադիատորներին, բայց շուտով, իրանց զօրավարի հրամանով, յետ դարձան:

Հասաւ տախտին թէ չէ՝ Սպարտակն իւր մօտ կանչեց Օքնոմանին և Արտորիքսին: Մի կողմ տարաւ և ցոյց տուեց սարի այն երեսին երևացող հռոմէական բանակը և խորհուրդ էր հարցնում, թէ թնչպէս դուրս գան այս զարհուրելի դրութիւնից:

— Արևս վկայ, զոռաց Օքնոմանը, ոչինչ հնար չկայ, բայց թէ վայրենի զազանների կատաղութեամբ յարձակուել այս ու այն բանակի վրայ: Հազար հոգի կըմեռնեն մեզանից, բայց երկու հարիւրն էլ ազատ դուրս կ'երթան:

— Ա՛հ, երանի՜ թէ այդ բանը կարելի լինէր, ասաց ըսպարտակը:

— Ի՞նչ անկարելի բան կայ այստեղ, պատասխանեց գերմանացին տաքացած:

— Իսկի մտածել ես, որ թշնամին բանակ է դրել հէնց այնտեղ, ուր նեղ շաւիղը լայնանում է և դաշտ կազմում: Այժմ հասկացա՞ր, որ մենք թէ այս և թէ այն կողմից միայն ամեն շարքում տասը տասը հոգով կարող ենք կռուել: Ինչ օգուտ թէ հազար երկու հարիւր հոգի ենք, քանի որ գործին քսան հոգի միայն կարող են մասնակցել:

Սպարտակի խօսքերն այնքան ուղիղ էին, որ Օքնոմանը

գլուխը կախ արաւ ու խորին հառաչք արձակեց: Արտորիքսն էլ էր խորին լուռութիւն պահում:

— Միայն հինգ օրուայ պաշար ունինք, շարունակեց ըստարտակը: Էհ, իսկ յետոյ:

— Եթ ութ օր էլ կարելի է դիմանալ, իսկ յետոյ:

— Մնում է մի ելք. անձնատուր լինել կամ մեռնել....

Այս մարդոց վիճակը շատ դառն էր: Անտանելի տանջանք էր խոստովանել, որ մի ակնթարթում խորտակու՞մ են հինգ տարուայ աշխատանքները և յոյսերը. կորաւ իրանց կեանքի միակ նպատակը, միակ ուրախութիւնը: Տեսնել գործի այսպիսի ողորմելի վախճանը հէնց այն րոպէին, երբ իրանց այնքան մօտիկ էին կարծում յաղթութեան... Ի՞նչ բան էր մահը այսպիսի սարսափելի դժբախտութեան առաջ:

Սպարտակն առաջինը խանգարեց այս զարհուրելի լուռութիւնը:

— Գնանք, ասաց նա, տախտը մի լաւ նայենք, կարելի է կայ էլի մի հնարք ազատուելու և դուրս գալու այս դադաղից:

Հասնելով այնտեղ, ուր տախտը դէմ է ընկնում չափազանց դիք փլուածքին, երեքն էլ կանգնեցին: Կամենում էին աչքով չափել խորութիւնը, բայց իսկոյն լետ քաշուեցին սարսափահար, որովհետեւ գլուխներն սկսեցին պոյտ գալ այս անյատակ անդունդը տեսնելուն պէս:

— Միայն քարերը կը գլորուին մինչև յատակը, ասաց Սպարտակը:

Պարագլուխներին մօտիկ մի քանի ջահիլ գլադիատոր, գետնի վրայ պառկոտած, մեծ վահաններ էին հիւսում ուռնենու ճիւղոտներից և հաստ կաշիով փաթաթում: Սպարտակի հայեացքն անգիտակցաբար այս գլադիատորների և նրանց ձեռագործի վրայ ընկաւ:

Նրանցից մէկը թրակիացուն բացատրեց, որ ճիւղոտներից վահաններ են պատրաստում իրանց գալիք ընկերների համար:

— Աստուածները վարձատրեն ձեզ դէպի ընկերներդ տաճած այդ եղբայրական սիրոյ համար, աղաղակեց Սպարտակը:

— Ապա րուպէական լուռութենից լետոյ, որի միջոցին սիրալիր կերպով նայում էր այս երիտասարդներին՝ հարցրեց.

— Բայց շատ ունիք այդ կաշուց:

— Օ՛, ոչ, մի գիւժին վահանի հագիւ հերիք լինի, ոչ աւել:

— Ափսոս, որ կաշի չէ կարելի ճարել:

— Ինչքան կո՛ւզես, ոնց որ անտառի ճիւղերը, նկատեց մի գլադիատոր, հանաք անելով:

Սպարտակի հայեացքը դարձեալ ընկաւ այն հաստ, ամուր և ճկուն ճիւղոտների վրայ, որոնք թափուած էին փոքրիկ կապուկներով:¹⁾ Գլադիատորի վերջին խօսքերը նրան ապշեցրին: Յանկարծական միտք չղացաւ նրա գլխում: Կռացաւ, մի կապուկ ճիւղոտ վերցրեց և ուրախութեամբ բացակոնչեց.

— Օ՛, երբու՞մ եմ Իւպիտերի անունով, մենք փրկուած ենք:

Օքնոմանն ու Արտորիքսը վեր քաշուած ²⁾ շուռ եկան դէպի Սպարտակը:

— Ի՞նչ ես ասում:

— Բայց ի՞նչ բանի մէջ է մեր փրկութիւնը:

Սպարտակը, որ ուշադրութեամբ մտիկ էր տալիս ուռներին ³⁾՝ դարձաւ ընկերներին ու ասաց.

— Տեսնո՞ւմ էք, բարեկամներս, այս ուռերը:

— Սրանցից մենք անվերջ սանդուղդ կը գործենք, մի ծայրը կը կապենք ահա այս ժայռի գագաթից և իրար յետեից ներքև կ'իջնենք մինչև անդնդի ուղի՜ղ յատակը. այնտեղից կ'ընկնենք հոռմայեցիների քամակը և կտոր կտոր կանենք նրանց:

Սպարտակի ուղեկիցների շրթունքների վրայ մի տխուր ժպիտ խաղաց:

Օքնոմանը գլուխը շարժեց ու յարեց.

— Սպարտակ, դու գելն ես տալիս⁴⁾:

¹⁾ Կապուկ—ճիւղոտ. կապոց:

²⁾ Վեր քաշուել—ժող.— սաստիկ զարմանալ:

³⁾ Ուռ. ժող.— առհասարակ ճկուն և փափուկ ճիւղոտ:

⁴⁾ Դելը տալ—ժող. զառանցել:

— Հարիւր ստժէնից աւելի երկայնութեամբ էլ սանդուղք, գոչեց Արտորիքսը, հաւատ չընծայելով:

— Ով որ սրտով մի բան կ'ուզի, պատասխանեց Սպարտակը, նրա համար անկարելի բան չկայ:

— Մենք հազար երկու հարիւր հոգի ենք և երեք ժամով կը գործենք այս սանդուղքը:

Ապա հրամայեց, որ չորս հարիւր գլադիատոր կացին վերցնեն, գնան հարեան անտառը և կտրատեն, ինչքան կարելի է շատ, ուռենու ճիւղտներ: Շուտով գլադիատորներն ուռերը ձեռքերին լետ դարձան: Սպարտակը ցոյց տրուեց թէ քնչպէս պիտի հիւսել, քնչպէս կապել իրար հետ սանդուղքի օղակները, և սկսեց աշխատանքը եռալ:

Երկու ժամով, մինչև արևի մայր մտնելը, արդէն պատրաստ էր հարիւր երեսուն ստժէն երկայնութիւն ունեցող սանդուղքը: Այն ժամանակ Սպարտակը հրամայեց լետ բացանել, որպէսզի անձամբ համոզուի, ամուր է թէ չէ: Մի ծայրից նա շօշափում և զննում էր ամեն մի օղակը, իսկ գլադիատորները ծալում էին տեսածը:

Երբ որ մութն ընկաւ, Սպարտակը հրամայեց կամաց կամաց բանակը վեր քաղել¹⁾, սակայն ամեն մի տասնեակ պարտաւոր էր կապել միասին իրանց զէնքերը, որովհետև իջնելու ժամանակ հնար չկար զէնքերով ծանրաբեռնուելու: Այս նպատակի համար շորի փալասներից մի երկայն թուկ գործեցին: Անդնդի յատակն իջնելուն պէս, ամեն մի տասնեակ այս թուկով իսկոյն պիտի ստանար իրան զէնքերը: Սանդուղքի մի ծայրից երկու մեծ քար կապեցին և սկսեցին փլուածքով վայր թողնել դէպի անյատակ վիհը: Այս ահագին քարերը կապելու միտքն այն էր, որ Սպարտակը կամենում էր սանդուղքի ամրութիւնը փորձել, և, բացի սրանից, անշարժ թողնել, որ իջնելու ժամանակ շատ չձօճուի:

Երբ ամեն բան պատրաստ էր ու խաւարն սկսեց սարը գրկել թեթև կերպով, Օքնոմանն առաջինը պատրաստուեց ներքև իջնելու: Գերմանացին ձեռքերը գցեց ժայռի ցցին, որից պինդ ամրացրած էր սանդուղքը և վհի վրայ կախ

¹⁾ Վեր քաղել-ժող. վերցնել, հաւաքել:

եղաւ: Փոքր ինչ գոյնը թռաւ, որովհետև այսպիսի անսովոր ճանապարհորդութիւնը դէպի անյատակ խորխորատը, նրա առաջը մի կատարելապէս նոր և անձանօթ վտանգ էր դնում:

— Սստուածների անունը վկայ, պարուհիներից ամենաթեթևաշարժն անգամ այնքան էլ սրտով չէր ցանկանալ տեղս բռնել, ասաց նա հանաքով:

Այս խօսքի հետ գերմանացու վիթխարի մարմինը կամաց կամաց սկսեց վիհն իջնել, մինչև որ, վերջապէս, բոլորովին անյատացաւ ժայռի ցցուած մասի այն կողմը: Սպարտակը, դէպի առաջ կռացած, աչքը չէր հեռացնում բարեկամից և դողդողալով հետևում էր սանդուղքի ամեն մի տատանումին:

Գլադիատորները, տախտի ափին խռնուած, աչքերը չէին հեռացնում անդնդից և այն ժայռից, որից պինդ կապած էր սանդուղքը: Բոլորն էլ խորին լռութիւն էին պահպանում, և գիշերային լռութեան մէջ լսում էր միայն հազար երկու հարիւր հոգու բուռն կերպով շունչ քաշելը, որոնց կեանքը և բախտն այն վայրկեանին կախուած էր ուռի մի թույլ հիւսուածքից:

Սանդուղքի դանդաղ, կանոնաւոր ձօճուելը ցոյց էր տալիս գլադիատորներին Օքնոմանի անցած աստիճանների թիւը: Այս տատանումը տեւեց մօտ երեք րոպէ, բայց նրանց երեք դարի չափ երեւաց: Վերջապէս շարժումն ընդհատուեց:

Այդ միջոցին, կարծէք զինուորական հրաման ստացած, բոլորն էլ ականջները դէպի անդունդը դարձրին և ուշքները լարած՝ անհամբեր սպասում էին: Անցաւ մի քանի վայրկեան: Ամբողջ տախտի վրայ ոչ մի ծպտուն, ոչ մի խշխշոց չէր լսում: Վերջապէս հնչեց նշան տալու ձայնը, նախ ցածր ու անորոշ, լետոյ քանի գնաց բարձր ու պարզ:

— Լ-ս-ի-ր: Լ-ս-ի-ր.....

Թեթևանալու խորին հառաչքը դուրս թռաւ միանգամից հազարաւոր կրճքերից, այս պայմանական նշան էր, ո-

րով Օքնոմանը միամտացնում էր, թէ յաջողութեամբ իջել է փլուածքի յատակը:

Այն ժամանակ սաստիկ աճապարանքով, կատարեալ լուռութիւն պահպանած, գլադիատորներն սկսեցին իրար յետեւից իջնել այս անսովոր ճանապարհով, որ հիմա, անկասկած, պիտի մահից դէպի կեանք դուրս հանէր, կատարեալ պարտութիւնից դէպի փառաւոր յաղթութիւն:

36 ժամի չափ տեւեց հիւսած սանդուղքից իջնելը և միայն երկրորդ օրուայ արշալուսին բոլոր գլադիատորները գտնուում էին փլուածքի յատակում:

Աւելորդ է պատմել այն գոհաբանութիւնները, որ կարգացին Սպարտակի գլխին այսպէս հրաշքով ուղիղ կորստից փրկելու համար: Բայց թրակիացին խնդրեց աղմուկ չանել և հրամայեց ամեն մի հարիւր զինուորի թագնուել հարեւան ժայռերի մէջ և գիշերուայ գալուն սպասել:

Երկար, անվերջ թուաց անհամբեր գլադիատորներին այս օրը. բայց, վերջապէս, արևն սկսեց խոնարհուել դէպի իւր մուտք և աղջամուղջը վրայ հասաւ: Գլադիատորների երկու կողորոհները դուրս եկան իրանց դարանից և շատ զգուշ ու լուռ գնացին զանազան ուղղութեամբ: Մէկը, Օքնոմանի ղեկավարութեամբ, գնաց դէպի Ալաւդիոսի բանակը, միւսը, Սպարտակի առաջնորդութեամբ, Մեսսալայի բանակը:

Երբ որ հռոմէական բանակին մօտեցաւ, թրակիացին կանգնեցրեց իւր կողորոհը և մենակ գնաց դէպի պատնէշը:

— Ո՞վ է եկողը, գոռաց պահակը, որ ինչոր խշխշոցի ձայն լսեց: Սպարտակը կանգնեց և ոչինչ չպատասխանեց:

Տիրապետեց լուռութիւն, որի ժամանակ հռոմայեցի զինուորն ուշադրութեամբ ականջ էր դնում. բայց լուռ ու հանգարտ էր չորս կողմն ամեն ինչ: Շուտով Սպարտակը լսեց գիշերապահի քայլերի ձայնը, որ շտապեց իմանալ, թէ բանն ինչո՞ւմն է:

Գիշերն այնպէս խաղաղ էր, որ թրակիացին լսում էր նրանց խօսակցութիւնը, թէպէտ շնչալով էին խօսում:

— Ի՞նչ պատահեց, հարցնում էր տասնապետը, որի հրա-

մանի տակ էր գտնուում գիշերապահը:

— Ինչ այնպէս թուաց, թէ այս այգուց աղմուկ եկաւ:

— Ո՞վ է եկողը» ձայն տալուց յետոյ բան լսեցիր:

— Ոչ, բան չլսեցի, ինչքան ականջ դրի:

— Հաւանական է, աղուէս է ընկել հաւերի յետեւից:

— Ես էլ եմ կարծում, որ որևէ գազան հանեց այն աղմուկը:

— Էհ, իհարկէ, բաս խօս գլադիատորները չէին լինիլ: Նրանք վերեն են և չեն փախչիլ մեր ձեռից:

— Ձեն փախչիլ: Ես լսեցի, որ մեր զօրավարն ասում էր, թէ մուկը ծուղակի մէջ է ընկել:

— Օ՛, լաւ իմանաս, որ այդպէս է: Ալաւդիոսը ծեր կտու է և այնպիսի մկնիկը, ինչպիսին Սպարտակն է, նրա ճանկերից չի փախչիլ:

— Ի՞նչ ասել կուզի: Ի՞նչ ասել կուզի:

Տիրապետեց նոր լուռութիւն: Սպարտակն անշարժ կանգնած էր թփի յետեւ և ժպտում էր հռոմայեցու այս տեսակ վստահութեան վրայ:

— Դէհ, ուրեմն, աչքդ բաց բռնիր և աղուէսներին գլադիատորների տեղ մի ընդունիլ:

— Չափազանց մեծ պատիւ կըլինէր գլադիատորների համար, ասաց պահակը ծաղրելով:

Դարձեալ թագաւորեց խաղաղութիւնը:

Մինչ այս, մինչ այն, Սպարտակը, մթութեան սովորած, գննեց հռոմայեցիների բանակի պատնէշները: Եւ երբ յարձակումն գործելու համար յարմար տեղ ջոկեց, վերադարձաւ դէպի իւր զօրքը և կամաց առաջ խաղացրեց: Բանակից բաւական կարճ տարածութեան վրայ՝ քայլերի աղմուկը պահակի ուշադրութիւնը իրանց վրայ դարձրեց:

— Ո՞վ է եկողը, գոռաց այնպիսի վրդովուած ձայնով, որ կասկած չկայ, որ այս անգամ գլադիատորներին աղուէսները տեղ չէր ընդունում:

Ոչ մի պատասխան չստացած՝ աղաղակեց.

— Ի՛ գէն:

Բայց գլադիատորները վազ տուին, թռան խրամատը

և անօրինակ արագութեամբ իրար ուսերը թռան, մի ակընթարթում բարձրացան պատնէշի վրայ ու սկսեցին ներքև թռչոտել հռոմէական բանակը:

Հռոմայեցիները քնած էին խոր քնով, իսկի չսպասելով թշնամիների յարձակման, որոնք, ինչպէս իրանք էին կարծում, փակուած էին Վեզուվի գագաթին ու անընդունակ էին խորտակել այն երկաթէ օղակը, որով կաշկանդել էին նրանց: Ուստի զարմանալի չէ, որ շշկուած՝ համարեա՞ ոչ մի ընդդիմութիւն չցոյց տուին գլադիատորների մօլեգին գրոհին, որոնք կատաղի հեղեղի պէս, ներս էին խուժել յետևի դռներից և աջ ու ձախ խողխողում էին սարսափահար, զինաթափ, քնաթաթախ զինուորներին:

Մի ըռպէից յետոյ հռոմէական ամբողջ բանակում լըսւում էին վիրաւորուածների հառաչանքներ, աղաղակներ, անէծք, աղաչանք, պաղատանք, ողբ ու կոծ: Այս պատերազմ չէր, այլ մի արիւնահեղ կոտորած, ուր պակաս քան կէս ժամում, չորս հարիւրից աւելի սպանուեցին, մնացածները սարսափահար՝ փախան զանազան ուղղութեամբ:

Քառասուն կտրիճից ոչ աւելի, Մեսսալայի առաջնորդութեամբ, կամենում էին կանգնեցնել գլադիատորների ճնշումը այն յուսով, որ իրանց օրինակին կըհետևեն փախստականներն ու կըմտնեն կռուի մէջ: Այս մի բուռը քաջերի առաջից կռոււմ էր ինքը Մեսսալան, սիրտ էր տալիս իւր օրինակով զինուորներին և հրաւիրում էր Սպարտակին սրերը փորձելու:

— Է՛յ, Սպարտակ, անարգ յափշտակիչների անզգամ պարագլուխ, ո՞ւր ես: Ո՞րտեղ ես թագնուել, կամ գուցէ չե՞ս յանդգնում ազատ քաղաքացու սրի հետ սուրդ խաղացնել:

Չնայած աղմուկներին, աղաղակներին, գոռում-գոչումին, սրերի շառաչիւնին՝ Սպարտակը լսեց հռոմայեցու լիրբ հրաւերը, և հզօր ձեռքերով ճեղքեց իւր զինուորների թանձր ամբոխն ու բացականչեց.

— Է՛յ, հռոմայեցի յափշտակիչ և յափշտակիչների զաւակ, յետ առ բոլոր հայհոյանքդ, այն աւելի քեզ սաղ կըգայ,

քան թէ ինձ: Դէ՛հ, շուն, ահա՛ և ես: Ի՞նչ ես ուզում:

Երկու հակառակորդները բարձրացրած սրերով յարձակուեցին իրար վրայ:

Կայծակի արագութեամբ հռոմայեցու հարուածը խափանելով՝ Սպարտակը խեց նրա ձեռքից վահանը և սաղաւարտին այնպիսի սարսափելի հարուած խփեց, որ խեղճը շշկուեց ու ընկաւ: Մահն անխուսափելի էր, բայց գլխին բռնած սուրը լետ քաշեց Սպարտակը և ասաց.

— Գնա՛, ջահիլ տղայ, և սլաոմիր բոլորին, թէ ինչպէս անարգ գլադիատորը կեանքդ քեզ շնորհեց:

Մի քանի ըռպէից յետոյ այն կտրիճները, որոնք փորձ էին փորձում դարձեալ ընդդիմանալ, համարեա՞ թէ բոլորը կոտորուեցին: Հռոմէական ամբողջ բանակը յաղթողների ձեռքըն ընկաւ: Այս դէպքի հետ միաժամանակ, սարի միւս կողմը, Կլաւդիոսի բանակում, գրեթէ նոյնը պատահեց: Այնտեղ Օքնոմանն իւր կոզորսով յանկարծակի և նետի պէս ընկաւ հռոմէական բանակի վրայ և սոսկալի արիւնհեղութիւնից յետոյ գրաւեց:

Այսպիսով Սպարտակի խորամանկութեան շնորհիւ հազար գլադիատոր ամենափառաւոր յաղթութիւն տարան հռոմէական երեք հազար զինուորի դէմ, որոնցից հազար հոգի ընկան պատերազմի դաշտում, մնացածներն էլ այս ու այն կողմը փախան ու գէնքերը, պաշարները և դրօշակները յաղթողներին թողին: Միւս օրը գլադիատորների երկու զօրախմբերը միացան Կլաւդիոսի բանակում:

Շատ հեշտ է երևակայել, թէ Սպարտակի նոր յաղթութեան լուրը որպիսի արագութեամբ տարածուեց Իտալիայի բոլոր քաղաքներում: Կապուալից, ուր գտնուում էր գլադիատորների ուսումնարանը, խմբերով գլադիատորներ էին փախչում թրակիացու բանակը: Քսան օրից յետոյ չորս հազարից աւելի եկան, այնպէս որ Սպարտակի իշխանութեան տակ արդէն մօտ վեց հազար հոգի կար:

Չնայած որ հռոմում աւելի կարևոր գործերով էին զբաղուած, սակայն Կլաւդիոսի պարտութիւնը խօսակցութեան

նիւթ դարձաւ: Թէ ժողովրդին և թէ ծերակոյտին հաւասարապէս ամօթալի էր թւում հռոմէական անուան պատուի համար, որ ամբողջ աշխարհը նուաճող զինուորները պարտութիւն են կրում ստրուկներէց:

Այն ինչ գլադիատորները մօտակայ Նոլլա քաղաքն ուղեւորուեցին ու պահանջեցին, որ կամովի անձնատուր լինին, բնակիչներին ու իրանց ստացուածքին կատարեալ ապահովութիւն խոստանալով:

Անկոչ հիւրերի երևան գալուց վախեցած, քաղաքի բնակիչները հաւաքուեցին հրապարակ ու սկսեցին վիճել, թէ ի՞նչ անեն: Մի քանիսն առաջարկում էին անձնատուր լինել, բայց մեծամասնութիւնը համաձայն չէր և վճռեց մինչև վերջին շունչը դիմադրել:

Նրանք սուրհանդակներ ուղարկեցին Հռոմ և ուրիշ քաղաքներ ու անմիջական օգնութիւն պահանջեցին: Բայց բոլոր այս սուրհանդակներն Սպարտակի ձեռքն ընկան: Իսկ քաղաքի բնակիչները, որ գէնք գործ չածելուց՝ խամացել էին, մի ժամ էլ չկարողացան ընդդիմանալ գլադիատորների գրոհին և քաղաքն առնուեց: Գլադիատորները ընդդիմադրութեան պատճառով զրգուռած՝ սկսեցին կոտորել և կողպտել:

Թէև Սպարտակն իւր զինուորներին խստիւ հրամայել էր, որ մեղմ վարուին յաղթուածների հետ, և թէպէտ նրա խօսքը սուրբ էր բոլոր գլադիատորների համար, բայց այնուամենայնիւ նրանք չկարողացան զսպել իրանց, ինչպէս չէ կարող զսպել ոչ մի զինուոր արեան և կործանելու այն տենդալին ծարաւի դէմ, որով համակուծ է նա, երբ դիմադրութեան է պատահում. սեպհական կեանքը վտանգի է ենթարկում և ականատես լինում ընկերների մահին:

Սպարտակն ընկաւ քաղաքի փողոցներն ու բոլոր ջանքերը գործ դրեց, որ արգելք լինի արիւնհեղութեան և յափշտակութեան: Իւր օգնականների շնորհիւ վերջապէս յաջողուեց կարգը վերականգնել: Շուտով փողերի ձայնը գլադիատորներին սկսեց քաղաքային հրապարակ հրաւիրել:

Երբ որ բոլորը կարգ կանգնեցին, Սպարտակն առաջ եկաւ և խորին լռութեան մէջ յայտարարեց ընկերներին, որ չէ կամենում աւազակներին ու յափշտակիչներին կռավարիչ լինել, որ նրանց կանչել է ազատութիւն ձեռք բերելու համար, այլ ոչ յափշտակութեան համար, և թէ առանց դրան էլ արդէն իրանց գողեր ու մարդասպաններ են անուանում և, եթէ իրանց արարքներով հաստատում են այս կոչումը, ապա շուտով ոչ ոքից էլ ո՛ւրիշ անուն չեն ստանալ:

Գլուխները ցածր կռացրած՝ լսում էին գլադիատորներն իրանց զօրապետի այս արդարացի յանդիմանութիւնը: Եւ որքան երկարում էր նրա պարգ, բայց վառվռուն ճառը՝ զօրքի շարքերում յաճախակի հնչում էին զղջման և ցաւակցութեան բացականչութիւնները: Վերջապէս էլ չհամբերեցին գլադիատորները, առաջ եկան, շրջապատեցին Սպարտակին, ձերքերը համբուրելով աղաչանք, պաղատանք արին, որ ների իրանց, ու խոստացան, որ միւս անգամ նրա խօսքը գետինը չեն գցիլ:

Սպարտակը երկու ամիս մնաց Նոլլայի տակ և այս ժամանակամիջոցում շարունակ պատերազմական արուեստ սովորեցրեց իւր զինուորներին, որոնց թիւն արդէն ութ հազարի էր հասել:

Երկրորդ ամսի վերջերին անսպասելի կերպով օգնական զօրք հասաւ նրան Հռոմից: Հռոմում մնացած Սպարտակի ընկերներից մէկին, գալլ ¹⁾ Կրիստոսին, յաջողուեց երկու հա-

¹⁾ Գալլ—գաղղիացի:

զար գլադիատոր ժողովել և չնայած ամենաարթուն հսկողութեան, որին ենթարկում էին գլադիատորների ուսումնարաններն ամբողջ Իտալիայում, ծածուկ դուրս բերեց նրանց քաղաքից և Սպարտակի մօտ հասցրեց:

Մեծ էր բոլոր զօրքի ուրախութիւնը, մանաւանդ զօրապետինը, երբ Կրիստոսին տեսաւ, որին սիրում էր եղբօր պէս: Նորեկներն իսկոյն զինուեցին և միւս երեք հազար զինուորների հետ կազմեցին երկրորդ լէգիօնը, Կրիստոսի հրամա-

նատարութեամբ: Առաջին լէգիոնը ղեկավարում էր գերմանացի Օքնոմանը: Սպարտակն ընդհանուր ցնծութեամբ և ուրախութեամբ նորից բոլոր զօրքի գլուխ, սպարապետ ընտրուեց:

Կրիստոսի գալուց երկու օր յետոյ՝ տեղեկաբերները հաղորդեցին Սպարտակին, որ Հռոմից արշաւում է նրանց վրայ ահագին զօրք, յայտնի զօրավար Վարինիոսի հրամանատարութեամբ:

XI.

Վարինիոսը փորձուած զօրավար էր, 25 տարի հռոմայեցիների զօրքում ծառայած: Նրա զօրքը կազմուած էր ութ հազար երիտասարդ, ուժեղ և գեղեցկապէս զինուած հետեակ ու հեծեալ զինուորներից: Գլադիատորների բանակի մասին ամենաճիշտ տեղեկութիւններ հաւաքեց ու վճռեց զօրքը երկու մասի բաժանել և երկու ճանապարհով տանել, որպէս զի միաժամանակ երկու կողմից յարձակուի գլադիատորների վրայ:

Զօրքի մի մասը Փուրիոսի առաջնորդութեամբ գլադիատորների վրայ պիտի ընկնէր ճակատից, այն ժամանակ երբ ինքը թշնամուն պիտի զարկէր քամակից: Նա յոյս ունէր այսպիսով վերջնականապէս ջախջախել գլադիատորներին: Այս նախագիծը շատ լաւ էր, բայց միայն այն դէպքում, եթէ Սպարտակը բանակը չթողնէր ու չտեղափոխէր: Բայց Վարինիոսը Սպարտակին համարում էր անարգ ստրուկ, պատերազմական որևէ նախատեսութեան միանգամայն անընդունակ:

Այն ինչ թրակիացին երբ իմացաւ, որ Վարինիոսը զօրքը երկու մասի է բաժանել և զանազան կողմեր է ուղղել, իսկոյն հասկացաւ նրա մտադրութիւնը: Առանց մի րոպէ ուշանալու՝ նա որոշեց մէջ տեղից յարձակուել երկու զօրախմբերի վրայ և, մինչև միանալը՝ ջարդել իրար յետևից:

Սպարտակի ամենանշանաւոր յատկութիւններից մէկը, իր-

ըն զօրավարի, այն արագութիւնն էր, որով կշռում էր իւր դրութեան հանգամանքները. հաշուում, գլխի էր ընկնում, ինչ որ հարկաւոր էր անել, և անյապաղ իրագործում էր իւր վճիռները: Այնպէս վարուեց և հիմա: Կարճ ճառախօսութեամբ ոգևորեց իւր ընկերներին և ուղևորուեց նեղ, դժուար ճանապարհներով դէպի թշնամին:

Երկու օրից յետոյ գլադիատորներն ամուր դիրք բռնեցին ուղիղ այն ճանապարհի վրայ, որտեղից Փուրիոսը պիտի անցկենար իւր զօրքով: Հէնց որ արեգակը դուրս եկաւ ու ծիրանեզոյն ճառագայթներով լուսաւորեց արտերն ու կանաչ այգիները, հռոմէական զօրքն երևաց բլուրների լեռներից: Ժամանակ չտալով, որ զինուորական կարգ կանգնեն՝ գլադիատորներն ընկան իրանց հակառակորդների վրայ ամեն կողմից: Հռոմայեցիները պաշտպանուում էին քաջութեամբ և լուսահատական կատաղութեամբ: Ամբողջ դաշտում հնչում էր իրար զարկուող վահանների կոփիւնը, սրերի շառաչիւնը և պատերազմողների վայրենի աղաղակները:

Կէս ժամի չափ երկու կողմից էլ կռուում էին միատեսակ քաջութեամբ և արիութեամբ: Բայց հռոմայեցիները շատ քիչ էին գլադիատորների համեմատութեամբ, ուստի և երկար չկարողացան դիմադրել նրանց մոլեգին գրոհին: Ամեն կողմից հարուածուած՝ Փուրիոսի զինուորներն սկսեցին լեռ գնալ ու փախուստ տուին խառն՝ խռռն: Սակայն քչերն ազատուեցին: Ամեն կողմից սրերի զարհուրելի օղակով շրջապատուած, համարեա՞ թէ բոլոր հռոմայեցիներն սպանուեցին: Սպանուածների թւումն էր և Փուրիոսը:

Զօրքին մի քանի ժամ հանգիստ տալուց յետոյ՝ Սպարտակն առաջ խաղաց Վարինիոսի յանդիման: Մի օրից յետոյ տեղեկաբերները հաղորդեցին հռոմայեցիների մօտենալու մասին և նա զօրքը զինուորական կարգով դասաւորեց ու նետի պէս թշնամու վրայ յարձակուեց:

Սոսկալի և արիւնահեղ էր ճակատամարտը, որ տևեց մի ամբողջ օր: Հռոմայեցիները դիմադրում էին անօրինակ քաջութեամբ, բայց եռապատիկ աւելի ուժեղ թշնամով շրք-

ջապատուած, արեւամտին յետ նահանջեցին անկանոն կերպով: Գլադիատորները նոր ուժով գրոհ տուին և շուտով նահանջումը փախստի փոխուեց: Սպարտակը ձիաւորներին հրամայեց, որ փախչողներին հալածեն: Երկու հազարից աւելի հռոմայեցի ընկան այս ճակատամարտում, մէկ ու կէս հազար վիրաւորուեցին: Շատերն էլ գերի ընկան, բայց Սպարտակը զինաթափ արաւ ու բաց թողեց:

Գլադիատորների կորուստն այս պատերազմում բաւականին աննշան էր. ութսուն հոգի պակասեց միայն ընդհանուր թուից:

Յուսահատութեամբ լցուած Վարինիոսը սկսեց ժողովել իւր ջարդուած զօրքի մնացորդները, բայց Փուրիոսի պարտութեան լուրն առաւ թէ չէ, արագ ուղևորուեց դէպի Հռոմ՝ անիծելով գլադիատորներին և դժոխքի ու դրախտի բոլոր աստուածներին:

Հռոմայեցիների դէմ այս տեսակ երկու փառաւոր յաղթութիւն վաստակած՝ Սպարտակը ճանապարհ ընկաւ դէպի Կապուա, որ կարողանայ ազատել հինգ հազար գլադիատորներին, որոնք դեռ ևս փակուած էին դպրոցում:

Քաղաքի պարիսպների մօտ բանակ դրեց ու դեսպաններ ուղարկեց ծերակոյտին, որ ազատ թողնեն իւր կալանաւորուած ընկերներին: Իդէպս, եթէ չկատարեն այս պահանջը, Սպարտակը սպառնում էր քաղաքն առնել յարձակմամբ, կրակի ու սրի մատնել և խողխողել բոլոր բնակիչներին՝ խտիր չդնելով սեռի ու հասակի մէջ:

Թրակիացու յաղթութիւնների լուրն արդէն Կապուա էր հասել և բոլոր քաղաքացիների սիրտն ահ ու սարսափ գցել:

Ուստի, ծերակոյտի անդամները, Սպարտակի պահանջն ու սպառնալիքները լսելուն պէս, վճռեցին կատարել նրա ասածը: Բերդապետն իզուր սկսեց բացատրել վախեցած անդամներին, թէ թրակիացու սպառնալիքները ոչ ալ ինչ են, եթէ ոչ դատարկ պարծենկոտութիւն, որ յենում է մթնոլորտի տգիտութեան և վախկոտութեան վրայ: Նա ապացուցա-

նում էր, թէ քաղաքը յարձակմամբ առնելու ոչ մի հնար չկայ, որ պաշտպանուած է այսպիսի բարձր պարիսպներով, և թէ գլադիատորները երբէք սիրտ չեն անիլ այդպիսի քաջանելու, որովհետեւ անմտութիւն կրլինէր այդ նրանց կողմից: Բայց երկիւղը կատարելապէս պաշարել էր ծերակոյտի անդամների խելք ու միտքը և զրկել բերդապետի խօսքերի ճշմարտութիւնը հասկանալու ընդունակութիւնից: Նրանք միանգամից վեր թռան տեղերից ու սկսեցին գոչել, թէ բերդապետը խելագարուել է, թէ երբ գլադիատորներն առնում էին Նոլլան, աւելի քիչ զօրք ունէին, և աւելի վատ էին սպառազինուած, սակայն այս բանն արգելք չեղաւ երկու ժամուայ ընթացքում քաղաքն առնելուն և հրի ու սրի մատնելուն, թէ մտադիր չեն բերդապետի քմահաճութեան համար կործանել, քարուքանդ անել տալ իրանց տները և կոտորել տալ իրանց գերդաստանը. թէ մինչև անգամ շատ լաւ և ապահով կրկին քաղաքի համար բաց թողնել հինգ հազար գլադիատորներին, որոնց հարկաւոր է շարունակ ուշիուշով հսկել, աչք դնել:

Այսպիսով հինգ հազար հոգին, որ փակուած էին ուսումնարանի պարիսպների մէջ, դուրս վազեցին քաղաքից ու անմիջապէս ուղևորուեցին Սպարտակի բանակը: Այստեղ նրանց դիմաւորեցին աննկարագրելի հրճուածքով, անյապաղ զինեցին ու կազմեցին երրորդ լէգիոնը:

Նոլլայի տակ բանակը դառնալուն պէս՝ Սպարտակն ապշեց անսպասելի նոր լրիւք. իւր քօյր Միրցան եկել էր: Թրակիացին գրկեց նրան և, ուրախութեան արտասուքն աչքերին, ծածկեց քրոջ երեսը համբուրներով: Մատաղահաս աղջիկն իւր կարգին համբուրում էր եղբօր շորերը, ձեռքերը, երեսը և կրկնում սրտասուքի խեղդուելով:

— Օ՛, Սպարտակ, օ, իմ սիրելի: Ի՞նչքան տանջուել եմ քո պատճառով: Ի՞նչպէս վախենում էի: Այն օրից երբ որ սկսուեց այս սարսափելի պատերազմը, մի րոպէ հանգիստ չեմ եղել: Միշտ միտք էի անում. «ով է իմանում վիրաւոր-

ուած ես, ո՞վ է իմանում քեզ հարկաւոր եմ...»: Որովհետեւ, սիրելի Սպարտակ, ոչ ոք չէր կարող քեզ վրայ այնպէս հոգս քաշել, եթէ այդ բանը պատահէր...:

— Եւ միշտ լաց էի լինում ամբողջ օրերով, խնդրում էի իմ բարի տիրուհուն, որ թող տայ ինձ քեզ մօտ գալ... ու նա թող տուէր: Իւպիտերը թող պահապան լինի այն բարի կնոջը յաւիտեանս յաւիտենից...: Նա ինձ բաց թողեց ու ազատութիւն տուէր:

— Ձէ որ ես այլեւս ստրկուհի չեմ, Սպարտակ, և կարող եմ մօտդ մնալ յաւիտեան:

Այս մանկական թոթովանքի ժամանակ երիտասարդ աղջիկը մերթ լալիս էր, մերթ ժպտում եղբօր երեսին:

Նույնպի տակն Սպարտակը կանգ առաւ ամբողջ ամիս, միշտ ուսուցանելով ստրուկների նորեկ խմբերին, որոնք թափւում էին նրա մօտ Իտալիայի ամեն քաղաքից:

Այս միջոցներում հռոմայեցիները գլադիատորների դէմ երեսուն հազար հոգուց բաղկացած նոր զօրք ուղարկեցին, որի ղեկավարութիւնը յանձնեցին Օրէստին: Բայց այս վերջինն էլ երջանիկ չէր իւր նախորդներից: Սպարտակը շրջապատեց նրան և հռոմայեցիները կատարեալ պարտութիւն կրեցին: Եօթ հազար հոգի ընկան պատերազմի դաշտում և չորս հազար էլ գերուեցին:

XII

Երբ որ Օրէստի պարտութեան լուրը Հռոմ հասաւ, խորին տրամուլիւնը տիրապետեց քաղաքի բնակիչներին: Հռոմայեցիները տեսան, որ գործ ունին ոչ թէ ստրուկների ողորմելի ապստամբութեան հետ, այլ կատարեալ, այն էլ վտանգաւոր պատերազմի հետ: Արգարեւ, նրանք պիտի խոստովանէին, որ Սպարտակը չափազանց ճարտար զօրավար է, որ կարողանում է թշնամու ամենափոքրիկ անզգուշութիւններից օգտուել, իսկ զինուորի կարիք, պակասութիւն չի ունենալ հէնց միայն այն պատճառով, որ Իտալիայում շատ միլիօն ստրուկներ կան: Ուստի ծերակոյտը վճռեց պատե-

րազմի վարումը յանձնել երկու հիւպատոսներին¹⁾: Բայց նախ քան պատերազմը շարունակելը, ծերակոյտը որոշեց բանակցութիւնների մէջ մտնել Սպարտակի հետ: Սակայն այս բանը ծալրայեղ դժուար էր. մի կողմից բանակցութիւն սկսել կարող էր միայն շատ հմուտ անձը, իսկ միւս կողմից ծերակոյտը Հռոմի պատուի համար վերաւորական էր համարում բարձրաստիճան մարդ ուղարկել ստրուկների հետ բանակցելու, որովհետեւ, նրանց կարծիքով, ստրուկները, մինչև անգամ արժանի չէին մարդ անունը կրելու: Սակայն և այնպէս հիւպատոսներից մէկը, Լուկուլլոսը, որոշեց ստրուկների բանակը գնալ կեղծ անունով:

Նոր յաղթութիւնից մի ամիս յետոյ, Սպարտակը բանակ էր դրել Վեգուվի մօտ: Նոր էր վերադարձել զօրախաղերից, որ յանկարծ յայտնեցին, թէ հռոմայեցիների ծերակոյտի դեսպանը թույլատրութիւն է խնդրում տեսնուել նրա նետ:

— Օ՛, երգւում եմ Իւպիտերի անունով, բացականչեց Սպարտակը և աչքերը պսպղացին անասելի ուրախութեամբ, — հռոմայեցիների հպարտութիւնը չափազանց կտրուել է, որ ծերակոյտը չէ ամաչում անարգ գլադիատորի հետ բանակցութիւն սկսել:

Ապա դարձաւ տասնապետներից մէկին և ասաց.

— Հետզ առ մի քանի հոգի և այստեղ բեր հռոմայեցուն:

Մի քանի րոպէից յետոյ ծերակոյտի դեսպանին և իւր չորս ուղեկիցներին, կապած աչքերով՝ բերին Սպարտակի վրանը:

— Ողջոյն քեզ, Սպարտակ, խօսեց դեսպանը, գլադիատորների պարագլխին բարեւելով:

— Ողջոյն և քեզ հռոմայեցի, պատասխանեց Սպարտակը:

— Կամենում եմ քեզ հետ խօսել առանձին:

— Լաւ, կըխօսենք առանձին, ասաց Սպարտակը և բոլորին

¹⁾ Հիւպատոսներն ընտրւում էին ամեն տարի, և նրանց էր պատկանում ամբողջ տէրութեան ու զօրքի բարձրագոյն իշխանութիւնը: Սովորաբար հիւպատոսներն արշաւանք էին գնում այն դէպքում, երբ տէրութեանը լուրջ վտանգ էր սպառնում:

հրամայեց հեռանալ: Երբ որ մենակ մնացին, հռոմայեցին, Սպարտակի հրաւերի համեմատ, աչքերի կապը լետ արեց և չորս կողմը նայելով, չկարողացաւ զարմանքը չարտայայտել բարձրաձայն:

Նա չէր սպասում, որ այստեսակ կարգ ու կանոն կըտեսնի ստրուկների բանակում:

— Երգւում եմ Իւպիտերի անունով, որ դու գլադիատոր լինելու համար չես ծնուել:

— ձիշտ այսպէս նաև այն եօթանասուն հազար թըշուառները, որոնց բանակը տեսնում ես առաջիդ: Հէնց այսպէս նաև այն միլիօնաւոր ազատ մարդիկ, որոնց դուք ստրուկ էք շինել:

— Ստրկութիւնը գոյութիւն ունէր վաղ ժամանակներից, պատասխանեց հռոմայեցին: Իւր բնութեամբ մարդը մարդուն՝ գալլ է: Հաւատա՞ ինձ, Սպարտակ, քո սկսած գործը սուրբ է և առաքինի, որպէս և քո հօգին, բայց երբէք չի իրագործուիլ: Քանի որ մարդիկ գոյութիւն ունին աշխարհիս վրայ, միշտ կային և կըլինին՝ ազատներ և ստրուկներ:

— Ո՛չ, գոչեց Սպարտակը տաքացած, միշտ չէր ալդպէս: Երբ ամեն մէկն աշխատում էր իւր հողի վրայ և ապրում իւր ձեռքի աշխատանքներով՝ բոլորն էլ հաւասար էին և երկրի վրայ չկային ո՛չ տէրեր, ո՛չ ստրուկներ: Եթէ մինչև անգամ ենթադրենք, ինչպէս դու ես մտածում, որ մարդոց միջի անհաւասարութիւնն անխուսափելի է, մթթէ սրանից հետևում է, թէ ոմանք պիտի միւսների ստրուկը լինին: Մթթէ անհրաժեշտ է, որ յաղթողները զուարճանան գլադիատորների կոտորածների տեսարանով: Արեան այս գազանային ծարաւը, գուցէ, նոյնպէս արդարացի է և աստուածներից հրամայուած:

Բաւական երկար լուծիւն տիրապետեց, որի ժամանակ հռոմայեցին խօսք չէր գտնում թրակիացուն պատասխանելու: Սպարտակն առաջինը ընդհատեց այն.

— Ինչու համար ես եկել, հարցրեց նա հռոմայեցուն:

— Ես Կայոս Ռալլան եմ, հռոմէական ազնուական և ու-

ղարկուած եմ քեզ մօտ Լուկուլլոս հիւպատոսից երկու առաջարկութեամբ:

Սպարտակը հազիւ նկատելի կերպով ժպտաց ու հարցրեց.

— Ո՞րն է առաջինը:

— Բաց թողնել, յայտնի փրկանքով, մեր այն գերեալներին, որոնց բռնել ես վերջին ճակատամարտի ժամանակ:

— Ես համաձայն եմ բաց թողնել ձեր չորս հազար գերիներին, եթէ դուք նրանց փոխարէն ինձ տաք տասը հազար լաւ սուր և տասը հազար վահան:

— Ի՞նչպէս, բացականչեց հռոմայեցին, դու պահանջում ես, որ մենք ինքներս քեզ այս զէնքը տանք, որով պիտի կռուես մեր դէմ:

— Այո՛, այո՛, և նախագգուշացնում եմ, որ այդ զէնքերը ամենալաւ տեսակիցը լինին, ձեր սեպհական գործարաններում պատրաստած, որովհետև նրանցով երկու նոր լէգիօն պիտի զինեմ:

— Երգւում եմ Իւպիտերի անունով, գոչեց հռոմայեցին կատաղութիւնից իրան կորցրած, երևի ինքդ չես իմանում, թէ ի՞նչ ես ասում: Զէնք չես ստանալ, կրկնում եմ, չես ստանալ: Մօտդ պահիր քո գերիներին:

— Լաւ, պատասխանեց Սպարտակը հանդարտութեամբ, այդ լետոյ կըտեսնենք: Իսկ այժմ պատմիր, ինչո՞ւմն է կայանում Լուկուլլոս հիւպատոսի երկրորդ առաջարկութիւնը:

Գեսպանը մի քիչ ժամանակ լուռ էր, աշխատելով հանդարտուել:

Վերջապէս խօսեց մեղմ, մարդահասճ ձայնով.

— Հիւպատոսը յանձնարարեց ինձ առաջարկել քեզ, որ պատերազմը դադարեցնես:

— Տես թէ ի՞նչ, զարմացաւ Սպարտակը:— Ե, ի՞նչ պալմաններով:

— Ծերակոյտը քեզ հռոմէական ազնուականութիւն կըշնորհի, թոյլ կըտայ հռոմայեցի աղջկայ հետ պսակուել, որի հետ կըցանկանաս, իսկ լետոյ քեզ է մնում ընտրել. եթէ ամիկենում ես աչքի ընկնող գործեր կատարել զինուորական

ասպարէզում, կարող ես իբրև զօրավար պատերազմ գնալ հարևան ազգերի դէմ: Իսկ եթէ կամենում ես խաղաղ, ընտանեկան երջանկութիւն, քեզ նահանգապետի տեղ կըտան հռոմայեցիների հպատակ քաղաքներից մէկում: Քեզ հետ կըլինի նաև քո քոյր Միրցան:

Սպարտակը վերկացաւ: Նա գունատ էր, արհամարհական ժպիտը ծոմաւոր էր նրա շրթունքները, սպալուն աչքերն լաւել էին հռոմայեցու վրայ:

Երկար լուռութիւնից յետոյ, վերջապէս, հարցրեց համարեա՞ շնջալով:

— Իսկ իմ ընկերները:

— Պիտի գէնքը վայր դնեն և ցրուեն. ստրուկները՝ իրանց տէրերի մօտ, գլադիատորները՝ ուսումնարանները:

— Եւ..... բոլորը վերջացած է, ասաց Սպարտակը, ամեն մի խօսք կամաց արտասանելով:

— Ծերակոյտը պատրաստ է ամեն ինչ մոռանալ և ներել:

— Մեծապէս շնորհակալ եմ նրանից, ազադակեց Սպարտակը ծաղրելով: Ո՛րքան վեհանձն, որքան ողորմած ու զթած է ձեր ծերակոյտը:

— Ի՞նչպէս, յարեց հռոմայեցին հպարտութեամբ: — Ծերակոյտը պիտի խաչէր բոլոր այս խռովարար ստրուկներին, իսկ զրա փոխանակ ներում է նրանց, և այս քիչ է քեզ համար:

— Օ՛, ընդհակառակը, շատ շատ է: Ծերակոյտը ներում է յաղթական թշնամուն: Այդ իսկ որ վեհանձնութիւն է:

— Ուրեմն դու բան չես համարում այն պատիւը, որ տալիս է քեզ ծերակոյտը, բարբարոսիդ և անարգ գլադիատորիդ հռոմէական նահանգապետ նշանակելով:

Բոպէական լուռութիւնից յետոյ՝ Սպարտակը խօսեց դառնութեամբ:

— Այսպէս ուրեմն, ամբողջ ութ տարի աշխատեցի մեծ, արդար, սուրբ և առաքինի գործի համար, ամեն տեսակ վտանգների ենթարկելով իմ անձը. ազատութեան զրօշակի տակ ժողովեցի եօթանասուն հազար իմ թշուառ ընկերներին. քանի՞ քանի՞ անգամ դէպի յաղթութիւն առաջնորդեցի

նրանց, և բոլորը նրա համար, որ մի գեղեցիկ տաւառ աւեմ. մեր յաղթութիւնները՝ յաղթութիւն չեն, այլ պարտութիւն, այն ազատութիւնը, որի համար կանչել եմ ձեզ այստեղ՝ դատարկ խօսք է: Դարձէք ձեր տէրերի մօտ և նորից վզերդ լծի տակ զրէք, իսկ մէջքերդ՝ մտրակի:

Երկուսն էլ լուռ էին փոքր ժամանակ: Յետոյ Սպարտակը ցածր ձայնով հարցրեց հռոմէական դեսպանին.

— Ե՛, բայց թնչ կասես, եթէ գլադիատորները չլսեն իմ խնդիրը և խորհուրդները ու չկամենան ցրուել:

— Այն ժամանակ, ասաց դեսպանը ծանր և կապ ընկնելով ու աչքերը ցածրացրած, այն ժամանակ.... այնպիսի հմուտ զօրավարի համար, ինչպէս դու ես.... գթուար չի լինիլ, — չէ՞ որ կանես այս, իսկապէս նրանց օգտի համար.... — զօրքերը վտանգաւոր տեղեր տանել:

— Որտեղ Լուկիլլոս հիւպատոսը, խօսեց Սպարտակը կատաղութիւնից շրթունքները կրծոտելով, — կ'ըստասի նրանց իւր լէգիօներով, կըշռապատի ու կըստիպի, կամայ ակամայ գէնքերը վայր դնել, և մինչև անգամ իրան կըվերադրի այս թեթև յաղթութեան պատիւը: Ախր այդպէս է: Պատասխանիր....

Հռոմայեցին գլուխն աւելի ցածրացրեց ու լռեց:

— Պատասխանիր, չէ՞ որ այդպէս է, գոչեց Սպարտակը որոտաձայն, որից վեր թռաւ իւր խօսակիցը: Նա աչքերը բարձրացրեց Սպարտակի վրայ, բայց սրա դէմքը այնպիսի վայրենի մոլեգնութիւն էր ցոյց տալիս, որ, ակամայ չեա գնաց մի քայլ:

— Օ՛, բացականչեց թրակիացին, ազատ ասպարէզ տուած վերջապէս իւր կատաղութեանը. — շնորհակալ եղիր երկնքի բոլոր աստուածներից, որ անարգ գլադիատորը կարողանում է յարգել դեսպանների սրբազան իրաւունքները: Ստոր և լիրբ մարդ, ինչպէս լիրբ և ստոր են քո ծերակոյտը և պատրիկները¹⁾: Դու եկել ես ինձ առաջարկելու, որ դաւաճանեմ իմ զօրքին. դաւաճանութիւն ամենագարշելի, որ միայն կա-

¹⁾ Պատրիկ լատ. մեծ, իշխանաւոր:

րող է մարդ երեւակայել: Դու չամաչեցիր լրբութեամբ հասնել այն բանին, որին չես կարող հասնել գէնքի զօրութեամբ:

— Ե՛յ, բարբարոս, աղաղակեց գեսպանը բարկութեամբ. երկու քալ յետ գնաց ու հպարտ հայեացք գցեց Սպարտակի վրայ. — Երեւի մոռացել ես, թէ ո՛ւմ հետ ես խօսում:

— Ոչ, Լուկուլլոս, հիւպատոսդ հռոմայեցիների, դու ես մոռացել, որտե՞ղ ես և ո՛ւմ հետ ես խօսում: Կարծում էիր քեզ չե՞մ ճանաչիլ: Անարգ: Կեղծ անուան տակ թագնուած եկել ես, որ ցածութեամբ հրապուրես գէպի դաւաճանութիւն, կարծելով որ, քեզ նման ես էլ ընդունակ եմ ամեն տեսակ ստորութեան ու լրբութեան: Գնա՛, դարձիր Հռոմ, նոր զօրքեր հաւաքիր և արի՛ բացարձակ կուռւմ ուժերս փորձենք: Այնտե՛ղ, եթէ միայն քաջութիւն կ'ունենաս հետս կանգնել գէ՛մ յանդիման, ինչպէս որ այժմ ես կանգնած, այնտեղ կըտամ քեզ քո գարշելի առաջարկութիւնների արժանի պատասխանը:

— Բայց մի՞թէ, յիմար, թշուառ, պատասխանեց հիւպատոսը արհամարհանքով, մի՛թէ յոյս ունիս երկար զիմադրել մեր լէգիոնների գրոհին: Մի՛թէ կարծում ես թէ վերջնականապէս կըջախջախես Հռոմի բախտը և հզօրութիւնը:

— Ես յոյս ունիմ դուրս հանել Իտալիայից և հայրենիք վերադարձնել իրաւագոյնի ստրուկների այս խմբերը, և այնտեղից ոտքի կանգնեցնել ձեր գէ՛մ բոլոր ճնշուած ազգերին, պատասխանեց Սպարտակը:

Ապա հրամայողական շարժումով պատուիրեց, որ հիւպատոսը հեռանայ:

— Լսիր, հիւպատոսդ հռոմէական, ասաց թրակիացին, երբ որ առաջինս շուռ էր եկել, որ գնայ. — Որովհնաւ ինձ յայտնի է, որ վերջին պատերազմում ձեզ մօտ գերի ընկած բոլոր զինուորներիս խաչել էք, ուստի նախազգուշացնում եմ քեզ, որ եթէ քսան օրուայ ընթացքում չէք բերիլ պահանջա՛ծս գէնքերը, ապա լա՛ւ իմացէք, որ ձեր չորս հազար զինուորներին, որոնք մօտս գերի են, նմանապէս կըխաչեմ:

— Ինչ՞պէս, ... Ինչպէս կըլանդգնես... բացականչեց հիւ-

պատոսը սփրթնած:

— Ամեն բան ներելի է անել այն մարդոց, ինչպիսին դուք էք, գոռաց Սպարտակը: Այժմ գնա՛:

Մենակ մնալով, թրակիացին յետ ու առաջ սկսեց քալել իւր վրանում, մռայլ և ծանր մտածմունքների մէջ ընկըմունած: Մի քանի ժամից յետոյ մօտը կանչեց Կրիստոսին, Օքնոմանին և իւր լէգիոնների միւս առաջնորդներին. պատմեց հռոմայեցիների հիւպատոսի գալուստն իւր բանակը և տեղի ունեցած խօսակցութիւնը:

Բոլոր զլազիատօրները ջերմաջերմ շնորհակալութիւն յայտնեցին Սպարտակին նրա հաստատ և ազնիւ վարմունքի համար ու գնացին ամենախորին յարգանքով և անձնուիրութեամբ համակո՛ւած գէպի իրանց սպարապետը:

XIII.

Սպարտակի զօրքն աւելանում էր ոչ թէ օրէցօր, այլ ժամ է ժամ: Շուտով նրա զրօշակի տակ կար 70 հազար հետևակ և 8 հազար հեծելազօր: Գլազիատօրների զօրքի առաջնորդներից շատերը մանաւանդ Օքնոմանը, այս ուժերով կարելի էին համարում առաջ խաղալ Հռոմի վրայ և վերցնել յարձակմամբ:

Բայց Սպարտակը շատ լաւ էր հասկանում, որ Հռոմի վրայ արշաւելը կորուստ էր ամբողջ գործի համար: Արդէն քանի քանի անգամ այն ժամանակուայ երեւելի զօրավարները, քառապատիկ ուժեղ զօրքերով փորձել էին առնել այս քաղաքը յարձակմամբ և միշտ պարտութիւն էին կրել: Հռոմայեցիների հետ վարած պատերազմը լոկ այն գէպքում կը լինէր յաջողակ, եթէ որ Սպարտակը Իտալիայից կարողանար հիւսիս գնալ զօրքի հետ և ոտքի կանգնեցնել այն բազմութիւն ազգերին, որոնք հեծեծում էին հռոմայեցիների տաժանելի լծի տակ: Միայն միացեալ ուժերով կարող էին ջարդ ու փշուր անել այն երկաթէ շղթաները, որոնցով կաշկանդուած էին նրանք:

Քաջ իմանալով այս բանը, Սպարտակը զինուորական

խորհրդի հրաւիրեց առաջնորդներին և մանրամասնաբար պատմեց իւր նախագիծը: Վառվառուն և եռանդուն կերպով համոզում էր նրանց ժամանակ չկորցնել և անյապաղ Իտալիայից դուրս գալ:

Մեծ դժուարութեամբ կարողացաւ իւր կողմը գցել լէզիոնների առաջնորդներին և շուտով բոլոր զօրքը առաջ խաղաց գէպի հիւսիս: Ամենից շատ Օքնոմանն էր այս որոշումից դժգոհ: Սակայն, թէև կամքին հակառակ, մեծամասնութեան վճռին հնազանդուեց:

Երբ որ տասն օրից յետոյ գլադիատորները բանակ դրին Վամբրինի մօտ, տեղեկաբերներից իմացան, թէ հիւպատոսներից մէկն ահագին զօրքով առաջն է և կտրել է ճանապարհները. մինչդեռ միւս հիւպատոսը, ոչ պակաս զօրքով, գտնուում է քամակում: Այսպիսով երկու ուժեղ զօրքի արանքն էին ընկել, և Սպարտակը ինչ որ լինէր, նախ քան միանալը, պիտի պատերազմէր անպատճառ:

Ուստի որոշեց առաւօտեան լուսաբացին զօրքով արշաւել մօտակայ Լենտուլ հիւպատոսի դէմ և նրան ջարդելուց յետոյ, ան իջապէս միւսի վրայ ընկնել: Բոլոր կարևոր պատուէրները տալով՝ Սպարտակը գնաց իւր վրանը: Երեկոյեան մօտենալուն պէս ամբողջ բանակը խոր քնի մէջ ընկղմուեց:

Չէր քնած միայն Օքնոմանը:

Թէև նա ղեկավարների ընդհանուր վճռին հնազանդուեց, սակայն և այնպէս համոզուած էր, որ այժմ հասել է Հռոմի վրայ արշաւելու ամենայարմար ժամանակը և մի հարուածով կործանելու հիմն ՚ի վեր:

Անձեռնհաս հասկանալու, թէ ինչպէս խոհեմ և մեծ է Սպարտակի նախագիծը, նա կարծում էր, թէ թրակիացին անուղղելի սխալ է անում, որ զօրքը Հռոմից հեռացնում է:

Փոքր առ փոքր նրա սիրտը չար սատանայ մտաւ, թէ Սպարտակն այս բանն անում է գիտակցաբար, հռոմայեցիներից կաշառուած: Այս կասկածն առաւելապէս զօրացաւ, երբ իմացաւ, որ հիւպատոսների զօրքերով չըջապատուած են ամեն կողմից:

Այն գիշերը, որի մասին խօսում ենք, Օքնոմանն արագ արագ ման էր գալիս վրանում և մտածում, թէ արդեօք ինչպէս կարողանայ Սպարտակի ենթադրեալ դաւաճանութեան առաջն առնել:

— Է՛, ոչ, երգում եմ բոլոր աստուածների անունով, թոթովում էր նա, թոյլ չեմ տալ, որ ինձ մորթելու տանեն քաջ լէզիոններիս հետ: Ո՛չ... հէնց այսօր, այս րոպէիս կըհեռանամ դաւաճանի բանակից:

Շուտով փողերի հնչիւնը զարթեցրեց քնած գլադիատորներին և նրանք շտապով դուրս վազեցին վրաններից ու պատերազմական կարգ կանգնեցին: Սպարտակն առաջինը դուրս թուաւ և հարցրեց, թէ բանն ինչո՞ւմն է:

— Ինչպէս երևում է, հռոմայեցիներ են, պատասխանեց մէկը:

— Ի՞նչպէս: Ո՞րտեղից: Ի՞նչ կերպով, հարցրեց կայծակնահար թրակիացին: Բայց իմանալով, որ պատերազմում ամեն բան կարելի է, սպառազինուեց արագապէս և ուղևորուեց գէպի բանակի դռները:

Այստեղ իմացաւ, որ Օքնոմանը դուրս է հանում իւր լէզիոնները և թէ միւս լէզիոններն էլ պատրաստուում են նրա օրինակին հետևել, կարծելով, թէ առաջ գնալու հրամանը Սպարտակն է տուել:

— Արդեօք ինչ է նշանակում այս բանը, աղաղակեց և իւր բարեկամին մօտեցաւ:

— Օքնոման, ի՞նչ ես անում: Ի՞նչ պատահեց: Ո՛ւր ես գնում, գոռում էր Սպարտակը դեռ հեռուից:

— Հեռանում եմ դաւաճանի բանակից, պատասխանեց գերմանացին հանդարտ ու բարձր ձայնով, և ամեն մէկը, ով որ չէ կամենում, որ թշնամու ձեռքը մատնեն, պիտի փախչի այստեղից և հետո Հռոմի վրայ արշաւի:

— Ի՞նչ դաւաճանութեան մասին ես խօսում, ո՞ւմ ես ակնարկում, հարցրեց Սպարտակը:

— Քո մասին եմ խօսում, քեզ եմ ակնարկում, պատասխանեց Օքնոմանը: — Մենք ապստամբել ենք Հռոմի դէմ և

ես կամենում եմ Հռոմի վրայ գնալ, ու բոլորովին մտադիր չեմ զօրքս արտասահման տանել, որ ճանապարհին թշնամիների ձեռքը մատնես մեզ և մեզ հռոմայեցիները կտոր կտոր անեն:

— Երգւում եմ Իւպիտերի անունով, բացականչեց Սպարտակը զայրոյթից ինքն իրան կորցրած, — եթէ հանաք ես անում, ապա հանաքդ շատ թանկ կընստի քեզ:

— Ես հանաք չեմ անում, երգւում եմ բոլոր աստուածների անունով, այլ ասում եմ այն, ինչ որ մտածում եմ:

— Ուրեմն դու ինձ դաւաճան ես համարում, ասաց Սպարտակը խուլ ձայնով:

— Ոչ միայն համարում, այլ և յայտնում եմ այս բանի մասին բոլոր զօրքի առաջ:

— Սուտ ես խօսում, անարգ հարբեցող, գոռաց Սպարտակը որոտաձայն. սուրը պատեանից դուրս հանեց ու ընկաւ Օքնոմանի վրայ:

Օքնոմանը ձիուն ասպանդակեց և նոյնպէս ընկաւ Սպարտակի վրայ՝ սուրը մերկացրած: Կրիսսոսն իսկոյն բռնեց գերմանացու ձիու սանձից և մի կողմ քաշեց, մինչդեռ միւս շրջապատողներն էլ սուրը խլեցին:

— Օքնոման, եթէ դու իսկապէս խելքդ չես կորցրել, ինչպէս կարելի է եղրակացնել քո խօսքերից՝ ապա դու ինքըդ ես դաւաճան, հռոմայեցիների ոսկիներով կաշառուած, բացականչեց Կրիսսոսը:

— Երգւում եմ երկնքի և դժոխքի բոլոր աստուածների անունով, միայն հռոմայեցիներից կաշառուածը կարող է այնպէս վարուիլ, ինչպէս դու.....

Այդ ըոպէին Սպարտակը Օքնոմանին մօտեցաւ և հանդարտութեամբ սուրը պատեանը դրեց: Մի քանի ըոպէ լուռ նայեց գերմանացու երեսին և վերջապէս ասաց.

— Եթէ մի ուրիշն ասէր այն բանը, ինչ որ դու ասացիր այս ըոպէիս, մեռած կըլինէր վաղուց: Այստեղ ինչոր մի դժոխային նենգութիւն կայ, որ, անկասկած, Հռոմից է բղխում: Կարող ես հեռանալ: Վայր գցիր եղբայրներիդ գործը և քո

դրօշակները: Իսկ ես քո լէգիոններիդ և բոլոր զօրքի դիմաց՝ երգւում եմ հօրս գերեզմանով, մօրս լիշատակով, քրոջս արևով, աշխարհիս երեսի բոլոր սրբութիւններով, որ ոչ միայն մեղաւոր չեմ այն գարշելի բաներում, որ բարդում ես իմ վրայ, այլ մինչև անգամ չեմ իմանում, թէ ինչի մասին ես խօսում: Եթէ ես գոնէ մի թոյլ դիտաւորութեամբ դաւաճանած լինիմ եղբայրներիս սրբազան գործին, ապա թող շանթահար անեն ինձ Իւպիտերի կայծակները, թող անունս անցնի գալոց, հեռաւոր սերնդին դաւաճանութեան խալտառակ կնիքով դրօշմուած. թող նզովուի անունս ցեղից ցեղ, սերնդից սերունդ:

Բարձր և հաստատուն ձայնով արտասանած այս երգումը, որի մէջ հնչւում էր արդարութեան ձայնը, շատ զօրեղ տպաւորութիւն գործեց շրջապատողների վրայ և, թւում էր, մինչև անգամ նախապաշարուած Օքնոմանի վրայ: Բայց այն ըոպէին բանակի միւս ծայրում լսուեց փողերի անսպասելի ձայնը: Բոլորեքեան սարսուռացին:

— Այս ի՞նչ է նշանակում: Օ՛, աստուածներ, այս մեր լէգիոնների նշանն է, աղաղակեց Կրիսսոսը:

— Երկիրք, բացականչեց Սպարտակը մահու չափ գունատուած. — մի՞թէ ուրիշ լէգիոն էլ է հեռանում:

Դռներին մօտ վազելիս, Սպարտակն ու Կրիսսոսը գերմանական հարիւր ձիաւոր տեսան, որոնք շտապում էին իրանց լէգիոնի լեռների հասնել: Հէնց որ տեսան այս երկու առաջնորդներին՝ գոռացին միաձայն.

— Ահա Սպարտակը:

— Ահա դաւաճանը:

— Սպանենք նրան:

Ձեռքերը դէպի աղեղները տարան ու նետերի հեղեղ թափեցին նրանց վրայ: Սպարտակն ու Կրիսսոսը հազիւ կարողացան վահաններով պաշտպանուիլ: Վերջինս առաջ ընկաւ, որ իբրեւ պատուար, խափան լինի նետերի՝ բարեկամին զարկուելուն ու գոչեց.

— Յանուն մեր սրբազան գործի՝ ճարդ տես, փրկիր ան-

ձրդ:

Մի ոստիւնով թուաւ Սպարտակը մօտակայ խրամատից և դաշտի միջով վազեց դէպի բանակը: Կրիստոսը ոչ մի բան չկորցրեց, հետեւեց նրա օրինակին: Գերմանական ձիաւորներն ընկան նրանց վրայ, բայց առաջների խրամատը տեսան, ձիաների գլուխը շուռ տուին ու շարունակեցին նախկին ճանապարհը:

Ամբողջ գիշերը Սպարտակը վրանի մէջ լետ ու առաջ էր գնում, ամենամուսկ մտքերի մէջ ընկղմուած: Հաւասարապէս տանջուած էր, թէ Օքնոմանի անհասկանալի դաւաճանութեան և թէ նրա հետ գնացած տասը հազար գլադիատորների վիճակի մասին մտածելիս:

Հէնց որ ծագեց արշալոյսը, Սպարտակը վեր քաղեց բանակը և հռոմայեցիների զօրքերի դէմ գնաց, որոնց առաջնորդում էր Լենտուլը: Հռոմայեցիները շուտով երեւացին խրամատի յետևում: Պատերազմի ելքի մասին չէր կարելի կասկածել: Համարեա եռապատիկ առաւել զօրքի գլուխ անցած, երեք ժամում Սպարտակը շրջապատեց Լենտուլի լէգիոններին ամեն կողմից, և հռոմայեցիները, չնայած իրանց քաջութեան, ստիպուած էին արագապէս լետ նահանջել:

Նկատելով, որ թշնամիները շարունակեցին, թրակիացին անձամբ գլուխ կանգնեց պահեստի զօրքին և ընկաւ հռոմայեցիների վրայ այնպիսի արագութեամբ, որ նրանց շարքերը քանդուեցին և փախան դէպի իրանց բանակը: Բայց գլադիատորները, որոնք քամակներն ընկած հալածուած էին նրանց՝ գրաւեցին բանակը, սալները, դրօշակները և հիւպատոսի գանձարանը:

Չնայած այն ուրախութեանը, որ պատճառել էր այս նոր յաղթութիւնը, Սպարտակը չէր հեռացնում իրանից գերմանական երկու լէգիոնի վիճակի մասին մտածելը: Նա վախենում էր, մի գուցէ Հելլիոս հիւպատոսն իմանայ գլադիատորների երկու լէգիոնի բաժանուելու մասին և յարմար դէպքից օգուտ քաղելով, թեթև ու իսկական յաղթանակ

վաստակի: Ուստի հէնց հետեւեալ օրը, վաղ առաւօտեան, Սպարտակը զօրքերն առաջ շարժեց Օքնոմանի յետևից:

Բայց մինչև թրակիացին կըշարժուէր լեռնային և քարքարուտ ճանապարհներով, Հելլիոսը 30 հազար զօրքով շրջապատեց Օքնոմանին:

Սարսափելի և արիւնահեղ էր կոտորածը, և երկու ժամի չափ գերմանացիները, իրանց զօրապետի, Օքնոմանի օրինակով ոգևորուած՝ եռապատիկ զօրեղ թշնամու գրոհին դիմադրում էին քաջաբար: Բայց տեսնելով, որ այլ ևս փրկուելիւն չկայ, վճռեցին շատ թանկ ծախել կեանքերը:

Երեք ժամուալ խիստ ու յամառ դիմադրութիւնից լետուի, բոլոր գերմանացիներն ընկան մինչև վերջին զինուորը, բայց և ծանր վնաս հասցրին թշնամիներին: Ամենից վերջն ընկնողներից մէկն էր և Օքնոմանը, որ անձամբ մի զօրավար և բազմաթիւ զինուորներ սպանեց:

Գիակների լեռներով շրջապատուած, նա շարունակում էր քաջաբար կռուել, չնայած բազմաթիւ վերքերին: Վերջապէս մի քանի նիզակներ էլ ցցուեցին մէջքումը. կատաղաբար գոռաց և գետին ընկաւ անշնչացած: Դեռ չէին հաւաքել հռոմայեցիներն իրանց ցրուած զինուորներին, մէկ էլ յանկարծ փողերի ուժեղ ձայնը իմաց արաւ նոր թշնամու գալը: Եկողն Սպարտակն էր:

Որքան գլադիատորներն շտապեցին Օքնոմանին շուտով օգնութեան հասնել, սակայն և այնպէս 10 հազար զինուորից ոչ մի հոգի կենդանի չգտան, և մնում էր միայն վրէժխնդիր լինել իրանց եղբայրների համար: Ոչ մի բան չհազիստ չտալով իւր յոգնած զօրքին, Սպարտակը առաջ խաղաց հռոմայեցիներին յանդիման:

Վայրի գազանների պէս գլադիատորները մոլեգնաբար ընկան թշնամու վրայ, այնպէս որ Հելլիոսի զօրքը շուտով սկսեց փախուստ տալ:

Տասնուչորս հազար հռոմայեցի ընկան պատերազմի դաշտում, իսկ հիւպատոսը վիրաւորուած, ազատուեց ձիու առաջ վազելու շնորհով: Զօրքի չնչին մնացորդները այս ու-

այն կողմը փախան սարսափելի խառնակութեամբ:

Բայց գլադիատորների ցնծութիւնն այս փառաւոր յաղթութեան առիթով պղտորուեց միանգամայն, երբ որ լսեցին գերմանական երկու լէգիոնի կործանումը, և Սպարտակը, փոխանակ տօնախմբութեան՝ բոլոր զօրքի համար հոգեհանգիստ կատարել տուեց:

Յաղթութեան միւս օրը գլադիատորներն սկսեցին թաղման կարգ կատարել սպանուած եղբայրների դիակների վրայ: Ամբողջ դաշտը ծածկուած էր ահագին խարուկներով, որոնց վրայ, այն ժամանակի հռոմայեցիների սովորութեան համեմատ, այրում էին հանգուցեալների դիակները:

Օքնոմանի դիակը առանձին խարուկի վրայ դրին: Սպարտակը մի քանի անգամ համբուրեց իւր սպանուած ընկերին և, արտասուքից խեղդուած ձայնով՝ դամբանական խօսեց, որի մէջ լիշատակեց նրա անսահման քաջութիւնը, ազնուութիւնը և ճշմարտութիւնը: Ապա ջահը ձեռքն առաւ ու անձամբ այրեց խարուկը:

XIV.

Մի քանի շաբաթ հանգիստ առաւ այստեղ Սպարտակը և ստրուկների երեք նոր լէգիոն կազմելով, առաջ խաղաց դէպի հիւսիս, որպէսզի, այսպիսով, ի կատար ածի իւր նախագիծը—Իտալիայից դուրս հանել զօրքերը: Բայց վերջին փառաւոր յաղթութիւնները, որ տարան գլադիատորները ըսպարտակի պատերազմական ճարտարութեան շնորհիւ, նրանց ամբարտաւան և ինքնավստահ էին դարձրել: Առաջուանից աւելի այրում էին Հռոմ արշաւելու տենչանքով: Բացի սրանից, զօրավարներից շատերը, որոնք ընդունակ էին միայն իբրեւ լաւ հրամանատարներ, ի ներքուստ իրանց համարում էին նոյն իսկ Սպարտակից բարձր և նախանձում էին նրա փառքին: Շատերին կատաղեցնում էր ամենախիստ զինուորական դիսցիպլինան—կարգապահութիւնը, որ տիրապետում էր զօրքի մէջ և նրանք կամենում էին ասպատա-

կութիւններ ու յափշտակութիւններ անել: Մի խօսքով, խռովութիւններ ու աղմուկներ սկսուեցին:

Այս էր պատճառն ահա, որ երբ Սպարտակը հռոմայեցիների զօրքի մօտենալու մասին լուր առաւ ու պատերազմի նախագծի համար խորհրդակցելու ժողովի հրաւիրեց զօրավարներին, նրանցից մէկը, գլուխը կռացրած, խօսեց անվրճական ձայնով.

—Պատերազմելը՝ ուրախ ենք պատերազմելու, բայց Իտալիայից, ինչպէս կամենում ես, չենք հեռանալ:

—Ի՞նչ, աղաղակեց կայծակնահար Սպարտակը.— Բ՛նչ ասիր:

—Նա ասաց, թէ 7 լէգիոն կամենում են Հռոմի վրայ արշաւել:

—Ա՛հ, գոչեց Սպարտակը կատաղութեամբ, խորին տխրութիւնը հագիւ թագցրած.— դարձեալ խառնակութիւն: Մի-թէ հերիք չէր ձեզ համար, անմիտներ, դժբախտ Օքնոմանի զարհուրելի օրինակը: Երգւում եմ աստուածների անունով, դուք կամ խելագար էք, կամ դաւաճան:

Գլադիատորները, դէմքերը խոժոռած, ձայն չհանեցին:

—Դէհ, լաւ,—ասաց թրակիացին,—այժմ մենք թշնամուն դէմ յանդիման ենք, և մինչև նա ջարդուած չէ, դուք պիտի անպայման ինձ հնազանդուիք: Յետոյ թող բոլոր զօրքը վրճուի այդ: Իսկ այժմ գնացէք:

Եւ ապա յարեց հրամայական եղանակով.

—Եւ զգո՛յշ կացէք ամենափոքր անհնազանդութիւնից պատերազմի կամ արշաւանքի միջոցին, որովհետեւ առաջինը, ով որ ըմբոստութեան նշույլ անգամ ցոյց կըտայ, գետին կը տապալուի ահաւասիկ այս սրից, որ երբէք չէ վրիպում նրա պատակից:

Զօրավարներն առանց ձայնի գնացին տեղերը:

Վերոյիշեալ խօսակցութեան երրորդ օրը Սպարտակը նոր յաղթանակ տարաւ հռոմայեցիների վրայ:

Շուտով ապա գլադիատորների զօրքը դասաւորուեց ըն-

դարձակ հարթութեան վրայ, որ վճռեն, թէ արդեօք հարկաւոր է շարունակել ճանապարհը դէպի առաջ, թէ յետ դառնալ և արշաւանք գործել Հռոմի վրայ:

Կարճ և զգացուած ճառով բացատրեց Սպարտակն իւր նախագծի բոլոր առաւելութիւնները:

— Եթէ ես խորհուրդ եմ տալիս թողնել Իտալիան, ասաց վերջումն Սպարտակը, — այդ միայն այն պատճառով է, որ կատարելապէս համոզուած եմ, թէ այս երկիրը գլադիատորների գերեզմանը կըլինի, ինչպէս գերեզման է եղել բոլոր այն օտարերկրացիների համար, որոնք երբ և իցէ պատերազմել են նրա հողում: — Նա աւարտեց ճառը հանգիստաւոր երդումով, որ ուրիշ ոչ մի բանով չէ ղեկավարուում, բացի գլադիատորների բարիքից: Թող զօրքը վճռի: Իսկ ինքը, թէ իբրև զինուոր և թէ սպարապետ, միշտ նրանց հետ կըմնայ և պատրաստ է ուրախութեամբ մեռնել եղբայրների հետ, եթէ աստուածները կըկամենան այդ բանը:

Դեռ չէր աւարտել թրակիացին իւր ճառը, որ նրան նախանձողներից մէկն սկսեց համոզել գլադիատորներին, թէ այժմ ամենայարմար վայրկեանն է՝ Հռոմի վրայ արշաւել, քարուքանդ անել վերջնականապէս և միանգամից ազատուել անտանելի լծից:

— Հռոմի վրայ: Հռոմի վրայ, — հնչուեցին ձայներն ամեն կողմից:

Երբ որ ձայներն սկսեցին համարել, երևաց, որ Սպարտակի առաջարկութեան կողմը միայն 20 հազար հոգի են, այն ինչ 50 ազար հոգի կամենում են Հռոմի վրայ գնալ:

Հեշտ է երևակայել, թէ ի՞նչ աստիճան վշտացաւ ըՍպարտակն այս անսպասելի որոշումից, քանի որ պարզապէս տեսնում էր, թէ Հռոմի վրայ արշաւելով՝ վերջնականապէս խորտակուում են իւր բոլոր ըզձերն ու յոյսերը:

Երկար ժամանակ կանգնեց նա գլուխը կրճքի վրայ խոնարհած, առանց մի խօսք ասելու: Վերջապէս գունատ դէմքը շուռ տուեց դէպի Կրիստոսը, որն իրանից պակաս չէր տխրել, և աղաղակեց դառնութեամբ.

— Ի՞նչ ասել կուզի, մեծ հաւատարմութեան արժանացայ սեպհական զօրքի մէջ այսքան տանջանքներից, աշխատանքներից և վտանգներից յետոյ:

Ելի մի քանի րոպէ լուռ կանգնեց, ապա դարձաւ լէզի-ոններին, որոնք սպասում էին նրա պատասխանին, և ասաց բարձրաձայն.

— Լաւ, ես հնազանդուում եմ ձեր կամքին ու Հռոմ գընում, բայց ոչ իբրև սպարապետ, այլ իբրև հասարակ զինուոր: Ուրիշ սպարապետ ընտրեցէք իմ տեղը:

— Ո՛չ, ո՛չ, երգուում եմ աստուածների անունով, դո՛ւ պիտի մեր սպարապետը մնաս, որովհետև մեր մէջ չկայ մի ուրիշը քեզ հաւասար, աղաղակեց մէկը:

— Նորից ընտրենք Սպարտակին մեզ սպարապետ, գոռաց երկրորդը:

— Սպարտակին ենք սպարապետ կամենում, Սպարտակին, բացականչեցին բոլոր 70 հազար գլադիատորներն իբրև մի հոգի:

— Ո՛չ: Ո՛չ մի բանով: Ես հակառակ եմ Հռոմի վրայ արշաւելուն և չեմ հաւատում նրա յաջողութեան: Ընտրեցէք նրանցից մէկին, որոնք ձեզ յաղթութիւն են խոստանում:

— Քեզ ենք կամենում սպարապետ: Քեզ ենք կամենում, գոռում էին լէզիոնները: Սակայն Սպարտակը լսել անգամ չէր կամենում ու հեռացաւ իւր վրանը:

Այն ժամանակ լէզիոնների բոլոր առաջնորդները գնացին խնդրելու, որ յանձն առնի ընդհանուր հրամանատարութիւնը, հաստատ խօսք տալով, որ ամեն բանում կըլսեն նրան, միայն թէ համաձայնէր Հռոմի վրայ տանելու:

Այս տեսակ միահամուռ սիրուց և անձնանուիրութիւնից յուզուած՝ վերջապէս Սպարտակը զիջաւ, դարձաւ շրջապատողներին և ասաց.

— Դուք այդ էք կամենում: Թող ձեզ ասածը լինի: Ես էլի առաջնորդ կըմնամ: Չեմ խոստանում յաղթութեան տանել, որովհետև չեմ հաւատում այդ բանին: Բայց ամեն հընար գործ կըգնեմ, որ պարտութիւնը հեռացնեմ:

XV

Գլադիատորների Հռոմ արշաւելու լուրը սարսափելի խռովութիւն յարուցեց Իտալիայի մայրաքաղաքում:

Ծերակոյտն արտակարգ ժողով նշանակեց, ուր վճռեցին յետ կանչել ամենալաւ զօրավարներին, որոնք այդ միջոցին հարեան ցեղերի հետ պատերազմով էին զբաղուած: Բայց ՚ի դէպ, երեւան եկաւ այդտեղ Մարկոս Կրասսոսը, Հռոմի ամենալաւանի զօրավարներից մէկը, որպէսզի հարիւր հազար զօրք հաւաքի հարեանների հետ պատերազմը շարունակելու համար: Ծերակոյտն ուրախութեամբ յանձնեց նրան, որ, վերջապէս, դադարեցնի այս, իրանց ազգային հպարտութեան համար ամօթալի, պատերազմը ստրուկների հետ:

Հարկաւոր զօրքը ժողովեց Մ. Կրասսոսը, շուտով սկսեց իւր արշաւանքն ու բանակ դրեց գլադիատորներից ոչ հեռու: Որովհետեւ երկու կողմերի ուժերը համարեալ թէ հաւասար էին, ուստի երկու զօրավարն էլ երկար ժամանակ խուսափում էին վճռական ճակատամարտից. միայն երբեմնակի կատարուում էին առանձին փոքրիկ ընդհարումներ: Ի միջի այլոց, Սպարտակին յաջողուեց ջարդել բաւական խոշոր մի հռոմէական գունդ, որ բաժանուել էր գլխաւոր զօրքից:

Վերջապէս թրակիացին մտածեց մի շատ համարձակ նախագիծ, որ, անկասկած, յաղթանակ պիտի չնորհէր նրան թշնամիների վրայ: Նա որոշեց Կրասսոսին 30,000 զօրքով դուրս ուղարկել, լուր տարածելով, թէ երկուսն իրար հետ կռուել են: Եւ ապա, երբ Մարկոս Կրասսոսը կ'իմանար ու կըյարձակուէր Սպարտակի վրայ, Կրիսսոսը յետ կըդառնար ու թշնամուն կըհարուած էր քամակից:

Սպարտակի խորամանկութիւնն անկասկած կըյաջողուէր, եթէ հէնց այդ միջոցին ամենագարշելի դաւաճանութիւն չըպատահէր գլադիատորների բանակում:

Կէս գիշերին, երբ քնած էին բոլոր հռոմայեցիները, Մարկոս Կրասսոսի մերձաւորներից մէկը զարթեցրեց նրան

ու յայտնեց, թէ գլադիատորների կողմից մի զեսպան ցանկանում է անյապաղ խօսակցել նրա հետ առանձնակի՝ մի շատ կարեւոր բանի մասին: Այս զեսպանն ստրուկ էր, որ Սպարտակի դէմ անձնական ոխ ունենալով՝ վճռել էր իւր եղբայրներին թշնամու ձեռքը մատնել: Դաւաճանը պատմեց հռոմայեցիների զօրավարին թրակիացու նախագիծը և հաղորդեց այն տեղը, ուր բանակ պիտի դնէր Կրիսսոսը:

Մարկոս Կրասսոսն օգուտ քաղեց այս կարեւոր լրից և հէնց նոյն գիշերը զօրքերն առաջ շարժեց այն կողմը, ուր պիտի Կրիսսոսը գար միւս առաւօտ:

Երբ 30,000 հոգուց բաղկացած գլադիատորների զօրքը առաջուց որոշած տեղը հասաւ, յանկարծ տեսաւ, որ ամեն կողմից շրջապատուած է թշնամիներով: Ահռելի պատերազմ բորբոքուեց:

Կռուողների վայրենի աղաղակները, գէնքերի շառաչիւնը, մեռնողների հառաչանքներն ու ողբ և կոծը վրդովում էին այս անսպասի դարեւոր խաղաղութիւնը:

Կրիսսոսը պտտում էր զօրքը և խրախուսում: Երկու կողմից էլ կռուում էին միատեսակ կատաղութեամբ: Հակառակորդները կոտորում էին իրար, գետին ընկնում, բայց մի քալ յետ չէին նահանջում: Մի քանի ժամ տևեց կոտորածը: Եռապատիկ ուժեղ զօրքով ամեն կողմից ըրջափակուած՝ գլադիատորները յաղթութեան յոյս չունէին, բայց ցանկանում էին, որքան կարելի է, թանկ ծախել կեանքերը: Միակ թույլ յոյսն այն էր, թէ Սպարտակն իւր զօրքով օգնութեան կըհասնի: Բայց տեսնելով զօրքի կործանումը, Կրիսսոսը յառեց հայեացքը դէպի այն կողմը, որտեղից պիտի երևար Սպարտակն, ու աղաղակեց դողդոջուն ձայնով.

— Սպարտակ, դու չես հասնիլ ո՛չ մեզ փրկելու, ո՛չ վրէժխնդիր լինելու մեր կործանման համար: Խեղճ բարեկամ, բնջ կը լինի արդեօք վիճակդ, երբ կըտեսնես քո երեսուն հազար ամենաքաջ ընկերների այսպիսի խղճալի կոտորածը: Յետոյ դարձաւ հետը կատաղաբար կռուող մի քանի կտրիճ-

ների և ասաց:

— Եղբայրներ, մեռնելու ժամանակն եկաւ:— Սրերը ձեռքերում ամուր սեղմած, առաջ ընկան գոչելով:

— Է՛յ, հռոմայեցիներ, քաջ էք, երբոր երեքդ մէկի դէմ էք: Դուրս եկէք, մի վախենաք՝ այժմ հինգդ մէկի դէմ էք:

Յուսահատական կատաղութեամբ էին կռուում այս մի բոլոր քաջերը. բայց տասնեակ հարուած ստացան առաջից, յետեից, կողքից և շուտով բոլորն էլ կոտորուեցին: Ընկաւ նաև Կրիստոսը, որի մարմնի վրայ սաղ տեղ չէր մնացել:

— Թող.... յաղթութիւնը..... անբաժան լինի քո դրօշակներից առաջուայ պէս.... Օ՛, Սպարտակ, շշնջաց նա և հոգին փչեց:

Այսպէս վերջացաւ այն զարհուրելի ճակատամարտը, որի մէջ ընկան երեսուն հազար գլադիատոր և տասը հազար հռոմայեցի: Միայն մօտ ութ հարիւր ստրուկ, գլխաւորապէս ծանր կերպով վիրաւորուած, գերի ընկան, որոնց Մարկոս Կրաստոսը հրամայեց բոլորին էլ խաչել մեծ ճանապարհի երկայնութեամբ:

Այն ինչ Սպարտակը, դաւաճանութեան մասին անգիտակ, ամբողջ օրը լուրի էր սպասում Կրիստոսից: Ո՛րքան եղաւ նրա զարհուրանքը, երբ երեկոյեան սուրհանգակ եկաւ մօտը և յայտնեց, թէ հռոմայեցիները յանկարծակի յարձակուել են Կրիստոսի գօրախմբի վրայ:

— Դժոխքի աստուածներ, բացականչեց Սպարտակը, մեռելի պէս զեղնելով:

— Հեծէք ձիաներդ, հեծէք... ձանապարհ, Կրիստոսը մեռնում է: Մեր երեսուն հազար եղբայրներն ընկնում են թշնամիների հարուածների տակ: Ես առաջուց վազ կըտամ հեծելագործով: Շտապեցէք, դէհ, վազեցէք:

Բայց երբ հեծելագործով ճակատամարտի տեղը հասաւ, միմիայն զիակների կոյտեր գտաւ այնտեղ:

— Օ՛, իմ թշուառ եղբայրներ: Օ՛, իմ սիրելի Կրիստոս, աղա-

ղակեց Սպարտակը, երեսը ծածկեց ձեռքերով և հեկեկաց բարձրաձայն:

Գլուխները կրծքի վրայ խոնարհած, տխուր և տրտում կանգնած էին գլադիատորներն իրանց պետի չորս կողմը, և երկար ժամանակ ոչ ոք չէր համարձակուում այս հզօր մարդի հեկեկանքներն ընդհատել: Վերջապէս նրանցից մէկը մօտեցաւ և ասաց ցածրաձայն.

— Սիրտդ ամուր պահիր այս մեծ դժբախտութեան մէջ, մեր ազնիւ սպարապետ:

— Օ՛, Կրիստոս: Օ՛, սիրելի եղբայր իմ, հառաչում էր ըՍպարտակը, խեղդող արտասուքներն աչքերին:

Երկար թափառելին գլադիատորները մահի այս հովտի մէջ, մինչև, վերջապէս, գտան Կրիստոսի արիւնաթաթախ դիակը: Միայն երեսն էր մնացել անձեռնմխելի և պահել էր, մինչև անգամ մահից յետոյ, արիւթեան կնիքը:

Մեռած ընկերի կրծքին ընկած՝ Սպարտակը հառաչում էր արտասուախառն ու կրկնում.

— Օ՛, իմ թանկագին բարեկամ: Ինձանից հեռու, անարգ դաւաճանութեան զոհ եղար, և ինձ չչաջողուեց ոչ օգնութեան հասնել քեզ, ոչ վրէժխնդիր լինել քո համար:

Նա ուսին զրեց գլադիատորի արիւնաշաղախ մարմինն ու գետափ տանելով, վերքերը լուաց, փաթաթեց վերարկուի մէջ և ամուր կապեց իւր ձիու վրայ:

Դեռ մի քանի սաժէն չանցկացած, նրանց աչքերի առաջ բացուեց մի զարհուրելի տեսարան. ամեն մի ծառի վրայ, որոնք փռուած էին, ժապաւենի պէս, ճանապարհի չորս կողմը, մի մի դիակ էր կախած: Այս այն ստրուկներն էին, որոնց գերել էին հռոմայեցիները վերջին ճակատամարտի ժամանակ: Կախածների թւում Սպարտակը ճանաչեց մի զօրավարի, որ գլադիատորների ղեկավարներից ամենանշանաւորներից մէկն էր, քսան հատ վերք ստացած, և շատ ուրիշ իւր գործակիցների:

Այս սարսափելի տեսարանին ականատես, թրակիացին աչքերը ծածկեց ձեռքերով, ատամները կրճտացրեց և դո-

ռաց ցաւից ու կատաղութիւնից, ինչպէս վիրաւոր առիւծ.

—Ա՛, դուք կախում էք գերիներին: Լա՛ւ: Արեան փոխարէն արիւն, մահուան փոխարէն մահ և տանջանքի փոխարէն տանջանք: Երգւում եմ, սրանից յետոյ կախ պիտի տամ հռոմայեցիների բոլոր գերիներին, քոսոտ շների պէս:

Պատերազմի դաշտից վերադառնալուն պէս, Սպարտակն իւր բանակը փոխադրեց լեռնային կիրճերը, որտեղ հռոմայեցիները չէին կարող օգտուել իրանց բազմութեամբ:

Այստեղ Սպարտակը դուրս հանեց զօրքը մի ընդարձակ դաշտ, կանգնեցրեց լայն խարուկի չորս կողմը, որի վրայ էր դրած Կրիսոստի մարմինը, և հրամայեց հրապարակ բերել հռոմայեցիների ամենաբարձրաստիճան գերիներին:

Նրանց մի մասին հագցրին սամնիտների, իսկ միւս մասին թրակիացիների հագուստներ: Երբ որ շարուեցին իրար դէմ, Սպարտակը դարձաւ և ասաց բարձրաձայն, 'ի լուր բոլոր զօրքի:

—Ազնիւ երիտասարդներ: Դուք պատկանում էք այն աւանաւոր տոհմին, որ ամբողջ աշխարհում փառաւորուած է յափրշտակութեամբ, դաւաճանութեամբ և ճնշումներով: Դուք վճռել էք սուր վերցնել, որ ուժերդ փորձէք ստոր և անարգ ստրուկների հետ: Բայց անարգ ստրուկները ձեզանից աւելի ուժեղ և քաջ հանդիսացան: Դուք պատերազմի համար պետքական չէք. դէհ, գոնէ զուարճացրէք մեզ գլադիատորների կռուով: Դուք շատ էք ուրախացել Հռոմի ցերկերում, երբ որ այս թշուառ կենդանիները, մարդու կերպ առած, մորթում էին իրար. ամբողջ էութեամբ շատ էք հայեացքներդ մեխել դէպի ցերկի հրապարակը, մատներդ ցած իջեցրել¹⁾, որ տեսնէք, թէ ինչպէս պիտի մեռնեն թշուառ գլադիատորին: Դէհ, գոնէ միանգամ զուարճացրէք այն մարդոց, որոնք ամբողջ կեանքի ընթացքում զուարճացրել են ձեզ:

Բերկրութեան մոլեգին, որոտաձայն աղաղակ դուրս թռուաւ բոլոր լիսուն հագար գլադիատորների կրծքերից, երբ

Սպարտակն աւարտեց իւր ճառը: Նրանց աչքերը վառուեցին կատաղի և անսահման ուրախութեամբ: Այս օրը, երևելի հռոմայեցիների այս գլադիատորական կռիւը, որն էր առնում այն ստորացման համար, որին ենթարկուած էին. այն խայտառակութեան, ամենօրեայ եղբայրասպան տմարդութեան համար, որին դատապարտուած էին գլադիատորները:

Նրանք կեանքի մէջ գոնէ մի անգամ կարողէին զուարճանալ այս մարդոց փոխադարձ մորթելովը, կործանմամբ, որոնք մինչև այժմ շարունակ զուարճանում էին ուրիշների կոտորածով: Նրանք մի անգամ կարող էին գէթ ամբարտաւան հռոմայեցիներին գլադիատոր դարձնել, իսկ իրանք կը զուարճանային նրանց իրար մորթելովը, կ'արբենային նրանց խայտառակ մահով: Օ՛, այս բոլորը, խեղճ, կեղեքուած գլադիատորների համար մի տեսակ վսեմ և անըմբռնելի բան էր:

Մարդոց այս տմարդօրէն մարդ որսալը, որ ստորացնում էր մարդկալին արժանաւորութիւնը՝ կատարելապէս հասկանալի և բացատրելի էր գլադիատորների համար: Թէ իրանց սարսափելի վիճակով, տանջանքներով, թէ հայրենիքի, ընտանիքների ու ընկերների չարչարանքով ճնշուած, հարըստահարուած գլադիատորների համար բարձրաստիճան հռոմայեցիները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ երգուեալ թշնամիներ, որոնց որքան շատ ոչնչացնես, այնքան լաւ կըլինի ստրուկների համար: Գլադիատորները չէին հասկանում, և չէին կարող հասկանալ, որ հռոմայեցիներն էլ այն տեսակ մարդիկ են, ինչպէս և իրանք: Նրանց համար հռոմայեցին—ատելի թշնամի էր, ճնշող, յաւիտենական նահատակող, որին, 'ի սէր ընդհանուր ազատութեան, 'ի սէր սեպհական կեանքի, անհրաժեշտ է ոչնչացնել:

Երկար ընդդիմանում էին չարաբախտ հռոմայեցիները, բայց նրանց ստիպեցին իրար վրայ ընկնել և սկսել մոլեգին ու մահացու կռիւը:

Կէս ժամից յետոյ երեք հարիւր ազնուական երիտասարդ ընկած էին գետնի վրայ, արեան ծովում թաթախուած:

—Օ՛, որքան քաղցր և արդար է վրէժը, աղաղակեց ըն-

¹⁾ Մատներն իջեցնել—նշան էր, որ յաղթուած գլադիատորի կեանքը չպիտի շնորհուի:

պարտակը բաւականութեամբ, որ ոչ մի շարժում բաց չէր թողել այս արիւնահեղ ընդհարման մէջ:

XVI.

Մէկ ամիս չէր անցել Կրիստոսի մահից, երբ գլադիատորները բանակում դարձեալ սկսեցին խառնակութիւններ, որոնց վերջն այն եղաւ, որ մի քանի լէգիոն էլ բաժանուեցին Սպարտակից:

Նրա ուժերը թուլանում էին, այն ինչ Մարկոս Կրաստոսին օգնութեան հասան բոլոր զօրքերը և ամենալաւ հըռոմէական զօրավարները:

Թրակիացին կատարելապէս հասկացաւ իր սարսափելի դրութիւնը, բայց որոշեց մի անգամ էլ բախտը փորձել, նախ քան նոր զօրքերի Կրաստոսին օգնութեան հասնելը:

Զօրքերի ժողովուելու փողերը հնչեցնել տալով՝ դաշտ շարժեց նրանց Սպարտակը:

Նոյնն արաւ և հռոմէական զօրավարը: Հակառակորդները դասաւորուեցին իրար դէմ:

Լէգիոնների առաջից անցնելով, Սպարտակն ասաց.

— Եղբայրներ: Այսօրուայ պատերազմից է կախուած մեր բախտը: Յետեւի կողմից մօտենում է Լուկուլլոս զօրավարը: Կողքներիցս Պոմպէոսն է սպառնում, առաջներին կանգնած է Կրաստոսը: Անհրաժեշտ է ջախջախել Կրաստոսին, որ ապա, Պոմպէոսի վրայ ընկնենք կամ մեռնենք բոլորս տեղն ու տեղը, ինչպէս վայել է քաջարի զինուորներին: Եղբայրներ, ոչ մի քայլ չեմ չնահանջենք: Մահ կամ յաղթանակ:

Այսպէս խօսեց Սպարտակը: Այն միջոցին բերին նրա հրաշալի գեղեցկութեամբ ձին, որ մի տարուց աւելի ծառայել էր նրան: Գեղեցիկ կենդանուն տեսնելով՝ սուրը հանեց պատեանից, խրեց իւր սիրելիի կուրծքը և աղաղակեց ի լուր ամենեցուն.

— Այսօր ինձ ձի չէ հարկաւոր. եթէ յաղթող կը հանդիսանամ, կ'ընտրեմ թշնամու ձիաներից մէկը, իսկ յաղթուած

ժամանակս՝ ձիու կարիք չեմ գգալ, ոչ այսօր, ոչ վաղը և ոչ երբ և է:

Գլադիատորները հասկացան նրա խօսքերի օրհասական նշանակութիւնը և պահանջեցին՝ անմիջապէս գրոհ տալ հռոմայեցիներին:

Սպարտակի նշանի համեմատ՝ փողերը հնչեցրին, բոլորի սիրտը թրթռաց:

Գլադիատորները մոլեգնաբար յարձակուեցին հռոմայեցիների վրայ..... Պատերազմը զարհուրելի էր և տեւեց ամբողջ օրը: Երեկոյեան դէմ հռոմայեցիները ամեն կողմից շրջապատեցին եռապատիկ թույլ թշնամուն, և, այսպիսով, գլադիատորները փրկութեան ամենայն յոյս կորցրին: Այս բոլորից սկսած, ոչ թէ յաղթութեան իղձը, այլ վրէժխնդրութեան ծարաւն էր ոգևորում գլադիատորներին:

Այլ ու ձախ թեւերը, եռապատիկ և քառապատիկ հռոմայեցիների ուժերից ճնշուած, չափազանց լետ մնացին: Միայն կենդրոնը, որտեղ կռուում էր Սպարտակը, դեռ դիմադրում էր թշնամուն.

Երեկոն վրայ հասաւ, իսկ պատերազմը դեռ շարունակուում էր, բայց արդէն կենդրոնանում էր մի քանի կէտերում, ուր կատաղաբար կռուում էին մի բուռը քաջեր:

Բոլոր այս ժամանակ Սպարտակը ոչ միայն լետ չէր նահանջում, այլ հազար գլադիատորով շրջապատուած՝ սեպի նման ցցուեց հռոմէական շարքերում:

Գիշերուայ խաւարն իջաւ ճակատամարտի դաշտի վրայ, բայց հռոմայեցիները, որոնք վերջնական յաղթութիւն չէին տարել, շարունակ կռուում էին ու կռուում:

Լուսինը ծագեց ու լուսազարդեց իւր գունատ ճառագայթներով արիւնահեղ կոտորածի այս զարհուրելի պատկերը:

Երեսուն հազարից աւելի գլադիատոր ընկան ահագին դաշտում՝ տանուութ հազար հռոմայեցիների հետ մէջ ընդ մէջ: Ճակատամարտը վերջացած էր:

Տասնուվեց հազար գլադիատոր ցրիւ ցրիւ խմբերով ու

առանց որ և է կարգապահութեան փախան հարեան անտառներն ու սարերը:

Միայն մի տեղ շարունակ շառաչում էին սրերը և հրնչում կռուողների վայրենի գոռում-գոչիւնը:

Մի քանի հարիւր հոգի Սպարտակի շուրջը խռնուած, պաշտպանում էին յամառութեամբ, որին, ինչպէս նկատուում էր, ոչ մի բան չէր կարող յաղթահարել:

Լուսինը բարձրացաւ հորիզոնի վրայ: Պատերազմը մօտ էր վախճանին: Սպարտակի վերջին երկու ընկերներն էլ ընկան:

Չորս կողմից թշնամիներով պատած, ամբողջովին վերքերի մէջ, Սպարտակը գեռ ևս պաշտպանում էր դիակների լեռներում: Կայծակի նման փայլում էր նրա սոսկալի սուրը և իրար յետեւից գետին էին տապալում, ովքեր յանգչում էին վրան յարձակուել դէմ առ դէմ: Վերջապէս հինգ քայլի հեռաւորութիւնից արձակուած տէգը ծանրապէս վիրաւորեց նրա ձախ ոտը: Նա վայր ընկաւ ծնկների վրայ, թինկը տըռուեց դիակներին, վահանով առաջը կտրեց և շարունակեց պաշտպանուիլ: Եօթ կամ ութ տէգերով վիրաւորուած՝ որոնք միաժամանակ արձակուած էին զանազան կողմերից, մէջքի վրայ ընկաւ ու մեռաւ:

Հռոմայեցիներն՝ ապուշ կտրած, երկար ժամանակ կանգնել էին զարմացմամբ, տեսնելով, թէ սրալիսի տղամարդութեամբ կռուեց պատերազմի սկզբից մինչև վերջը:

Այսպէս կնքեց իւր օրերը այս արտասովոր մարդը: Պատերազմական մեծ ձիրք, լայն միտք, անսահման քաջութիւն միացած էին նրա մէջ հազուագիւտ համեստութեան և անշահասիրութեան հետ, որոնք հռչակեցին նրան ոչ միայն իբրև առաջին զօրավարը, այլ և ամենալաւ մարդն իւր ժամանակի:

Երկու ժամից յետոյ հռոմայեցիներն իրանց բանակը գնացին: ձակատամարտի դաշտի չարագուշակ խաղաղութիւնը

խանգարուում էր միայն վիրաւորուածների հառաչանքներով, որոնք մեռնում էին դիակների կոյտերի տակ:

Մէկ զինուոր ահա թափառում է հովտի միջով, հաղիւ հազ կարողանալով շարժուել բազմաթիւ դիակների արանքում: Սակայն և այնպէս, թէպէտ կամաց, այս մարդը մօտենում է այն կէտին, ուր կռիւն աւելի էր երկարել: Այստեղ կանգ է առնում, և գետին կռացած՝ զննում է իրար յետեւից սպանուածների մարմինները, մինչև, վերջապէս, գտաւ Սպարտակի դիակը:

Այն ժամանակ, ծնկների վրայ խոնարհած, բարձրացրեց նրա շիկահեր գլուխը և երկար ու երկար՝ աչքերը չէր հեռացնում նրանից:

Լուսնի շողն ընկաւ սպանուածի գեղեցիկ երեսին: Զինուորը կռացաւ դէպի դիակը և դառնապէս լաց եղաւ:

Այս մարդը Միրցան էր: Դեռ երէկուանից, Սպարտակը քաջ իմանալով, որ այն օրն օրհասական վերջին օրն է, քրոջը հրամայեց պատերազմի վայրից հեռանալ: Նա չէր կամենում, որ քոյրն ականատես լինի իւր մահին:

Թէև աղի արցունքն աչքերին, սակայն Միրցան հնազանդուեց եղբօր կամքին, բայց հիմա, երբ ամեն բան վերջացած էր, զինուորի շորեր հագած, եկաւ վերջին անգամ նաեւ իւր թանկագին, հրաշալի դէմքի գծազրութիւնը:

— Սպարտակ, եղբայր իմ սիրեցեալ, արտասուքն աչքերին կրկնում էր անգաղար և համբուրներով երեսը ծածկում: — Այդ թնչ են արել քեզ: Որքան վէրքեր, օ, աստուածներ: Որքան արիւն:

— Ել ոչ մի անգամ չեմ տեսնիլ քո բարի աչքերը, սիրելի, թանկագին եղբայր իմ: Ել երբէք չեմ լսիլ քո անուշ ձայնը: Օ՛, Սպարտակ, գնաս բարեան, գնաս բարեան յաւիտեան:

Այս խօսքի վրայ՝ հանեց Սպարտակի սուրը պատեանից և հաստատուն ձեռքով իւր սիրտը խրեց՝ առանց մի հառաչք արձակելու: Արիւնն աղբիւրի պէս դուրս բղխեց: Իսկ նա գրկեց իւր սիրեցեալ եղբօրն ու շշնջաց:

— Կամենուժ եմ քեզ բախտակից լինել, օ, սիրելի, կաթոգին եղբայր իմ.....

Հետզհետէ սկսեց գիտակցութիւնը կորցնել. հարուածը մահառիթ էր: Աւելի պինդ գրկեց Սպարտակին, շրթունքները կպցրեց նրա շրթունքներին և յաւիտեան սառաւ, երկարատեւ, վերջին համբույրը բերանում:

XVII.

Վերագրեալ ճակատամարտից տասն ու հինգ օր անց՝ գլադիատորների պատերազմը վերջացաւ: Մի քանի հազար հոգի ընդհանուր կորստից ազատուեցին և առանց պարագլխի, առանց փոխադարձ ներքին կապի ցրուեցին լեռները: Սակայն սրանց էլ համարեա՞ բոլորին խողխողեցին Կրասնոսի և Պոմպէսի գումարտակները, որոնք զործողութեան տեղը հասան: Միայն վեց հազար հոգու ողջ ողջ բռնեցին ու կախեցին Կապուալից մինչև Հռոմ տանող ճանապարհի վրայ:

Վ. Ե. Բ. Զ.

7/11-1922



